

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՄՊՈՐՏՈՒՄ.

ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

SCIENCE IN SPORT.

MODERN ISSUES

Նվիրվում է ՀՖԿՄՊԻ 80-ամյակին

Dedicated to the 80th anniversary of ASIPCS

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՄՊՈՐՏՈՒՄ

2025 N3 (16)

2025 N3 (16)

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 2025 №3 (16)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ARMENIAN STATE INSTITUTE OF PHYSICAL CULTURE
AND SPORT**

**ГОСУДАРСТВЕННЫЙ ИНСТИТУТ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ
И СПОРТА АРМЕНИИ**



ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ
Գիտամեթոդական պարբերական

SCIENCE IN SPORT: MODERN ISSUES
Scientific and methodical journal

НАУКА В СПОРТЕ: СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ
Научно-методический журнал

№ 3 (16)

ԵՐԵՎԱՆ

YEREVAN - 2025

ЕРЕВАН

**ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ
Գրախոսվող գիտամեթոդական պարբերական**

Երաշխավորված է տպագրության Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի սպորտի պետական ինստիտուտի Գիտական խորհրդի որոշմամբ

Պարբերականն ընդգրկված է ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գիտական հրատարակությունների ցանկում:

Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ: Գիտամեթոդական պարբերական: Եր.: Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, 2025, N° 3 (16), 330 էջ:

Պարբերականում ընդգրկված են Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի, հանրապետության և այլ երկրների բուհերի դասախոսների, աշխատակիցների գիտահետազոտական ու մեթոդական աշխատանքները: Տեսական և փորձարարական ուսումնասիրությունները նվիրված են ինչպես ֆիզիկական կուլտուրայի, սպորտի, ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի, ադապտիվ սպորտի բազմաբնույթ հիմնախնդիրներին, այնպես էլ հարակից ոլորտներին: Պարբերականի հոդվածները նախատեսված են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի մասնագետների, մասնագիտական ուսումնական հաստատությունների դասախոսների, երիտասարդ գիտնականների համար:

Պարբերականի հիմնադիր՝ «Հայասրանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0070, Ալեք Մանուկյան 11

**SCIENCE IN SPORTS: CURRENT ISSUES
A Reviewed Scientific Methodical Journal**

The publication is guaranteed by the decision of the Scientific Council of Armenian State Institute of Physical Culture and Sport.

The journal is included in the list of scientific publications of the Higher Education and Science Committee of the Ministry of Education, Science, Culture and Sports of the RA.

Science in Sports. Current Issues. Yerevan. Armenian State Institute of Physical Culture and Sport, 2025, N° 3 (16), page 330.

The journal includes scientific research and methodical works of professors of Armenian State Institute of Physical Culture and Sport, other universities of the republic and other countries. Theoretical and scientific-experimental studies are devoted to physical culture, sports, adaptive physical culture, to the various issues of adaptive sports, as well as to other related fields. The articles of the journal are intended for specialists in the field of physical culture and sports, professors of educational institutions, young scientists.

Founder of the journal, "Armenian State Institute of Physical Culture and Sport" Foundation

11 Alek Manukyan Str., Yerevan 0070, Republic of Armenia
info@sportedu.am

Sportedu.am

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԳԻՏԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Գլխավոր խմբագիր՝

Սիմոնյան Տ.Գ.

մ.գ.թ., դոցենտ (rector@sportedu.am)

Պատասխանատու խմբագիր՝

Հատինյան Ա. Ա.

մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, ashot.chatinyan@sportedu.am)

Խմբագրակազմ

Ավագյան Հ. Յու.

մ.գ.թ., դոցենտ (Հայաստան, ԿԳՄՍ նախարարություն, hasmik.avagyan@sportedu.am)

Ղազարյան Ֆ.Գ.

մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, frunz.ghazaryan@sportedu.am)

Հակոբյան Ե. Ս.

մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, elena.hakobyan@sportedu.am)

Պետրոսյան Տ. Ռ.

կ.գ.թ., դոցենտ (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, tigran.petrosyan@sportedu.am)

Բաբայան Հ. Ա.

հ.գ.թ., պրոֆեսոր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, harutyun. babayan@sportedu.am)

Հարությունյան Ա. Ա.

կ.գ.թ., պրոֆեսոր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, anahit.harutyunyan@sportedu.am)

Արովյան Վ. Ա.

բ.գ.թ., դոցենտ (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, vardan.abovyan@sportedu.am)

Հակոբյան Ա. Լ.

մ.գ.թ., դոցենտ (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, armen.hakobyan@sportedu.am)

Գրիգորյան Յու. Գ.

դոցենտ (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, yura.grigoryan@sportedu.am)

Սիմոնյան Ե. Վ.

լեզվաբան-խմբագիր (Հայաստան, ՀՖԿՍՊԻ, eranuhi.simonyan@sportedu.am)

Գևորգյան Պ. Հ.

մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՎՊՀ, pargevgevorgyan007@gmail.com)

Մարդոյան Ռ. Ա.

մ.գ.դ., պրոֆեսոր (Հայաստան, ՇՊՀ, mardoyanr@ mail.ru)

Թումանյան Հ. Գ.

մ.գ.թ., պրոֆեսոր (Հայաստան, ԵՊՀ, armine.harutyunyan28@mail.ru)

Միջազգային խմբագրակազմ

Բուլատովա Մ. Մ.

մ.գ.դ., պրոֆեսոր (Ուկրաինա, ՈԻՖԿՍԱՀ,
dr.bulatova@gmail.com)

Պլաչինդա Տ. Ս.

մ.գ.դ., պրոֆեսոր (Ուկրաինա, ՊՊ,
praydtan@ukr.net)

Չոբովա Ֆ. Ռ.

կ.գ.թ., մ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան, ՊՖԿՍՏՊԱ,
Zfr-nauka@mail.ru)

SCIENCE IN SPORT: MODERN ISSUES

SCIENTIFIC METHODOICAL JOURNAL

Chief editor

T. G. Simonyan - PhD of Pedagogy, Associate Professor

Responsible Editor

Chatinyan A. A.

Doctor of Pedagogy, Professor (Armenia, ASIPCS, ashot.chatinyan@sportedu.am)

Editorial staff

- Avagyan H. Yu.** PHD of Pedagogy, Associate Professor (Armenia, Ministry of Education, Science, Culture and Sports, hasmik.avagyan@sportedu.am)
- Ghazaryan F. G.** Doctor of Pedagogy, Professor (Armenia, ASIPCS, frunz.ghazaryan@sportedu.am)
- Hakobyan Y. S.** Doctor of Pedagogy, Professor (Armenia, ASIPCS, elena.hakobyan@sportedu.am)
- Petrosyan T. R.** PHD of Biology, Associate Professor (Armenia, ASIPCS, tigran.petrosyan@sportedu.am)
- Babayan H. A.** PHD of psychology, Professor (Armenia, ASIPCS, harutyun.babayan@sportedu.am)
- Harutyunyan A. A.** PHD of Biology, Associate Professor (Armenia, ASIPCS, anahit.harutyunyan@sportedu.am)
- Abovyan V. A.** PHD of Medicine, Associate Professor (Armenia, ASIPCS, vardan.abovyan@sportedu.am)
- Hakobyan A. L.** PHD of Pedagogy, Associate Professor (Armenia, ASIPCS, armen.hakobyan@sportedu.am)
- Grogoryan Yu. G.** Associate Professor (Armenia, ASIPCS, yura.grigoryan@sportedu.am)
- Simonyan Y. V.** Linguist-editor (Armenia, ASIPCS, eranuhi.simonyan@sportedu.am)
- Gevorgyan P. H.** Doctor of Pedagogy, Professor (Armenia, VSU, pargevgevorgyan007@gmail.com)
- Mardoyan R. A.** Doctor of Pedagogy, Professor (Armenia, Shirak State University, mardoyanr@mail.ru)
- Tumanyan H. G.** PHD of Pedagogy, Professor (Armenia, YSU, armine.harutyunyan28@mail.ru)

International editorial board:

- Bulatova M. M.** Doctor of Pedagogy, Professor (Ukraine, NUUPES,
dr.bulatova@gmail.com)
- Plachinda T. S.** Doctor of Pedagogy, Professor (Ukraine, NUPP,
praydtan@ukr.net)
- Zotova F. R.** PHD of Biology, Doctor of Pedagogy, Professor (Russia,
VRSAPCST, Zfr-nauka@mail.ru)

**НАУКА В СПОРТЕ: СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ
НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ**

Главный редактор

Симонян Т. Г.

к.п.н., доцент, rector@sportedu.am

Ответственный редактор

Чатинян А. А.

д.п.н., профессор (Армения, ГИФКСА, ashot.chatinyan@sportedu.am)

Редакционный совет

- Авакян А. Ю.** к.п.н., доцент (Армения, Министерство ОНКС, hasmik.avagyan@sportedu.am)
- Казарян Ф.Г** д.п.н., профессор (Армения, ГИФКСА, frunz.ghazaryan@sportedu.am)
- Акопян Е. С.** д.п.н., профессор (Армения, ГИФКСА, elena.hakobyan@sportedu.am)
- Петросян Т. Р.** к.б.н., доцент (Армения, ГИФКСА, tigran.petrosyan@sportedu.am)
- Бабаян А. А.** к.псих.н., профессор (Армения, ГИФКСА, harutyun.babayan@sportedu.am)
- Арутюнян А. А.** к.б.н., профессор (Армения, ГИФКСА, anahit.harutyunyan@sportedu.am)
- Абовян В. А.** к.м.н., доцент (Армения, ГИФКСА, vardan.abovyan@sportedu.am)
- Акопян А. Л.** к.п.н., доцент (Армения, ГИФКСА, armen.hakobyan@sportedu.am)
- Григорян Ю. Г.** доцент (Армения, ГИФКСА, yura.grigoryan@sportedu.am)
- Симонян Е. В.** лингвист- редактор (Армения, ГИФКСА, eranuhi.simonyan@sportedu.am)
- Геворгян П. О.** д.п.н., профессор (Армения, ВГУ, pargevgevorgyan007@gmail.com)
- Мардоян Р. А.** д.п.н., профессор (Армения, ШГУ, mardoyanr@mail.ru)
- Туманян Г. Г.** к.п.н., профессор (Армения, ЕГУ, armine.harutyunyan28@mail.ru)

Международный редакционный совет

Булатова М. М.

д.п.н., профессор (Украина, УНУФКС,
dr.bulatova@gmail.com)

Плачинда Т. С.

д.п.н., профессор (Украина, Национальный универси-
тет «Полтавская политехника имени Юрия Кондра-
тюка», praydtan@ukr.net

Зотова Ф. Р.

к.б.н., д.п.н., профессор (Россия, ПГАФКСиТ,
Zfr-nauka@mail.ru)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ	14
ՄՊՈՐՏՈՒՄ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՄՊԵԿՏՆԵՐԸ Հ. Մ. Ավանեսյան, Ս. Վ. Հովհաննիսյան	14
ԿԻՆ ՍԱՄԲԻՍՏՆԵՐԻ ՆԱԽԱՎԱՐԺԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՐՑԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ Ի. Լ. Բաղդասարյան, Ք. Մ. Նաջարյան, Վ. Վ. Գրիգորյան	31
11-13 ՏԱՐԵԿԱՆ ԱԿՐՈՔԱՏՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ս. Գ. Խաչատրյան, Ս. Ա. Հակոբյան	42
ՏԵԽՆԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԵՌԱՑԱՏԿՈՒՄ Մ. Ա. Հարությունյան	55
ՍՐՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԶԱՁԵՎ ԲՈՒՎԱԾՔՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՇՐՋՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱԶԱՏ ԸՄԲՇԱՄԱՐՏՈՒՄ Խ. Թ. Հարությունյան	68
ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ Ե. Լ. Հովսեփյան	82
ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ ՀԵՌԱՎԱԶՔԻ ՄՐՑԱՁԵՎԵՐՈՒՄ Է. Զ. Մարտիրոսյան	95
ՌԻՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՄԱՐՁԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ Ֆ. Գ. Ղազարյան, Է. Զ. Մարտիրոսյան, Գ. Ֆ. Ղազարյան	108
ԿԱՆԱՆՑ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԱՏԵ ՄԱՐՁԱՁԵՎՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ Ա. Վ. Պողոսյան, Ն. Հ. Համբարձումյան	120

ՑԱՏԿԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՆ ԱՐԱԳԱՎԱԶՈՐԴՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ Վ. Ա. Սմբատյան, Տ. Գ. Սիմոնյան, Հ. Վ. Քոսակյան	135
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿՐՏԱԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԳՈՐԾՈՆ Ա. Գ. Ստեփանյան	150
ՍՏԱՅԵՐ-ԼՈՂՈՐԴՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 25 ԵՎ 50Մ ԼՈՂԱՎԱԶԱՆՆԵՐՈՒՄ Վ. Ս. Ավթանդիլյան, Ա. Գ. Տիրացոյան, Ն. Գ. Մարե-Գասպարյան	166
ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ Ա. Ա. Կովալյովա	182
ԼՈՂՈՐԴԻ ՄԱՐԶՄԱՆ ՈՒԺԱՅԻՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ (ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ) Խ. Ա. Սանոսյան, Ա. Պ. Գալստյան, Ա. Վ. Գալստյան, Է. Ա. Դանիելյան	202
ԲԱԺԻՆ 2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ	220
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ «ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ Վ. Ա. Աբովյան, Գ. Լ. Նալբանդյան, Գ. Ռ. Ասցատրյան	220
ԲԱԺԻՆ 3. ԱԴԱՊՏԻՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ, ԱԴԱՊՏԻՎ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ	234
ԼՈՂԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԽՄԲԵՐՈՒՄ Ա. Լ. Հակոբյան, Ա. Ա. Աթանեսյան	234
ՀԻԴՐՈԹԵՐԱՊԻԱՅԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒԿՈՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ Ս. Ս. Հակոբյան, Ն. Հ. Աբրահամյան, Ն. Ս. Զիլինգարյան	251

ԲԱԺԻՆ 4. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱ- ԿԵՏԵՐԸ	266
ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԱԿ- ՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Ջ. Ա. Թադևոսյան	266
ՍՊՈՐՏԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՆԵՐԴՐՄԱՄԲ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՎԵԼԱՅՄԱՆ ՈՒԴԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ Կ. Ս. Քոչարյան	281
ՍՊՈՐՏԻ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒ- ԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ. ՄԻՋԱԶ- ԳԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ Գ. Ա. Քթրյան, Տ. Ս. Մովսիսյան	293

CONTENT

SECTION 1. PEDAGOGICAL AND PSYCHOLOGICAL ASPECTS OF PHYSICAL EDUCATION AND SPORT TRAINING	
SCIENTIFIC PERSPECTIVES ON CONTEMPORARY CHALLENGES IN PSY- CHOLOGICAL SUPPORT IN SPORT H. M. Avanesyan, S. V. Hovhannisyan	14
PRE-COMPETITION TRAINING CHARACTERISTICS OF FEMALE SAMBO ATHLETES I. L. Baghdasaryan, Ch. M. Najarian, V. V. Grigoryan	31
CHARACTERISTICS OF PHYSICAL PREPAREDNESS IN 11-13-YEAR-OLD ACROBATS S. G. Khachatryan, S. A. Akobyan	42
MODERN APPROACHES TO TEACHING AND IMPROVING LONG JUMP TECHNIQUE M. A. Harutyunyan	55
METHODOLOGICAL FEATURES OF TEACHING LEG CROSS-TURN TECH- NIQUES IN FREESTYLE WRESTLING Kh. T. Harutyunyan	68

CONCEPTUAL VIEWS OF ARMENIAN INTELLECTUALS ON CHILDREN'S PHYSICAL EDUCATION E. L. Hovsepyan	82
ALGORITHMIC MODEL OF PREDICTION OF RECORD RESULTS IN LONG-DISTANCE RUNNING E. Z. Martirosyan	95
TRAINING AND ITS IMPLEMENTATION IN PHYSICAL EDUCATION AND SPORTS ACTIVITIES F. G. Ghazaryan, E. Z. Martirosyan G. F. Ghazaryan	108
WOMEN'S PARTICIPATION IN KARATE: CHALLENGES AND PROSPECTS FOR DEVELOPMENT A. V. Poghosyan, N. H. Hambardzumyan	120
APPLICATION OF SKIPPING EXERCISES IN THE TRAINING OF SPRINTERS AT THE SPORTS IMPROVEMENT STAGE V.A. Smbatyan, T.G. Simonyan, A.V. Kosakyan	135
PHYSICAL EDUCATION AS A FUNDAMENTAL FACTOR IN THE HARMONIOUS DEVELOPMENT OF PRIMARY SCHOOLCHILDREN A. G. Stepanyan	150
STRATEGIES FOR IMPROVING PERFORMANCE OF DISTANCE SWIMMERS IN 25 M AND 50 M POOLS V. S. Avtandilyan, A. H. Tiratsuyan, N. G. Mare-Gasparyan	166
IMPACT OF MUSICAL ACCOMPANIMENT ON PHYSICAL EDUCATION CLASSES AMONG UNIVERSITY STUDENTS A. A. Kovalyova	182
SELECTION AND IMPROVEMENT OF LOAD CALCULATION METHODS FOR STRENGTH-ORIENTED EXERCISES IN SWIMMER TRAINING Kh. A. Sanosyan, A. P. Galstyan, A.V. Galstyan, E.A. Danielyan	202
SECTION 2. MEDICAL AND BIOLOGICAL ASPECTS OF PHYSICAL EDUCATION AND SPORT TRAINING	220
EFFECTIVENESS OF INTRODUCING A LIFESTYLE MEDICINE COURSE INTO THE MASTER'S PROGRAM AT THE STATE INSTITUTE OF PHYSICAL CULTURE AND SPORT OF ARMENIA V. A. Abovyan, G. L. Nalbandyan, G. R. Ascatryan	220

SECTION 3. ASPECTS OF ADAPTIVE PHYSICAL CULTURE, ADAPTIVE SPORT AND PHYSICAL REHABILITATION	234
EFFECTS OF HYDROTHERAPY ON MOTOR ABILITIES IN CHILDREN WITH CEREBRAL PALSY S. S. Hakobyan, N. H. Abrahamyan, N. S. Chilingaryan	234
IMPACT OF INTEGRATED GROUP SWIMMING CLASSES ON CHILDREN WITH SPECIAL EDUCATIONAL NEEDS A. L. Akopyan, A. A. Atanesyan	251
SECTION 4. SOCIO-ECONOMIC, LEGAL, MANAGEMENT AND HISTORICAL ASPECTS IN THE FIELD OF PHYSICAL CULTURE AND SPORT	266
SOCIO-ECONOMIC DRIVERS OF SPORTS SECTOR DEVELOPMENT IN ARMENIA <i>J. A. Tadevosyan</i>	266
WAYS TO ENHANCE ECONOMIC GROWTH THROUGH INVESTMENT IN SPORTS POTENTIAL IN THE REPUBLIC OF ARMENIA K.S.Qocharyan	281
ENSURING ACADEMIC PROGRAM QUALITY IN SPORT AND PHYSICAL EDUCATION: INTERNATIONAL TRENDS G. A. Ktryan, T. S. Movsisyan	293

ԲԱԺԻՆ 1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

ՀՏԴ 159.9

DOI: 10.53068/25792997-2025.3.16-14

ՄՊՈՐՏՈՒՄ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Հետազոտությունը ֆինանսավորվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից (Հետազոտական նախագիծ N° 25RG-5A146)

Հ. Մ. Ավանեսյան, Ս. Վ. Հովհաննիսյան, Երևանի պետական համալսարան, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Սպորտ, հոգեբանական աջակցություն, ժամանակակից մարտահրավերներ, գիտական միտումներ, խոչընդոտներ, հեռանկարներ:

Հետազոտության արդիականություն: Ներկայիս բարձր նվաճումների սպորտին բնորոշ մրցակցային միջավայրի, սոցիալական տարաբնույթ ազդեցությունների, մեդիայի և տեխնոլոգիական նոր զարգացումների պայմաններում մարզիկների հոգեբանական աջակցությունը դարձել է մարզման գործընթացի արդյունավետության ապահովման առանցքային բաղադրիչ:

Սպորտում հոգեբանական աջակցության ցուցաբերման հիմնահարցի վերաբերյալ վերջին տարիներին արված դիտարկումներն ու մասնագիտական գրականության [6, 8, 14] վերլուծությունը ցույց են տալիս, որ այսօր շեշտը դրվում է հատկապես բազմաբա-

ղադրիչ մոտեցումների վրա. հնամուլական, քարացած ախտորոշում՝ համակցված փուլային աջակցությամբ (քայլ առ քայլ օժանդակություններ), ինտեգրված բազմաարոֆիլային մասնագետներով համալրված թիմեր (մարզիչ, ֆիզիոթերապևտ, սպորտային հոգեբան, թիմի ղեկավար, մենդաբան, կենսաքիմիկոս, կինեզիոլոգ և այլն), կարճաժամկետ մասշտաբային հոգեբանական թրենինգներ՝ հարմարեցված թվային միջամտությունների համատեքստին: Ու չնայած շատ միջամտություններ ապահովում են որոշակիորեն խոստումնալից արդյունքներ, այնուամենայնիվ, ցայսօր դեռևս զգացվում է գործող մարզիկների պատահականացված ընտրությամբ իրականացվող ավելի որակյալ հետազոտությունների պակասը: Հայրմ, անհրաժեշտ է որոշարկել սպորտում և ֆիզիկական դաստիարակությունում ցուցաբերվող հոգեբանական աջակցության խնդրի արդի

մարտահրավերները, գիտական միտումներն ու հիմնական մոտեցումները:

Ժամանակակից հոգեբանական միջամտությունների և աջակցման մոդելների ուսումնասիրությունը կարևոր է նաև այն առումով, որ հնարավորություն կտա հասկանալու, թե ինչպես կարելի է պատանի և բարձրակարգ մարզիկների շրջանում ձևավորել հոգեբանական դիմադրողականություն, ինքնակարգավորում, մոտիվացիա և թիմային արդյունավետ փոխազդեցություն:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության շրջանակում ձևակերպված նպատակն էր՝ առաջադրված հիմնահարցին վերաբերող արդի հոգեբանական տեսությունների, մեթոդաբանական տեսակետների և միջազգային փորձի ընդհանրական վերլուծության միջոցով վերհանել սպորտում հոգեբանական աջակցության ժամանակակից մարտահրավերները, բացահայտել տարատեսակ սպորտաձևերում մատուցվող հոգեբանական աջակցության հայեցակարգը, ինչպես նաև դրա լավարկման գիտական միտումներն ու հեռանկարները:

Սահմանված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. Վերլուծել սպորտում հոգեբանական աջակցության ներկայիս միտումները:

2. Նկարագրել ժամանակակից սպորտում առաջացած հոգեբանական մարտահրավերները (թվային միջավայր, տեսախաղեր և կիբեռմրցություններ, սոցիալական ճնշում, մեդիա ազդեցություն, բեռնվաճության անընդհատ աճ և այլն):

3. Վերլուծել սպորտում կիրառվող հոգեբանական աջակցության տարատեսակ մոդելներն ու մոտեցումները:

4. Կատարել խնդրի լուծման տեսական եզրահանգումներ և առաջարկել հնարավոր բարելավման ուղղություններ:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Ծրագրված տեսական հետազոտությունն իրականացնելիս օգտագործվել է հետազոտական հետևյալ գործիքակազմը.

- տեսական վերլուծություն (մասնագիտական աղբյուրների, հոդվածների և մենագրությունների ուսումնասիրություն),
- համեմատական վերլուծություն (գիտական տարբեր մոտեցումների համադրում),
- բովանդակային վերլուծություն (հոգեբանական աջակցության բաղադրիչների ընդգծում):

Տեսական վերլուծության գործընթացում նախապատվությունը տրվել է մետավերլուծական ուսումնասիրություններին, որոնք հնարավորություն են

տալիս նախանշել սպորտային գործունեության մեջ հոգեբանական աջակցության ժամանակակից միտումները:

Հետազոտությունն իրականացնելիս հիմնական մոտեցումը համակարգային էր, այսինքն՝ հոգեբանական աջակցությունը դիտարկվել է որպես սպորտային միջավայրում բազմագործոնային համակարգի մի մաս: Հետազոտության եզրափակիչ փուլում կիրառվել է մոդելային մոտեցում, որի շրջանակում փորձ է արվել ձևավորելու հոգեբանական աջակցության հնարավոր կառուցվածքային մոդել:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Ժամանակակից բարձրագույն սպորտը դիտարկվում է ոչ միայն որպես ֆիզիկական, այլև որպես հոգեբանական դիմակայության դաշտ: Ուստի, միանգամայն բնական է, որ ներկայումս հոգեբանական աջակցությունը դարձել է մարզիկի հոգեբանական և/կամ սպորտային պատրաստության անբաժան մաս, սակայն դրա կիրառման ձևերն ու արդյունավետությունը շարունակաբար փոփոխվում են: Այս համատեքստում առաջնահերթ կարևորվում են մարզիկի հոգեկան առողջության խնդիրները, ապա նաև տարաբնույթ մարզաձևերով մասնագիտացող մարզիկների՝ հոգեբանական օգնության դիմելու խոչընդոտները: Հոգեկան առողջության հիմնական տեսա-

կետները դիտարկելիս առանձնահատուկ կարևորվում են Առողջության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալները, համաձայն որոնց՝ աշխարհում մեկ միլիարդից ավելի մարդ ապրում է հոգեկան առողջության խնդիրներով: Ըստ ԱՀԿ բնորոշման՝ հոգեկան առողջությունը հոգեկան բարեկեցության վիճակ է, որը թույլ է տալիս մարդկանց հաղթահարել կյանքի սթրեսները, իրացնել սեփական կարողությունները, լավ սովորել, աշխատել, ինչպես նաև ներդրում ունենալ իրենց համայնքի կյանքում [27]:

Փաստացի հոգեկան առողջությունը միմյանց փոխկապակցված գործընթացների բարդ շարունակականություն է, որը յուրաքանչյուր մարդ յուրովի է ըմբռնում և զգում: Ցանկացած պահի անհատական, ընտանեկան, համայնքային և կառուցվածքային գործոնների այդ համակցությունը կարող է նպաստել ինչպես անձի հոգեկան առողջության պահպանմանը, այնպես էլ խաթարել այն: Ու չնայած մարզիկների մեծ մասն ավելի տոկուն և դիմացկուն է, այնուհանդերձ, աներկբա է, որ անբարենպաստ հանգամանքների ազդեցությանը ենթարկված մարդիկ, այդ թվում՝ մարզիկները, ավելի նախատրամադիր են հոգեկան խանգարումների առաջացման բարձր ռիսկի: Բացի այդ, հոգեկան առողջության ռիսկերը կարող են դրսևորվել տարբեր մակարդակներում:

Տեղային մարտահրավերներն ընդգրկում են մարզիկներին, նրանց ընտանիքները, թիմերն ու միությունները, մինչդեռ համընդհանուր սպառնալիքները, ինչպիսիք են՝ տնտեսական անկումները, հիվանդությունների բռնկումները, հումանիտար արտակարգ իրավիճակները, հարկադիր տեղահանումը և կլիմայի փոփոխությունը, ազդում են ամբողջ բնակչության վրա [27]:

Ոչ մի առանձին գործոն չի կարող հուսալիորեն կանխատեսել, թե արդյունքում ինչ կլինի մարզիկի հոգեկան առողջության հետ: Ինչպես գիտենք, ռիսկի գործոնների ենթարկված ոչ բոլոր բարձրակարգ մարզիկների մոտ են հոգեկան խանգարումներ զարգանում, մինչդեռ սկսնակ մարզիկները նույնպես կարող են տուժել առանց որևէ հանրահայտ ռիսկի ներգործության: Հայսմ, մարզիկների հոգեկան առողջությունը երկրորդական թեմայից վերածվել է սպորտային գիտության առանցքային հիմնախնդրի: Վերջին վերլուծություններն ու լայնածավալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ թե՛ նախկին, թե՛ ներկայիս բարձրակարգ մարզիկներն էապես ավելի նախատրամադիր են տարածված հոգեկան խանգարումների (տագնապանություն, դեպրեսիա), իսկ դրանց տարածվածությունն ու ծանրությունը տարբերվում են՝ ելնելով սպորտաձևի

առանձնահատկություններից, մարզիկների սեռից և փոքր խմբերի պատկանելությունից: Եվ չնայած առաջադրված հիմնախնդրի հանդեպ հետզհետե աճող ուշադրությանը, այնուհանդերձ օգնության դիմելու մակարդակը դեռևս մնում է ցածր. մետավերլուծական տվյալները ցույց են տալիս, որ մարզիկների ընդհանուր թվի նույնիսկ 25 %-ը չի դիմում մասնագիտական օգնության [6]: Հիմնական խոչընդոտներից են՝ կարծրատիպերը (խարանադրոշմավորումը), «դիմակայունության, տոկունության» սպասումները, գաղտնիության վերաբերյալ մտահոգությունները և մարզական համայնքում բարձր պատրաստվածություն ունեցող մասնագետների պակասը [25]:

Սպորտի ներկայացուցիչների կարծիքով մարզիկների խարանման հիմնական պատճառներն են՝ մարզիկների նվաճումների նկատմամբ դրսևորվող նախանձը, սպորտի՝ որպես ոչ ծանր աշխատանքի հետ կապված գործունեության մասին սխալ պատկերացումը, հանրային վայրերում մարզիկների մոտ նկատվող շեղվող վարքի տարբեր դրսևորումները: Արդյունքում՝ բացահայտվել է կրթական համակարգում սովորող մարզիկների խարանման հանգամանքի հետ կապված միջանձնային փոխազդեցությունները շտկելու

անհրաժեշտությունը [1]: Սա հանգեցնում է այն բանին, որ բուժելի խնդիրներ ունեցող շատ մարզիկներ ժամանակին աջակցություն չեն ստանում, ինչը նվազեցնում է նրանց ցուցանիշները, վատթարացնում նրանց բարեկեցությունը և կրճատում նրանց կարիերան:

Մեկ այլ կարևոր գործոն է մասնագիտական այրման համախտանիշը (գերհոգնածությունը, գերմարզվածությունը), ինչպես նաև համավարակից հետո նկատվող առաջանցիկ տեմպերով աճող բեռնվածությունների ազդեցությունը [17]: Մասնագիտական այրումը մնում է մշտական և, մի շարք ուսումնասիրությունների համաձայն, նաև աճող խնդիր, հատկապես երիտասարդ և բարձր որակավորում ունեցող մարզիկների շրջանում [19]: Բացի այդ՝ երկայնական ուսումնասիրությունները հավաստանշում են կապը չափազանց մեծ բեռնվածության և հուզական այրման աճի, ինչպես նաև սպորտի ապաստանավորման և նվաճման զգացողության նվազման միջև [26]: COVID-19 համավարակն ունեցել է երկակի ազդեցություն. որոշ մարզիկների մոտ ճնշման նվազեցումը բարելավել է նրանց վիճակը, մինչդեռ մյուսների մոտ մեկուսացումը և աջակցության կորուստը վատթարացրել են այն՝ առաջ բերելով ճնշող ձանձրույթ ու լարվածություն [10]: Ընդհանուր առմամբ, 2020-ից

ի վեր, ծանրաբեռնվածության կառավարման և վերականգնման հիմնահարցը դարձել է շատ ավելի հրատապ:

Հայտնի է նաև, որ խոշոր հաղթանակից հետո մարզիկը դոֆամինի և էնդորֆինների հորձանք է ապրում, սակայն էյֆորիան արագորեն փոխվում է անկման: Անձը ձևավորող գեներտիկ գործոնների հետազոտությունները ցույց են տալիս, որ օլիմպիականների մոտավորապես մեկ երրորդը մրցումներից հետո հայտնվում է դեպրեսիվ վիճակում՝ անկախ արդյունքներից: Դրա պատճառները նպատակի և իմաստային վեկտորի կորուստն են. հաջորդ գագաթնակետը թվում է անհասանելի կամ անիմաստ [11]:

Որոշ հետազոտությունների համաձայն՝ մարզուիկների մոտավորապես մեկ երրորդն ու մարզիկների մեկ քառորդը ցավազրկողներ են ընդունում: Արդյունքում՝ նրանք հայտնվում են արատավոր շրջանի մեջ՝ բեռնվածություն - միկրոտրավմա - ցավազրկում - նոր բեռնվածություն: Վնասվածքները կուտակվում են, իսկ անխուսափելիորեն հուսաբեկվելու և կոտրվելու պահը դառնում է ժամանակի հարց: Կարիերայի ավարտից հետո վիճակը միայն վատթարանում է: Կանոնավոր մարզումների բացակայությունը նվազեցնում է էնդորֆինների մակարդակը, իսկ հյուծված մարմինը չի հասցնում վերակազմակերպվել [5]:

Բեյլորի համալսարանի հետազոտողներն ուսումնասիրել են, թե ինչպես կարող են ռազմավարությունները, ներառյալ ճանաչողական վարքային թերապիան (ՃՎԹ)՝ գիտականորեն հիմնավորված մոտեցումը, որը խթանում է տագնապի, դեպրեսիայի, հոգեներգործուն նյութերի օգտագործման և հոգեկան առողջության այլ խնդիրների ախտանիշները նվազեցնող հմտությունների զարգացումը, բարելավել նաև բարձրակարգ մարզիկների մարզական ցուցանիշները՝ ուսանողական, մասնագիտական և օլիմպիական մակարդակներում [7]:

Հաջորդիվ կարևորվում են սպորտային վնասվածքների հոգեբանական տեսակետները և վերականգնողական խնամքի հետևողականությունը: Վնասվածքների ժամանակակից հետազոտությունները շեշտում են, որ վերականգնումը միայն ֆիզիոլոգիական գործընթաց չէ: Հոգեբանական գործոնները՝ կրկնակի վնասվածքի վախը, վնասվածքից հետո մարզումներին վերադառնալու պատրաստվածության ցածր մակարդակը, դեպրեսիան և տագնապայնությունը, անմիջականորեն ազդում են վերականգնողական խնամքի հետևողականության և վերականգնման արագության վրա [22]: Վերջին ընդհանրացումներն ընդգծում են նաև հաղորդակցության, համատեղ

որոշումների կայացման, նպատակների սահմանման և հոգեբանական պատրաստվածության գնահատման կարևորությունը [23]: Հենց այս համատեքստում է, որ սպորտային հոգեբանների և հոգեկան առողջության մասնագետների ներգրավումը բազմամասնագիտական թիմերում բարելավում է մարզական արդյունքները:

Անդրադառնալով քաջագայուն սպորտաձևերի հիմնախնդիրներին՝ հարկավոր է մատնանշել մարմնակազմության ճնշումն ու սննդային վարքի խանգարումներին առնչվող տեսակետները: Սննդային վարքի խանգարումների և քաշի վերահսկման ոչ անվտանգ պրակտիկայի խնդիրները պահպանվում են սպորտային բազմաթիվ գիտակարգերում, ինչպես նաև՝ գեղագիտական, քաշային և առանձնակի դիմացկունության հետ կապված սպորտաձևերում: Մարզական միջավայրի հետ կապված գործոններից բացի, երիտասարդ մարզիկները ենթակա են հասունացման գործընթացի հետևանքով առաջացած փոփոխությունների: Հետևաբար, միևնույն գործոնները կարող են տարբեր կերպ ազդել թե՛ երիտասարդ, թե՛ չափահաս մարզիկների սննդային խանգարումների ռիսկի վրա [4]: Նորերս պատահած հանրային դեպքերն ու հետազոտությունները ցույց են

տալիս, որ պերֆեկցիոնիզմը և բացառապես արդյունքի վրա կողմնորոշվածությունը մեծացնում են դիսկը [3]: Թեպետ որոշ միջազգային և ազգային ֆեդերացիաներ իրականացնում են բարեփոխումներ, այդուհանդերձ, համակարգային գործոնները շարունակում են մնալ որպես լուրջ մարտահրավեր:

Հետազոտողները փորձում են պարզաբանել նաև, թե ինչպես են մարզիկները հանդես գալիս ճնշման տակ (ձախողումն ընդդեմ «կլատջ» էֆեկտի): Այս թեմայով ընդհանրացումները փաստում են, որ ուշադրության վերահսկումը, հույզերի կարգավորումը և ինքնատիրապետման իրավիճակային ռազմավարությունները ի զորու են բացատրել արդյունքների տարբերությունները [18]: Այնուամենայնիվ, գործնականում «փոխադրման անջրպետը» պահպանվում է. ապացույցների վրա հիմնված հոգեբանական հմտությունները հազվադեպ են կիրառվում մարզումների ժամանակ:

Վերջին տասնամյակներում նկատվող թվային հարթակների և էլեկտրոնային սպորտի կամ կիբեռնրոգությունների աճը ստեղծում է նոր մարտահրավերներ. այլ՝ տարբերվող սթրեսորներ, այրման յուրօրինակ հետազոծեր և ադդիկտիվ վարքի (կախվածության) առաջացման դիսկեր: Ճիշտ է, առաջադեմ տեխնոլոգիաները

(դյուրակիր սարքեր, ԿՀԿ, հեռաբժշկություն) հնարավորություններ են ստեղծում մասշտաբային միջամտությունների և մշտադիտարկման համար, բայց ծնում են էթիկական և գաղտնիության պահպանման դիսկեր [21]:

Համակարգային և սոցիալական մարտահրավերների շարքում այսօր կարևորվում են բազմազանության ապահովման, ներառականության և անցումային փուլերի հետ կապված դժվարությունները: Այս առնչությամբ ժամանակակից հրապարակումները ընդգծում են համակարգային գործոնների կարևորությունը. որևէ փոքրամասնություն ներկայացնող մարզիկներն ավելի հաճախ են բախվում հոգեկան առողջությանը սպառնացող մեծ բեռնվածության և խնամքի ու օգնության հասանելիության խոչընդոտների: Հատկապես խոցելի են անցումային փուլերը՝ վնասվածքից հետո մարզումներին վերադառնալը, թիմում ընդգրկվելը կամ չընտրվելը, նաև կարիերայի ավարտը [12]:

Գիտական մեծաթիվ գրականության վերլուծությունը հնարավորություն տվեց առանձնացնելու ժամանակակից սպորտում հոգեբանական աջակցության բարելավման առավել գործնական և կիրառական ստորև նշված մոտեցումները.

- Զարգացնել մարզիկների հոգեբանական պատրաստվածությունը

բոլոր փուլերում և մակարդակներում՝ մասսայականից մինչև պրոֆեսիոնալ սպորտ, ներառյալ ինքնակարգավորման, կենտրոնացման և սթրեսակայունության մարզումները [20]:

- Մարզադպրոցներում,

սպորտային ակումբներում և ազգային հավաքականներում իրականացնել հոգեբանական աջակցության ծրագրեր՝ որակավորված մարզական հոգեբանների մասնակցությամբ [13]:

- Իրականացնել մարզիկների վիճակի պարբերական հոգեբանական մոնիթորինգ՝ գնահատելով նրանց մոտիվացիայի մակարդակը, տագնապայնությունը, ռիզիկոսությունը, ֆրուստրացվածությունը և անձնային նախադրյալները [2]:

- Ձևավորել հոգեբանական օգնության բացեիբաց դիմելու մշակույթ՝ նվազեցնելով խարանը և խոչընդոտները, հատկապես երիտասարդ մարզիկների շրջանում [8]:

- Օգտագործել թվային գործիքներ և առցանց հարթակներ հոգեբանական աջակցության ու հեռավար խորհրդատվության համար [14]:

- Առանձնահատուկ ուշադրություն դարձնել սպորտային մասնագետների, մարզիչների և մարզիկների մասնագիտական այրման կանխարգելմանը [15]:

- Ինտեգրել հոգեբանական թրե-նինգները ֆիզիկական պատրաստության գործընթացում. աշխատանք՝ նպատակադրման, տեսապատկերավորման (վիզուալիզացիայի) և թիմային փոխներգործության հետ [16]:

- Մշակել վնասվածքներից հետո վերականգնողական անհատականացված ծրագրեր՝ հաշվի առնելով հոգեհուզական գործոնները [24]:

- Պահպանել հավասարակշռություն մարզիկի արդյունավորության և անձնական բարեկեցության միջև, ներառյալ ինքնագնահատականի, ինքնության և կենսական առաջնահերթությունների հետ աշխատանքը [9]: Մարզական գործունեության վրա հիմնված ինքնաճանաչումն ու ցուցանիշների վրա հիմնված ինքնագնահատականը կապված են մարզիկների գերհոգնածության հետ:

Այսպիսով, ամփոփելով սույն մետավերլուծության արդյունքները, կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

Մարզիկների հոգեբանական պատրաստությունը ևս պետք է իրագործվի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի հիմնարար սկզբունքներին համահունչ: Ժամանակակից հետազոտությունները [13] թույլ են տալիս պնդել, որ հավաստագրված սպորտային հոգեբանների

մասնակցությամբ համալիր ծրագրերի իրականացումը նպաստում է մարզիկների դիմադրողականության և մասնագիտական բեռնվածությունների հանդեպ հարմարվողականության աստիճանի բարձրացմանը: Իր հերթին՝ մարզական արդյունավորության ու անձնական բարեկեցության միջև հավասարակշռության ապահովումը պահանջում է ուշադրություն դարձնել մարզիկի ինքնագնահատականի, ինքնության և կյանքի առաջնահերթությունների հարցերին, քանզի բացառապես ցուցանիշների վրա հիմնված ինքնագնահատականը մեծացնում է մասնագիտական այրման ռիսկը: Մարզիկների մոտիվացիայի, տազնապայնության և հուզական վիճակների կանոնավոր հոգեբանական մոնիթորինգը ևս հնարավորություն է տալիս ժամանակին բացահայտել ապահարմարվողության և մասնագիտական այրման ռիսկերը [2]: Հայտնի է, որ այրումն առաջանում է ինչպես սթրեսից, այնպես էլ մոտիվացիայի հետ կապված գործընթացներից և կարող է վերահսկվել ինքնահաշվետու հարցաթերթիկների միջոցով: Այս առումով, հատուկ ուշադրություն պետք է դարձնել մարզիկների և մարզիչների մասնագիտական այրման կանխարգելմանը, ինչը պահանջում է համակարգված մոտեցում և մասնագետների միջգիտակարգային համագործակցություն [15]:

Ակնհերև է, որ ներկայիս հետազոտությունների նպատակն է ընդլայնել նախորդ արդյունքների վրա հիմնված գիտելիքները՝ կիրառելով անձնակենտրոն մոտեցում և ուսումնասիրել մարզիկների՝ ցուցանիշների վրա հիմնված ինքնագնահատականի ու նույնականության հիման վրա հուզական այրման պրոֆիլները բացահայտելու հնարավորությունը [9]: Անհրաժեշտ է խթանել բացեիբաց օգնության դիմելու մշակույթը, որը նպատակ ունի նվազեցնելու հոգեբանական աջակցության խարանն ու խոչընդոտները, հատկապես երիտասարդ մարզիկների շրջանում [8]:

Արդի սպորտաձևերի թվային փոխակերպումների պայմաններում ախտորոշման և խորհրդատվության առցանց հարթակներն ու թվային գործիքները գնալով ավելի կարևոր դեր են խաղում, մինչդեռ կարևոր է հաշվի առնել դրանց կիրառման մշակութային և բարոյագիտական տեսակետները [14]: Որոշ հեղինակներ քննադատաբար են վերաբերում հոգեկան առողջության պահպանման հարցում թվային տեխնոլոգիաների ինտեգրման ներուժին ու մարտահրավերներին, հատկապես՝ ախտորոշման, կանխարգելման և շտկման ոլորտներում: Հոգեբանական թրենինգների՝ նպատակադրման, մտապատկերավորման և թիմային փոխգործակցության, ինտեգրումը ֆիզիկական

պատրաստության գործընթացին բարձրացնում է մարզիկների հոգեկան կայունությունը և նպաստում նրանց ընդհանուր բարեկեցությանը: Ավարտին ընդգծվում է սպորտային հոգեբանության մեջ մշակութային և գենդերային տեսակետները հաշվի առնելու կարևորությունը և առաջարկվում է ֆիզիկական-հոգեբանական համալիր մոտեցում՝ համընդհանուր բարեկեցությունն ապահովելու համար:

Վնասվածքներից հետո վերականգնվելուն միտված անհատական ծրագրերը, որոնք ներառում են գիտակցվածության, ճանաչողական վերակառուցման և վիզուալիզացիայի մեթոդներ ու տեխնիկաներ, բարձրացնում են վերականգնման արդյունավետությունը և արագացնում մարզիկների վերադարձը թե՛ մարզումներին, թե՛ մրցումներին [24]: Սթրեսի կառավարման մեթոդները, ճանաչողական վերակառուցումը, գիտակցվածությունը, շարժողական մտապատկերավորումը և սոցիալական աջակցության փնտրտուքը ցույց են տվել իրենց բարձր արդյունավետությունը: Այս մեթոդները, որոնցից շատերը սկզբնապես մշակվել են սպորտային հոգեբանների կողմից՝ արդյունքները լավարկելու համար, այժմ օգնում են երիտասարդ մարզիկներին հասնելու իրենց լավագույն արդյունքներին՝ կանխելով վնասվածքները և

նպաստելով վնասվածքից հետո մարզումներին անվտանգ վերադարձին: Սպորտի հոգեբանության մեթոդները նույնպես կարևոր դեր են խաղում վնասվածքից հետո վերականգնողական գործընթացում:

Եզրակացություն: Ընդհանրացնելով դիտարկված իրողությունները, ինչպես նաև բերված հոգեբանական փաստերի նկարագրություններն ու բացատրությունները՝ կարելի է ձևակերպել ուսումնասիրվող հիմնահարցի հետևյալ հայեցակարգը.

Սպորտի, առավել ևս բարձր նվաճումների սպորտի ժամանակակից հոգեբանական աջակցությունը առանձնահատուկ կարևորություն է ստանում կապված մարզիկների արդյունավորության, հոգեկան առողջության պահպանման և սթրեսակայունության նկատմամբ աճող պահանջների հետ: Կատարված հետազոտության առավել հաստատուն ընդհանրացումներն ընդգրկում են այնպիսի առանցքային խնդիրներ, որոնք կապված են մարզիկների հուզական այրման գնահատման ու կանխարգելման, ինքնակարգավորման հմտությունների զարգացման և նվաճումների կայուն մոտիվացիայի ձևավորման հետ: Ներկայիս հոգեբանական աջակցությունն ուղղված է ոչ միայն մարզիկներին, այլև

մարզիչներին՝ ապահովելով արդյունավետ փոխազդեցություն «մարզիչ-մարզիկ-թիմ» համակարգում:

Վերլուծությունը ցույց տվեց, որ ժամանակակից մարտահրավերների թվում են՝ թվայնացման և սոցիալական ցանցերի ազդեցությունը մարզիկի ինքնության և ինքնագնահատականի վրա, տագնապային և դեպրեսիվ վիճակների հետզհետե աճող ռիսկերը, ինչպես նաև հոգեբանական մեթոդները սպորտային պատրաստության համակարգին ինտեգրելու անհրաժեշտությունը:

Այսպիսով՝ մարզիկի վիճակը լավարարելու և նրա մրցունակությունը բարձրացնելու համար հոգեախտորոշման ու մտավոր մարզման տեխնոլոգիաների կիրառումը դառնում է կարևոր ուղղություն և ոլորտ, իսկ հոգեբանական պրակտիկայի, մշտադիտարկման, թվային տեխնոլոգիաների և անձնակենտրոն մոտեցումների միասնացումը ձևավորում է սպորտի համար հոգեբանական աջակցության ժամանակակից մոդել, որն ուղղված է մարզական գործընթացի բոլոր մասնակիցների առողջության պահպանմանը, կայուն զարգացմանն ու բարեկեցությանը:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ермилова А. В.** (2023) Представители спорта как категория, «пораженная» стигмой в системе образования. ВЕСТНИК Сургутского государственного педагогического университета №2 (83), с. 91-101. // <https://doi.org/10.26105/SSPU.2023.83.2.009>
2. **Протасов Е. А., Пшеницын К. К.** (2023) Особенности проявления тревожности у высококвалифицированных спортсменов // Актуальные вопросы спортивной психологии и педагогики. Т. 3. № 4. с. 36-44. // <https://doi.org/10.15826/spp.2023.4.86>
3. **Berengüi, R., Angosto, S., Hernández-Ruiz, A., et al.** (2023) Body image and eating disorders in aesthetic sports: A systematic review of assessment and risk, Sci sports // <https://doi.org/10.1016/j.scispo.2023.03.006>
4. **Borowiec, J., Banio-Krajnik, A., Malchrowicz-Moško, E., Kantanista, A.** (2023) Eating disorder risk in adolescent and adult female athletes: the role of body satisfaction, sport type, BMI, level of competition, and training background. BMC Sports Sci Med Rehabil. 15 (1): 91. // <https://doi.org/10.1186/s13102-023-00683-7>

5. **Christopher, S., Tadlock, B. A., Veroneau, B. J., Harnish, C., Perera, N. K. P., Knab, A. M., et al.** (2020) Epidemiological profile of pain and non-steroid anti-inflammatory drug use in collegiate athletes in the United States. *BMC musculoskeletal disorders*, 21(1), p. 561. // <https://doi.org/10.21203/rs.3.rs-29931/v1>
6. **Cosh, S. M., McNeil, D. G., et al.** (2024) Athlete mental health help-seeking: A systematic review and meta-analysis of rates, barriers and facilitators. // <https://doi.org/10.1016/j.psychsport.2023.102586>
7. **Craine, K.** (2024) Addressing Mental Health Challenges for Olympic and Elite Athletes, Baylor University, Media and Public Relations. Retrieved Oct 16, 2025. URL: <https://news.web.baylor.edu/news/story/2024/addressing-mental-health-challenges-olympic-and-elite-athletes>
8. **Gulliver, A., Griffiths, K. M., Christensen H.** (2012) Barriers and facilitators to mental health help-seeking for young elite athletes: a qualitative study. *BMC Psychiatry*, 12, 157. // <https://doi.org/10.1186/1471-244X-12-157>
9. **Gustafsson, H., Martinent, G., Isoard-Gautheur, S., Hassmén, P., Guillet-Descas, E.** (2018) Performance based self-esteem and athlete-identity in athlete burnout: A person-centered approach, *Psychology of Sport and Exercise*, Volume 38, pp. 56-60 // <https://doi.org/10.1016/j.psychsport.2018.05.017>
10. **Haan, R., Ali Alblooshi, M. E., Syed, D. H., Dougman, K. K., Al Tunajji, H., Campos, L. A., et al.** (2021) Health and Well-Being of Athletes During the Coronavirus Pandemic: A Scoping Review. *Front. Public Health* 9: 641392 // <https://doi.org/10.3389/fpubh.2021.641392>
11. **Humińska-Lisowska, K.** (2024) Dopamine in Sports: A Narrative Review on the Genetic and Epigenetic Factors Shaping Personality and Athletic Performance. *Int J Mol Sci.*, 25(21), 11602 // <https://doi.org/10.3390/ijms252111602>
12. **Kluch, Y., Wright-Mair, R., Swim, N., & Turick, R.** (2023) “It’s Like Being on an Island by Yourself”: Diversity, Equity, and Inclusion Administrators’ Perceptions of Barriers to Diversity, Equity, and Inclusion Work in Intercollegiate Athletics. *Journal of Sport Management*, 37(1), pp. 1-14. // <https://doi.org/10.1123/jsm.2021-0250>
13. **Lane, S.** (2024) “It’s the people that make the difference”: Understanding the significance of psychosocial support for professional athletes, *Mental Health & Prevention*, Volume 36, 200364. // <https://doi.org/10.1016/j.mhp.2024.200364>

14. **Löchner, J., Carlbring, P., Schuller, B., Torous, J., Sander, L. B.** (2025) Digital interventions in mental health: An overview and future perspectives, *Internet Interventions*, Volume 40, 100824 // <https://doi.org/10.1016/j.invent.2025.100824>
15. **Madigan, D., Gustafsson, H., Smith, A., Raedeke, T. & Hill, A.** (2019) The BASES expert statement on burnout in sport. In: *British Association of Sport and Exercise Sciences*, Issue 61, King Power Stadium, Leicester, UK. Retrieved Oct 19, 2025; URL: https://www.cases.org.uk/imgs/tses___issue_61_autumn_19_expert_statement_online__pages_579.pdf
16. **Martín-Rodríguez, A., Gostian-Ropotin, L. A., Beltrán-Velasco, A. I., Belando-Pedreño, N., Simón, J. A., López-Mora, C., et al.** (2024) Sporting Mind: The Interplay of Physical Activity and Psychological Health. *Sports (Basel)*, 12(1): 37. // <https://doi.org/10.3390/sports12010037>
17. **Maslach, C., & Leiter, M. P.** (2016) Understanding the Burnout Experience: Recent Research and Its Implications for Psychiatry. *World Psychiatry*, 15, 103-111. // <https://doi.org/10.1002/wps.20311>
18. **Matthew, J. S., Stewart, A. V., Christian, S.** (2021) Exploring the “clutch” in clutch performance: A qualitative investigation of the experience of pressure in successful performance, *Psychology of Sport and Exercise*, Volume 54, 101889 // <https://doi.org/10.1016/j.psychsport.2021.101889>
19. **Nicholls, A. R., et al.** (2022) Multi-wave analyses of coping, athlete burnout, and wellbeing. *Frontiers in Psychology*. Volume 13. // <https://doi.org/10.3389/fpsyg.2022.979486>
20. **Park, I., Jeon, J.** (2023) Psychological Skills Training for Athletes in Sports: Web of Science Bibliometric Analysis. *Healthcare (Basel)*, 11 (2), p. 259. // <https://doi.org/10.3390/healthcare11020259>
21. **Pedraza-Ramirez, I., et al.** (2025) The psychology of esports: trends and challenges. *Psychology of Sport and Exercise*, Volume 81, 102967. // <https://doi.org/10.1016/j.psychsport.2025.102967>
22. **Tranaeus, U., et al.** (2024) 50 Years of Research on the Psychology of Sport Injury. *Sports Medicine*, Volume 54, 1733-1748. // <https://doi.org/10.1007/s40279-024-02045-w>
23. **Wang, W., et al.** (2025) Psychological interventions to improve elite athlete mental wellbeing. *Sports Medicine*, 55: 877-897 // <https://doi.org/10.1007/s40279-024-02173-3>

24. **Weiß, M., Büttner, M., & Richlan, F.** (2024) The Role of Sport Psychology in Injury Prevention and Rehabilitation in Junior Athletes. *Behavioral Sciences*, 14 (3), 254 // <https://doi.org/10.3390/bs14030254>
25. **Weller, J. N.** (2020) Systemic barriers and facilitators of help-seeking and highly performing individuals in business and sports, Theses and Dissertations. 1183. Retrieved Oct 23, 2025. URL: <https://digitalcommons.pepperdine.edu/etd/1183>
26. **Wilczyńska, D., et al.** (2022) Burnout and mental interventions among youth athletes. *Int. J. Environ. Res. Public Health*, 19 (17), 10662. // <https://doi.org/10.3390/ijerph191710662>
27. **World Health Organization**, Mental Health. Retrieved Sep 23, 2025. URL: <https://www.who.int/news-room/fact-sheets/detail/mental-health-strengthening-our-response>

SCIENTIFIC PERSPECTIVES ON CONTEMPORARY CHALLENGES IN PSYCHOLOGICAL SUPPORT IN SPORT

The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project N° 25RG-5A146)

H. M. Avanesyan, S. V. Hovhannisyan,
Yerevan State University, Yerevan, Armenia

ABSTRACT

Key words: sport, psychological support, contemporary challenges, scientific trends, barriers, prospects.

Research Relevance. A review of the literature on the implementation of psychological support in sport indicates that contemporary approaches increasingly emphasize multicomponent models, including routine psychological screening combined with stepwise support, integrated multidisciplinary teams of specialists, short-term and scalable psychological training programs, and context-adapted digital interventions. Although many of these interventions demonstrate promising outcomes, there remains a notable shortage of high-quality studies employing randomized designs with samples of actively competing athletes.

Research Aim. Based on a comprehensive analysis of psychological theories, methodological approaches, and international experience, the aim of this study is to highlight contemporary issues in psychological support in sport, to identify conceptual

models of psychological support applied across different sports, and to determine current scientific trends and prospects for its further development and improvement.

Research Methods and Organization. The study employed theoretical, comparative, and substantive meta-analytical methods. A systemic approach was adopted, whereby psychological support was examined as an integral component of a multifactorial system within the sporting environment. In addition, a modeling approach was applied with the objective of developing a potential structural model of psychological support in sport.

Research Results Analysis. The findings address key issues, including the assessment and prevention of emotional burnout among athletes, the development of self-regulation skills, and the formation of sustainable achievement motivation. Identified contemporary challenges include the influence of digitalization and social media on athletes' identity and self-esteem, the increased risk of anxiety and depressive symptoms, and the necessity of integrating psychological methods more effectively into the sports training process.

Conclusion. The application of psychodiagnostic tools and mental training technologies to enhance athletic performance and competitiveness is becoming an increasingly relevant area of sport science and practice. The integration of psychological interventions, continuous monitoring, digital technologies, and personality-centered approaches is shaping a modern model of psychological support in sport, aimed at promoting health, sustainable development, and overall well-being of all participants in the sporting process.

НАУЧНЫЕ АСПЕКТЫ СОВРЕМЕННЫХ ВЫЗОВОВ ПСИХОЛОГИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ В СПОРТЕ

Исследование выполнено при поддержке Комитета по высшему образованию и науке МОН РА (научный проект № 25RG-5A146)

*Г. М. Аванесян, С. В. Оганесян,
Ереванский государственный университет, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова: спорт, психологическая поддержка, современные вызовы, научные тенденции, препятствия, перспективы.

Актуальность исследования: анализ литературы по проблеме реализации психологического обеспечения в спорте показывает, что сегодня особое внимание уделяется многокомпонентным подходам: рутинный скрининг в сочетании с поэтапной поддержкой; интегрированные мультидисциплинарные команды специалистов, краткосрочные масштабируемые психологические тренинги, адаптированные к контексту цифровых вмешательств. И хотя многие вмешательства показывают многообещающие результаты, по-прежнему наблюдается дефицит качественных исследований с рандомизированной выборкой действующих спортсменов.

Цель исследования: на основе общего анализа психологических теорий, методологических подходов и международного опыта осветить современные проблемы психологического обеспечения в спорте, выявить концепцию психологического обеспечения, оказываемого в различных видах спорта, а также научные тенденции и перспективы его совершенствования.

Методы и организация исследования: проведены теоретический, сравнительный и содержательный метаанализы. Предпочтение отдано системному подходу, то есть психологическое обеспечение рассматривалось как часть многофакторной системы в спортивной среде, а на заключительном этапе применен модельный подход, в рамках которого предпринята попытка формирования возможной структурной модели психологического обеспечения.

Анализ результатов исследования: обобщения исследования охватывают такие ключевые вопросы, как оценка и профилактика эмоционального выгорания у спортсменов; развитие навыков саморегуляции; формирование устойчивой мотивации достижения. К современным вызовам относятся влияние цифровизации и социальных сетей на идентичность и самооценку спортсмена, рост рисков развития тревожных, депрессивных состояний, а также необходимость интеграции психологических методов в систему спортивной подготовки.

Краткие выводы: использование технологий психодиагностики и ментального тренинга для улучшения состояния спортсмена и повышения конкурентоспособности становится актуальным направлением, а сочетание психологической практики, мониторинга, цифровых технологий и личностно-центрированных подходов формирует современную модель психологического

сопровождения спорта, которая направлена на сохранение здоровья, устойчивое развитие и благополучие всех участников спортивного процесса.

Տեղեկություններ հեղինակների մասին

Հրանտ Միքայելի Ավանեսյան՝ հ.գ.դ., պրոֆեսոր, Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ, ԵՊՀ, Երևան, Հայաստան, E.mail: avanesyanh@ysu.am
ORCID: 0000-0002-5987-7830

Սահակ Վիուլի Հովհաննիսյան՝ մ.գ.թ., Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ, Երևան, Հայաստան, E.mail: s.hovhannisyan@ysu.am
ORCID: 0000-0002-4733-322X

Information about the authors

Hrant Michael Avanesyan, Doctor of Psychology, Professor, Head, Chair of General Psychology, YSU, Yerevan, Armenia, E-mail: avanesyanh@ysu.am
ORCID: 0000-0002-5987-7830

Sahak Viul Hovhannisyan, PhD, Associate Professor, Chair of General Psychology, YSU, Yerevan, Armenia, E-mail: s.hovhannisyan@ysu.am
ORCID: 0000-0002-4733-322X

Հոդվածն ընդունվել է 28.10.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 29.10.2025–ին:

Գրախոս՝ հ.գ.թ., պրոֆեսոր Հ. Բաբայան

ՀՏԴ. 796.814

DOI: 10.53068/25792997-2025.3.16-31

**ԿԻՆ ՍԱՄԲԻՍՏՆԵՐԻ ՆԱԽԱՎԱՐԺԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՄՐՑԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

*Ի. Լ. Բաղդասարյան, Ք.Մ. Նաջարյան, Վ.Վ. Գրիգորյան,
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

Առանցային բառեր: Սամբո, գոտեմարտ, առանձնահատկություններ, կանայք, նախավարժանք, մրցումներ:

Հետազոտության արդիականություն: Ինպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում ըմբշամարտի տարբեր ձևերում կանայք նույնպես ունեցել են իրենց ներդրումը ըմբշամարտի զարգացման գործում [2]:

1991 թվականից սկսած՝ Հայաստանի աղջիկների սամբո և ձյուդո հավաքականը բազմիցս մասնակցել է Աշխարհի և Եվրոպայի առաջնությունների և գրավել մրցանակային տեղեր [1]:

Մրցակցական գոտեմարտերում գնալով պայքարը և լարվածությունը պարբերաբար աճում են: Այս հանգամանքը համառորեն պահանջում է սպորտային մարզման մեթոդիկայի կատարելագործում և սպորտային արդյունքների բարձրացման նոր մեթոդների և միջոցների որոնում: Մարզիկների սպորտային մենամարտի մեկնարկի լիարժեք պատրաստման կարևոր խնդիրներից մեկը համարվում է ներգրավիչ նախավարժանքը:

Նախավարժանքի ազդեցությունը լիարժեք կլինի այն ժամանակ, եթե այն ապահովի օրգանիզմի լիարժեք տաքացումը և շարժողական գործողությունները: Այդ պատճառով սպորտային պրակտիկայում նախավարժանքը կազմված է երկու մասից՝ ընդհանուր և հատուկ [3,6]:

Մրցումների ընթացքում գոտեմարտերի նախապատրաստման հիմնական միջոցը համարվում է նախավարժանքը, որն ապահովում է մրցակցական մեկնարկի անմիջական պատրաստությունը:

Մրցումներից առաջ կատարվող նախավարժանքը նպաստում է օրգանիզմի նախապատրաստմանը առաջիկա հիմնական աշխատանքին, որը զուգակցվում է հենաշարժողական համակարգի մեծ բեռնվածությամբ [5]:

Նախավարժանքի տևողությունը բնորոշվում է մարզաձևով, եղանակային պայմաններով, մարզիկի անհատական առանձնահատկություններով, նախավարժանքի տևողությամբ [4]:

Այսպիսով՝ մեկնարկային նախավարժանքի կառուցվածքի, բովանդակության, տևողության և լարվածության գիտական հիմնավորումը, ինչպես նաև կին սամբիստների անհատական առանձնահատկությունների հաշվառումը համարվում են ժամանակակից սամբոյի հրատապ հիմնահարցերից մեկը:

Հետազոտության նպատակը:

Ուսումնասիրել կին սամբիստների մրցակցական նախավարժանքի առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրները:

Հետազոտության նպատակի իրականացման համար աշխատանքում դրվել և հերթականությամբ լուծվել են հետևյալ խնդիրները.

1. Կանանց սամբոյի տեսության և պրակտիկայի տվյալների հիման վրա որոշել (ճշտել) մրցակցական նախավարժանքի կառուցվածքը և բովանդակությունը:

2. Որոշել նախավարժանքի միջոցները և դրանց ներգործությունը սամբիստների ֆիզիկական պատրաստության վրա:

3. Հաշվի առնելով կին սամբիստների անհատական առանձնահատկությունները՝ հիմնավորել նրանց նախամեկնարկային նախավարժանքի մեթոդիկան:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության խնդիրների լուծման համար

օգտագործել ենք հետևյալ մեթոդները՝ գիտամեթոդական գրական աղբյուրների ուսումնասիրություն, վերլուծություն և ընդհանրացում, սոցիոլոգիական հարցում, մանկավարժական դիտումներ և զրույց, մաթեմատիկական վիճակագրություն:

Մանկավարժական դիտումները կազմակերպվել են Երևան քաղաքի սամբոյի և ձյուդոյի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցում և Աբովյան քաղաքի սամբոյի մարզադպրոցում, որին մասնակցել են 15 մարզիչներ, որոնց մարզչական ստաժը տատանվում է 10-20 տարի, 10 բարձրակարգ կին սամբիստներ և 15 մարզուհիներ:

Հետազոտության արդյունքների վերլուծություն:

Ակնհայտ է, որ սպորտային գործունեությունն ընթացում է լարված և անսպասելիորեն փոփոխվող բարդ պայմաններում, որը մարզիկից պահանջում է նախնական բարձր պատրաստվածություն, որտեղ նախավարժանքը կարևոր գործոն է:

Նախավարժանքը մկանային նախնական ֆիզիկական աշխատանքն է, որը մարզիկի օրգանիզմը նախապատրաստում է մարզապարապմունքի կամ մրցակցական այս կամ այն գործունեության լիարժեք կատարմանը [7]: Այսինքն՝ նախավարժանքի գլխավոր խնդիրն է, որ մարզիկը տարբեր ֆիզիկական վարժությունների և

օժանդակ միջոցների օգնությամբ կարողանա իր օրգանիզմի բոլոր համակարգերը նախապատրաստել առաջիկա տարբեր ֆիզիկական բեռնվածությանը [5]:

Նախավարժանքի տևողությունը և ինտենսիվությունը կարող են տարբեր լինել՝ 10, 15, 30 րոպե և հիմնականում պայմանավորված է պարապմունքի տևողությամբ:

Բազմաթիվ հետազոտություններ փաստել են, որ նախավարժանքն էական ազդեցություն ունի տարբեր մարզածներում մարզական արդյունքների բարձրացման գործում [3,6]:

Կախված նախավարժանքի բնույթից և մարզաձևի յուրահատկությունից՝ այդ բարձրացումը կարող է կազմել 1-2% -ից մինչև 7% և ավելի: Նախավարժանքի բացակայությունը ավելացնում է վնասվածքների հավանականությունը, վտանգավոր է նաև սրտի աշխատանքի համար [5]:

Այդ հիմնախնդրում որոշ պարզաբանումներ մտցնելու նպատակով հանրապետության սամբոյի առաջատար մարզիչների և մարզուհիների շրջանում իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն:

Հետազոտության մեթոդիկայի հիմնավորման նպատակով նախ մարզիչների և մարզուհիների հետ կազմակերպվել է զրույց, այնուհետև՝ 18

հարցից բաղկացած հարցաթերթիկային հետազոտություն, որտեղ ընդգրկվել են բաց և փակ հարցեր:

Սոցիոլոգիական հարցմանը մասնակցել են սամբոյի 15 մարզիչներ, որոնց մարզչական ստաժը տատանվում է 10-20 տարի, 10 բարձրակարգ կին սամբիստներ և 15 մարզուհիներ:

Հարցվողների մեջ եղել են եվրոպայի, աշխարհի, հանրապետության չեմպիոններ և մրցանակակիրներ և միջազգային կարգի սպորտի վարպետներ: Սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծության օգնությամբ հաջողվել է սահմանել հետևյալը՝ թե մարզիչները, և թե մարզուհիները միանշանակ դրական կարծիք են հայտնել մարզումներից և մրցումներից առաջ լիարժեք և պարտադիր նախավարժանքի կատարման անհրաժեշտության մասին:

Կին սամբիստների հետ զրույցից պարզ դարձավ, որ մարզումներից և մրցումներից առաջ մարզուհիները կարևորում են թե ընդհանուր, և թե հատուկ նախավարժանքների ճիշտ համակցումը, որը բերում է օպտիմալ արդյունքի:

Ընդ որում՝ յուրաքանչյուր տասներորդ հարցվող մարզիչ և մարզուհի ընդգծել են, որ սկզբունքորեն նախավարժանքը մարզումներից և մրցումներից առաջ իրարից չեն տարբերվում:


Միևնույն ժամանակ մարզիչները (30,3%) և մարզուհիները (50,0%) առավելությունը տալիս են այն նախա-վարժանքին, որը համապատասխան է ընտրած մարզաձևի հետ:

Իրավացի են այն մասնագետները, որոնք նախավարժանքի հիմնական խնդիրը համարում են մկանային համա-կարգի և մյուս կարևոր օրգանների նա-խապատրաստումը սպասվելիք ֆիզի-կական աշխատանքին, որի բեռնվա-ծությունը կազմում են (70-80%) ոչ պակաս այն մկանները, որոնք մասնա-գիտական առումով կատարում են երկրորդական դեր, սակայն կրում են բեռնվածություն (12.0-20.0%):

Համաձայն մասնագետների կար-ծիքի՝ նախավարժանքի ընդհանուր մասն իր հերթին պետք է կազմված լինի օժանդակ մարզաձևերի վարժություն-ներից: Ըստ հարցման արդյունքների՝

նախավարժանքի ընթացքում նշված ընդհանուր զարգացնող վարժություն-ները և դրանց բաղադրամասերը պետք է կազմեն՝ 50.20%, իսկ հատուկ վար-ժությունները՝ 49,48%: Ընդհանուր զար-գացնող վարժություններում հատուկ տեղ են տրվում վազբերին (15,0%), մարմ-նամարզական (26.0%), ակրոբատիկա-կան (30,3%), խաղային վարժու-թյուններին (10%), (տրամագիր 1):


Այլ կերպ ասած՝ կոնկրետ վար-ժությունների ընտրությունը, ըստ մար-զիչների (68,4%) և մարզիկների (60,2%) կարծիքի, անմիջականորեն կախված է ընտրած մարզաձևի առանձնահատ-կություններից: Ընդ որում՝ ընդգրկված է նաև կոնկրետ վարժության կրկնու-թյունների քանակը: Հարցվողների տվյալներով՝ առավել արդյունավետ է համարվում 10 կրկնությունը (37.4-48.0%):




Տրամագիր 1. Սամբիսյունների նախավարժանքում կիրառվող ընդհանուր նախապատրաստական վարժություններ

Սոցիոլոգիական հարցմանը մասնակցած մարզիչները և մարզուհիները հատուկ նախավարժանքի ժամանակ որոշ առավելություն են տվել սամբիստի ապահովումներին, ինքնապահովումներին, զույգերով և առանց զույգերի կատարվող մասնագիտական

մյուս վարժություններին և խրտվիլակի գցումներին: Մարզուհիների կարծիքները միանման են պարանոցի ճոճումների, պայմանական գոտեմարտերի և գործիքներով կատարված ուժային և ճկունության վարժությունների վերաբերյալ (տրամագիր 2):



Տրամագիր 2. Մարզուհիների հարուկ նախավարժանք



Տրամագիր 3. Նախավարժանքի ժամանակ մարզաձևի և որոշ գործոնների առանձնահատկությունները

Մասնագետները համակարծիք են նաև, որ նախավարժանքի իրականացնելիս հաշվի առնվեն մարզաձևի նախամեկնարկային նախավարժանքը,

որը կազմակերպվում է մարզուհիների անհատական առանձնահատկությունների հիման վրա:

Ընդ որում՝ դրա բովանդակությունը պայմանավորված է մի շարք գործոններով մարզուհիների պատրաստության աստիճանով (13%), բնակլիմայական պայմաններով (9%), մարզման շրջանով (11%), այլ գործոնների առումով (13%) և մարզման ընթացքում լուծվող խնդիրների առանձնահատկություններով (40 %) (տրամագիր 3):

Հետաքրքիր են մարզիչների և մարզուհիների կարծիքները նախաձարժանքի տևողության վերաբերյալ: Ստացված արդյունքների վերլուծությունը վկայում է այն մասին, որ այն կարող է շարունակել 10-ից մինչև 40 րոպե, և երբեմն մինչև 50 րոպե: Այդպիսի կարծիքի են մարզիչների 32%-ը և մարզուհիների 25%-ը:

Ակնհայտ է այն, որ սոցիոլոգիական հարցմանը մասնակցած փորձագետների երկու խմբերն էլ գտնում են, որ նախաձարժանքի հիմնական միջոցներ են համարվում ֆիզիկական տարբեր վարժությունները, որոնք չի կարելի փոխարինել ոչ օրգանիզմի արհեստական և պարզ տաքացմամբ ոչ էլ հոգեբանական ներշնչանքով (100 % դեպքեր) [8]:

Հետևաբար, թերի և ոչ հատուկ անցկացված նախաձարժանքը բացասաբար է ազդում մարզիկի աշխատունակության և արդյունքի որակի (84.4-90.1%), հոգեբանական պատրաստության վրա (82,2-83,3%), դրանց թերի

կատարումը բերում է տարբեր վնասվածքների (100% դեպքերում):

Հետաքրքիր է նաև, որ նախաձարժանքի տարբեր գործոններից են մարզուհիների պարապմունքի հիմնական մասին անցնելու և պատրաստ լինելու ցուցանիշը (32.0-42.5%), սրտի կծկումների օպտիմալ հաճախականության առկայությունը (19-30%), քրտնարտադրությունը (3,8-18,7%), հոգնածության ոչ մեծ աստիճանը (8,5): Դրա հետ կապված մարզիչների 91.8%-ը և մարզուհիների 55.5%-ը խոսում են նախաձարժանքի անհատականացման և 10-15 րոպեի ընթացքում (18,8-24,1%) պարապմունքի հիմնական մասի օպտիմալ պատրաստվածության օգտին:

Այսպիսով՝ սոցիոլոգիական հարցման արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ մասնագետների կարծիքով մարզումը (նախաձարժանքը) համարվում է մարզական գործընթացի առաջատար գործոն: Հարցվողների առաջադրված հարցերի համաձայն՝ մարզիչների և մարզուհիների կարծիքները հիմնականում համընկնում են: Եվ, վերջապես, նախաձարժանքը և դրա բովանդակությունը պայմանավորված են կոնկրետ մարզաձևի առանձնահատկություններով:

Եզրակացություն: Հանրապետության մարզիչների, բարձրակարգ կին սամբիստների և մարզուհիների հետ կազմակերպված սոցիոլոգիական

հետազոտությունների արդյունքների, անձնական դիտումների, գիտամեթոդական գրական աղբյուրների ուսումնասիրության արդյունքների վերլուծություններից հանգում ենք հետևյալ ընդհանրացումների.

1. Նախամեկնարկային նախավարժանքի ժամանակ կտրուկ նվազում է ընդհանուր զարգացնող վարժությունների քանակը:

2. Նախամեկնարկային նախավարժանքը կազմակերպվում է մարզուհիների անհատական առանձնահատկությունների հիման վրա:

3. Սոցիոլոգիական հետազոտության նյութերի հիման վրա պարզ է դառնում, որ մարզումային և մրցակցական գոտեմարտի նախավարժանքների միջև կապեր ստեղծելու միջոցով հնարավոր է օպտիմալացնել մարզիկների օրգանիզմի նախապատրաստման գործընթացը:

4. Անձնական փորձի և կին սամբիստների հետ զրույցից պարզ դարձավ, որ գոտեմարտերից առաջ մարզուհիները կարևորում են թե ընդհանուր, և թե հատուկ նախավարժանքների ճիշտ համակցումը, որը բերում է առավելագույն արդյունքի:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայրապետյան Լ.Մ., Սամբո. կյանքիս ճանապարհը, Գիրք, Երևան, 2018, էջ 15-17:
2. Առաքելյան Վ.Բ., Սադյան Բ.Զ., Սամբո ըմբշամարտ, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2007, 309 էջ:
3. Ղազարյան Ֆ.,Գ, Սպորտային պատրաստության տեսություն և մեթոդիկա, Դասախոսությունների դասընթաց, Երևան, 2011, 188 էջ:
4. Ղազարյան Ֆ.Գ., Պատանի մարզիկների պատրաստության հիմունքները, Ձեռնարկ դպրոցի ուսուցիչների համար, Լոյս, 1988, 104 էջ:
5. Աբրահամյան Մ. Ս., Աբելյան Վ.Մ., Ղազարյան Ա.Ղ., Ծանրորդուհիների նախավարժանքի և բեռնվաճության առանձնահատկությունները, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2012, 44 էջ:
6. Матвеев Л.П., Теория и методика физической культуры -М., ФиС.-1991.
7. Верхованский Ю.В.. "Основы специальной физической подготовки спортсменов» 2-е Изд. -М,- Совет. спорт, 2021.- 337 ст.
8. Башкиров В.Ф, Возникновение и лечение травм у спортсменов Изд. Физкультура и спорт, М., 1981. 224 с.

PRE-COMPETITION TRAINING CHARACTERISTICS OF FEMALE SAMBO ATHLETES

*L. Baghdasaryan, Ch. M. Najarian, V.V. Grigoryan,
Armenia State Institute of Physical Culture
and Sport, Yerevan, Armenia*

ABSTRACT

Key words: sambo, wrestling, characteristics, women, training, competitions

Research Relevance. Women have made a significant contribution to the development of wrestling in its various forms, both in Armenia and internationally. Since 1991, women's sambo and judo teams have regularly participated in World and European Championships, achieving notable competitive success and winning prize places. This progress has highlighted the growing importance of scientifically grounded training systems tailored to the specific characteristics of female athletes, particularly in combat sports such as sambo.

Research Aim. To study the characteristics of competitive pre-training in female sambo wrestlers.

Research Methods and Organization. To address the research objectives, the following methods were applied: study, analysis, and generalization of scientific and methodological literature; sociological survey; pedagogical observation and interviews; and mathematical-statistical analysis. Pedagogical observations were conducted at the Yerevan Sambo and Judo Olympic Children and Youth Sports School and the Abovyan Sambo Sports School. The research involved 15 coaches with coaching experience ranging from 10 to 20 years, 10 highly qualified female sambo wrestlers, and 15 female athletes.

Analysis of Research Results. The study confirmed that the primary objective of pre-training is to ensure that the athlete, through the use of various physical exercises and auxiliary means, adequately prepares all physiological systems of the body for forthcoming physical loads of varying intensity. As training and competitive pre-training in women's sambo do not differ substantially in terms of exercise intensity and volume, the results demonstrated that athletes typically perform a short-duration but highly intensive pre-training session immediately before sambo competitions.

Conclusion. Based on the analysis of sociological survey data, competition results, personal pedagogical observations, and the study of scientific literature involving 20

coaches and an equal number of athletes from the republic, the following generalization can be made: The findings of the sociological research indicate that establishing effective links between training exercises and competitive pre-training activities contributes to the optimization of athletes' physiological readiness and enhances the overall effectiveness of the preparation process.

ОСОБЕННОСТИ ПРЕДВАРИТЕЛЬНОЙ ПОДГОТОВКИ ЖЕНЩИН-САМБИСТОК В ПЕРИОД СОРЕВНОВАНИЙ

*И.Л. Багдасарян, К.М. Наджарян, В.В. Григорян,
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова: слова, самбо, борьба, особенности, женщины, подготовка, соревнования

Актуальность исследования: Как в мире, так и в Армении женщины также внесли свой вклад в развитие борьбы в различных ее проявлениях. Начиная с 1991 года сборная команда девушек по самбо и дзюдо неоднократно принимала участие в чемпионатах мира и Европы и занимала призовые места.

Цель исследования: Изучить особенности разминки предсоревновательной подготовки самбисток.

Методы и организация исследования: Для решения задач исследования использовались следующие методы: изучение, анализ и обобщение научно-методических литературных источников, социологический опрос, педагогические наблюдения и интервью, математическая статистика. Педагогические наблюдения были организованы в Ереванской олимпийской детско-юношеской спортивной школе самбо и дзюдо, а также спортивной школе самбо г.Абовяна, в которых приняли участие 15 тренеров со стажем тренерской работы от 10 до 20 лет, 10 самбисток высокого уровня и 15 спортсменок..

Анализ результатов исследования. Проведенные исследования позволили подтвердить, что основная задача предтренировочной подготовки заключается в том, чтобы спортсмен с помощью различных физических упражнений и вспомогательных средств мог подготовить все системы своего организма к предстоящим различным физическим нагрузкам. Поскольку в принципе

тренировочная и соревновательная подготовка в женском самбо мало различаются по интенсивности и объему используемых упражнений, результаты исследования показали, что перед поединком по борьбе в самбо спортсменки проводят кратковременную, но интенсивную предсоревновательную подготовку.

Краткие выводы: Из анализа результатов социологического исследования, результатов личных наблюдений и изучения литературных источников, организованных с 20 тренерами и таким же количеством спортсменов республики, приходим к следующим обобщениям: 1. На основании социологического исследования становится ясно, что путем создания связей между тренировочными и предсоревновательными упражнениями по борьбе можно оптимизировать процесс подготовки организма спортсменов.

Տեղեկություններ հեղինակների մասին

Իրինա Լալազարի Բաղդասարյան՝ Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: irina.baghdasaryan@sportedu.am

Քրիստինե Մանվելի Նաջարյան՝ Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: kristine.najaryan@sportedu.am

Վարսիկ Վազգենի Գրիգորյան՝ Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: varsik.grigoryan@sportedu.am

Information about the authors

Irina Lalazari Baghdasaryan, Associate Professor of the Department of Wrestling and Oriental Sportsճ Armenia State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia, E-mail: irina.baghdasaryan@sportedu.am

Christine Manveli Najarian, Associate Professor of the Department of Wrestling and Oriental Sportsճ State Institute of Physical Culture and Sports of Armenia, Yerevan, Armenia, E.mail: kristine.najaryan@sportedu.am

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆՆԴԻՐՆԵՐ 2025 N°3 (16)

Varsik Vazgeni Grigoryan, Lecturer of the Chair of Wrestling and Oriental Sports,
Armenia State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia,
E.mail: varsik.grigoryan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 04.09.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 05.09.2025–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Չատինյան

**11-13 ՏԱՐԵԿԱՆ ԱԿՐՈՔԱՏՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Ս.Գ. Խաչատրյան, Ս.Ա. Հակոբյան,
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

Առանցքային բառեր: Դեռահաս
ակրոբատներ, տարիք, ֆիզիկական
պատրաստվածություն, շարժողական
ընդունակություն:

Հետազոտության արդիականություն: Հայտնի է, որ սպորտային
ակրոբատիկայում առավել կարևորվում
է մարզիկների ֆիզիկական պատրաստ-
վածության աստիճանը, ինչի վերաբեր-
յալ շարունակվում են կատարվել հետա-
զոտություններ, քանի որ վերջինիս մա-
կարդակով է պայմանավորված մրցակ-
ցական գործունեության արդյունավե-
տությունը [1, 5, 7, 9, 11, 15]:

Հենց այս դրույթն է ընդգծում
սպորտային ակրոբատիկայում ֆիզի-
կական պատրաստվածության շարու-
նակական ուսումնասիրության արդիա-
կանությունը:

Մյուս կողմից, նշված հարցերն
առավել արդիականացվում են մար-
զումների ուսուցման սկզբնական փու-
լում, ուր դրվում են մարզիկների հիմնա-
րար պատրաստության հարցերն ու
շարժողական ներուժի հետագա կատա-
րելագործման հիմունքները [5, 9, 11, 13]:

Միննույն ժամանակ հարկ է
դիտարկել, որ ժամանակակից սպոր-
տում տեղի ունեցող փոփոխությունները
նորովի մոտեցումներ են պահանջում
մարզիկների ֆիզիկական պատրաս-
տության գործընթացում [3, 4, 8, 10, 12]:

Հարկ է նշել, որ սպորտային
ակրոբատիկայում և հատկապես հան-
րապետությունում որոշ չափով ուշադ-
րությունից դուրս են մնում դեռահաս
ակրոբատների պատրաստվածության
առանձնահատկությունների ուսումնա-
սիրությունները, մասնավորապես՝ ֆի-
զիկական պատրաստության ուղղվա-
ծությամբ [6, 7, 14]:

Հենց այդ պատճառով էլ սույն հե-
տազոտությունն ընդգծում է հիմնա-
հարցի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է՝
բացահայտել դեռահաս ակրոբատների
ֆիզիկական պատրաստվածության ա-
ռանձնահատկությունները:

**Հետազոտության խնդիրներն
են.**

1. Անցկացնել սոցիոլոգիական
հարցում սպորտային ակրոբատիկայի
մարզիչների շրջանում:

2. Կատարել դեռահաս ակրոբատների և նրանց հասակակից դպրոցականների ֆիզիկական պատրաստվածության մակարդակի թեստավորում:


Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության մեթոդներն են՝ հիմնահարցի վիճակի պատմա-տեսական վերլուծություն, սոցիոլոգիական հարցում, մանկավարժական թեստավորում, փորձագիտական գնահատում, մաթեմատիկական վիճակագրություն:

Հետազոտության կազմակերպումը: Քննարկվող հիմնախնդրի բացահայտման համար 2025 թվականի մարտ-մայիս ամիսներին կազմակերպվել են հետազոտություններ Կապանի մարմնամարզության մանկապատանեկան, Գյումրու մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան և Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցների սպորտային ակրոբատիկայի 56 մարզիչների, 129 մարզիկների և Կապանի 10 հիմնական ու Երևանի Դավիթ Հովսեփյանի անվան 191 հիմնական դպրոցների 138 աշակերտների շրջանում:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Դեռահաս ակրոբատների ֆիզիկական պատրաստվածության բավարար մակարդակի ապահովման համար մեծ է մարզիչների դերը, ուստի, հարկ է համարվել առաջին հերթին անցկացնել սոցիոլոգիական հարցում՝ բացահայտելու մարզիկների ֆիզիկական պատրաստվածության մակարդակի ապահովման հնարավոր պայմաններն ու առանձնահատկությունները:

Հայտնի է, որ մարզաձևի առանձնահատկությունից ելնելով՝ ակրոբատիկայում ընդունելությունը կատարվում է 5-6 տարեկանից, ուստի անհրաժեշտ էր պարզաբանումներ կատարել մարզիկների նեղ մասնագիտացման և առաջին մրցումներին մասնակցելու ուղղությամբ [1, 5, 7, 15]:

Մարզիչների 87.5%-ի հաստատմամբ սկսնակ ակրոբատների ընդհանուր ֆիզիկական պատրաստվածության մակարդակը 1-2 տարի հետո թույլ է տալիս անցնել նեղ մասնագիտացման և մասնակցել մրցումների (տրամագիր 1): Սակայն բացառիկ դեպքերում ոմանք նույնիսկ 2-4 ամիս հետո մասնակցում են մրցումների:



Տրամագիր 1. Ակրորբարների նեղ մասնագիտացումն ու մրցակցական գործունեությունը

Հարկ է դիտարկել, որ քննարկվող 11-13 տարեկանները դասակարգվում են սպորտային ակրորբատիկայի երկու կարգերի միջև՝ «առաջին մեծահասակներ (8-14տ.)» և «սպորտի վարպետի թեկնածուներ (11-16տ.)»: Բայց երկու դեպքում էլ ակրորբատներից շատերը մինչև նշված կարգերի սահմանային տարիքը, արդեն իսկ սկսում են մարզվել այդ կարգերի ծրագրերով, ինչը վկայում է ֆիզիկական մեծ բեռնվածությամբ պարապմունքների մասին [5, 6, 11, 13]:

Վերոնշյալը վկայում է, որ դեռևս շատ վաղ տարիքից, նույնիսկ սկսնակների մոտ պահանջվում է ապահովել ֆիզիկական պատրաստվածության բավարար մակարդակ:


Ինչ վերաբերում է ակրորբատների բեռնվածության չափավորմանը, ապա հարցվողների գերակշռող տոկոսի կարծիքները միանման են այլ մարզածներում գոյություն ունեցող հետազոտողների հետ [1, 4, 8, 10, 11, 12] (տրամագիր 2):



Տրամագիր 2. Ակրորբարների ֆիզիկական բեռնվածության չափավորման առանձնահատկությունները

Հետազոտության խնդիրներից ելնելով՝ հետաքրքիր էր պարզել նաև այն պատճառները, որոնց հետևանքով

ակրորբատները դադարում են մարզվել: (տրամագիր 3):



Տրամագիր 3. Մարզական գործունեությանը խոչընդոտող պատճառները

Ըստ հարցվող մարզիչների՝ առանձնակի ուշադրության են արժանացել դեռահասության անցումային շրջանի խնդիրները (87%), մարզահավաքների (95.9) և մրցումների քանակը (66.3%), ինչպես նաև առողջական խնդիրներն (70.1%) ու մարզիկների ցածր ֆիզիկական պատրաստությունը (88.4%):

Սակայն հարկ է դիտարկել, որ մարզումներն ունեն դրական ազդեցություն տղաների և աղջիկների կենսական և սոցիալական գործունեության վրա, ինչը վկայում են նաև սույն հարցման մարզիչները (աշխատանքային գործունեություն՝ 86%, սոցիալականացում՝ 74.2%, ընդհանուր ֆիզիկական պատրաստության բարելավում՝ 100%,

կեցվածքի ձևավորում՝ 96.2%, ապագա մայրության՝ 85.6% և նախնական զինվորական պատրաստության նախապատրասում՝ 74.8%):

Կարևոր էր պարզել նաև մարզիչների կողմից բոլոր այն առաջարկները, որոնք կխթանեն դեռահաս ակրորատների ֆիզիկական պատրաստվածությանն ու մրցակցական գործընթացի բարելավմանը: Առաջադրված տարբերակներից (հաճախակի հավաքների և մրցումների կազմակերպում, սպորտային հոգեբանի առկայություն), որպես լավագույն պայման, առանձնացվել է այլ երկրներում հավաքների ու մրցումների մասնակցությունը:

Մարզիչների հարցումը վկայում է սպորտային ակրոբատների ֆիզիկական պատրաստվածության բարձր մակարդակի ապահովման կարևորությունը նույնիսկ սկսնակ մարզիկների շրջանում: Վերջինս ենթադրում է, որ սպորտային ակրոբատիկայով մարզվողների շարժողական ընդունակությունների մակարդակը պետք է բավական գերազանցի չմարզվող հասակակիցների ընդունակություններին: Ուստի, փորձ է կատարվել գնահատել մարզվող դեռահասների և նրանց հասակակից չմարզվող աշակերտների շարժողական ընդունակությունների մակարդակը մանկավարժական թեստավորման միջոցով:

Համաձայն գործող կանոնակարգի՝ առաջարկվել են ակրոբատիկա մարզաձևի առանձնահատկություններին բնորոշ հայտնի 3 թեստեր, որոնք ներառված են նաև հանրակրթական դպրոցների «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ և ծրագրում (տեղից հեռացատկ, թեքում առաջ, վեր ձգումներ՝ տղաներ, ձեռքերի ծալում (տարածում) պառկած հենված դիրքում՝ աղջիկներ) [2] և 1 մասնագիտական թեստ, որը նախատեսվել է միայն

ակրոբատների համար (երեք գլորում առաջ, երեք գլորում հետ):

Հարկ է նշել, որ թեստավորման ճշգրտության և օբյեկտիվության համար հատուկ ընտրվել են այն աշակերտները, որոնք երբևէ չեն մարզվել որևէ մարզաձևով: Վարժությունների կատարմանը տրվել է երեք հնարավորություն և գնահատվել է առավելագույն արդյունքը:

Հայտնի է, որ ակրոբատիկայում բոլոր մրցակցական համալիրներն ուղեկցվում են պարտադիր ցատկային վարժություններով [6, 11, 14]: Հետևաբար, անհնար է մասնակցել մրցումների՝ առանց տիրապետելու համապատասխան ցատկային հմտությունների: Այդ պատճառով, պարտադիր պայման է հանդիսացել որոշել 11-13 տարեկան ակրոբատների ցատկունակության մակարդակը և համեմատել դեռահաս դպրոցականների հետ (աղյուսակ 1):

Թեստավորման արդյունքում պարզվեց, որ միայն 11 տարեկան ակրոբատների և դպրոցականների արդյունքներում է գրանցվել հավաստի տարբերություն, մնացած տարիքային խմբերում մարզիկները զգալի գերազանցում են չմարզվողներին:

Աղյուսակ 1

11-13 փարեկան ակրոբատների և դպրոցականների շարժողական ընդունակությունների թեստավորման արդյունքների համեմատական վերլուծություն

N	Տարիք	Խմբեր	Հեռացատկ տեղից (սմ)			Թեքում առաջ (սմ)		
			$\bar{x} \pm m$	t	p%	$\bar{x} \pm m$	t	p%
1.	11 տ.	Ակրոբատներ	156.7±3.4	1.9	5	17.4±2.0	4.9	>0.1
		Դպրոցականներ	149.8±1.97			7.1±0.58		
2.	12 տ.	Ակրոբատներ	175.2 ±3.31	5.1	>0.1	13.8±1.01	5.9	>0.1
		Դպրոցականներ	159.8±1.76			6.9±0.59		
3.	13 տ.	Ակրոբատներ	183.6 ±2.6	4.6	>0.1	12.3 ±0.5	4.6	>0.1
		Դպրոցականներ	168.8±2.03			6.7±1.1		

Անհրաժեշտ է նշել, որ սպորտային ակրոբատիկայում հենքային շարժողական ընդունակություն է համարվում նաև ճկունությունը: Մարզումների առաջին իսկ օրվանից ակրոբատները կատարում են մեծ լայնույթով (ամպլիտուդով) ճկունության վարժություններ [3, 5, 7, 9, 15]: Հետևաբար, ճկունության թեստավորման համեմատական արդյունքները բավական բարձր են ակրոբատների շրջանում, սակայն, ըստ տարիքի զարգացման, տեմպերը նվազում են (աղյուսակ 1):

Ուշագրավ է ընդգծել այն հանգամանքը, որ սպորտային ակրոբատիկան

այն եզակի մարզաձևերից է, որտեղ զուգընկերն ամբողջովին կրում է պատասխանատվություն զույգի կյանքի և առողջության անվտանգության ապահովման համար [7, 10, 11]: Ուստի, ակրոբատիկայում մեծ նշանակություն ունի ուժային դիմացկունության գերազանց մշակումը: Այդ իսկ պատճառով էլ նկատելի տարբերություններ գրանցվել են նաև ուժային ընդունակությունների թեստավորման արդյունքում թե ակրոբատ տղաների, և թե աղջիկների շրջանում (աղյուսակ 2):

Աղյուսակ2

11-13 տարեկան ակրոբատների և դպրոցականների ուժային ընդունակության թեստավորման արդյունքների համեմեմերական վերլուծությունը (քանակ)

N	Տարիք	Խմբեր	Ձգում կախ դրությունից			Սեղմում հենում պատկաճ դրությունից		
			Տղաներ			Աղջիկներ		
			$\bar{x} \pm m$	t	p%	$\bar{x} \pm m$	t	p%
1.	11 տ.	Ակրոբատներ	4.4 ±0.2	4.4	>0.1	15.2±1.26	5.4	>0.1
		Դպրոցականներ	3.1±0.21			7.7±0.58		
2.	12 տ.	Ակրոբատներ	5.37±0.12	3.5	>0.1	16.8±0.82	3.8	>0.1
		Դպրոցականներ	4.3±0.3			11.8±1.01		
3.	13 տ.	Ակրոբատներ	5.96±0.16	6.1	>0.1	16.4±1.2	4.6	>0.1
		Դպրոցականներ	4.4±0.2			10.3±0.27		

Քննարկվող հետազոտությունը չէր կարող լիարժեք համարվել, առանց մասնագիտական վարժության թեստավորման, ինչը և իրականացվել է: Վարժության ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով նրա կարևորությունը բոլոր տարիքային խմբերում և պատրաստության մակարդակներում [1, 5, 11, 14]: Ակրոբատները մարզադպրոց ընդունվելու առաջին օրվանից մինչև մարզական գործունեության ավարտը կատարում են գլորում վարժությունը և

դրա առավել բարդ կոորդինացիոն ձևերը: Հենց այս պայմանն է հանդիսացել սույն վարժության ընտրության թեստավորման համար (աղյուսակ 3):

Գնահատող հանձնախմբում ներառվել են ակրոբատիկայի երեք փորձագետ, որոնց մասնագիտական վարպետությունը համապատասխանել է մրցավարական պահանջներին (ԽՍՀՄ սպորտի վարպետ, ՀՀ վաստակավոր մարզիչ, միջազգային կարգի մրցավար):

Աղյուսակ 3

11-13 տարեկան ակրոբատների 3 գլորում առաջ և 3 գլորում հետ վարժության թեստավորման գնահատումը (վայրկյան/ միավոր)

N	Տարիքային խմբեր	Վայրկյան	Միավոր
1.	11 տարեկան	06.1	5.0
2.	12 տարեկան	07.3	4.6
3.	13 տարեկան	06.4	4.8

Փորձագետները պայմանականորեն կազմել են «3 գլորում առաջ և 3 գլորում հետ» վարժության տեխնիկայի գնահատման «5» միավորանոց սանդղակ: Իսկ գնահատման հիմնական չափանիշներն են եղել տեխնիկայի կատարման արդյունավետությունը և ժամանակի տևողությունը: Վերջինս իրականացվել է վայրկենաչափի միջոցով: Գնահատման հիմքում պահպանվել է այն սկզբունքը, որ եթե արդյունքը «4.5» միավորից բարձր է, ապա գնահատվում է հոգուտ մարզիկի: Արդյունքում ակրոբատների բոլոր տարիքային խմբերում գրանցվել են գերազանց միավորներ: Ինչ վերաբերում է աշակերտներին, ապա, ելնելով մասնագիտական անհավասար պայմաններից, նրանք չեն մասնակցել վերոնշյալ թեստավորմանը:

Վերը արծածված հարցման և թեստավորման արդյունքում կարելի է

ընդգծել սպորտային ակրոբատիկա մարզաձևի դրական ազդեցությունը մարզիկների ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարելավման վրա:

Եզրակացություն: Այսպիսով՝ սույն աշխատանքի արդյունքում հիմնավորվեց՝ սիստեմատիկ մարզումների առավելությունները դեռահաս ակրոբատների մասնագիտական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության մակարդակի վրա՝ ի համեմատ չմարզվողների: Ըստ հարցվողների՝ բացահայտվեցին նաև մի շարք առաջարկություններ, այդ թվում՝ հավաքների և մրցումների կազմակերպման վերաբերյալ, որոնք կարող են բարելավել և կատարելագործել ակրոբատների ֆիզիկական պատրաստվածության մակարդակն ու մրցակցական գործընթացը:

▣ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գասպարյան Հ.Ս., Սկսնակ մարմնամարզիկների ընտրության մեթոդիկան, Թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2012, 115 էջ:
2. Գրիգորյան Յու.Գ., Մինասյան Հ.Ս., Հանրակրթական դպրոցի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ և ծրագիր 1-12 դասարաններ, Երևան, 2007, 139 էջ:
3. Ղազարյան Ֆ.Գ., Շարժողական ընդունակությունների բանաձևը, Հեղինակային հրատարակչություն, Երևան, 2015, 129 էջ:
4. Ղազարյան Ֆ.Գ., Պատանի մարզիկների պատրաստության հիմունքները, Երևան, Լույս, 1988, 103 էջ:
5. Սելումյան Ն.Վ., Սպորտային ակրոբատիկա, Ոստանական ձեռնարկ, Երևան, 2015, 129 էջ:
6. Սելումյան Ն.Վ., Ակրոբատիկական ցատկեր, Ոստանամեթոդական ձեռնարկ Մանկավարժ, Երևան, 1998, 34 էջ:
7. Սելումյան Ն.Վ., Ազարյան Ռ.Ն., Զուգային և խմբային ակրոբատիկա, մարմնամարզական բուրգեր, Մեթոդական ձեռնարկ, Մանկավարժ, Երևան, 1998, 34 էջ:
8. Борисенко О.В., Логинов С.И., Лубышева Л.И., Влияние стажа тренировочных занятий на морфофункциональные показатели и физическую подготовленность мальчиков–дзюдоистов 8–10 лет // Теория и практика физической культуры. 2013. – № 12. – С. 85–87.
9. Бураков Б.А., Техническая подготовка акробатов, учебное пособие для студентов,специализирующихся по акробатике и гимнастике.-М .: ГЦОЛИФК.1980.
10. Дубровская А.В., Дубровский В.И., Средства профилактики травм и заболеваний опорно-двигательного аппарата у спортсменов: Теория и практика физической культуры, №3, 2007, –С. 47–49
11. Дубовова А.А., Психологические ресурсы совершенствования подготовки юных акробатов-прыгунов на этапе начальной подготовки: Автореф. дисс..., к.п.н., Краснодар, 2015,-25с.
12. Котельникова Е.Б., Проектирование технической подготовки на основе учета объективных факторов качества выполнения прыжков художественной гимнастики , Ученые записки университета им. П.Ф. Лесгафта. – 2019.-N 7 (173).- с.121-125.

13. Квужнецова Л.П., Подготовка резерва высококвалифицированных акробатов на основе взаимодействия тренера с родителями спортсменов, дис. канд. пед. наук, Тула, 2011,-23 с.
14. Руденко С.А., Руденко Л.К., Особенности проявления стратегии и тактики в спортивной акробатике и прыжках на батуте, Культура физическая и здоровье, 2024, №1 (89). С. 324-331.
15. Тарасова А.В., Особенности специальной физической подготовки в женских парных акробатических составах, Перспективные направления научных исследований в XXI веке: Сборник научных трудов по материалам Международной научно-практической конференции, Белгород, 12 сентября 2023 года / Под общей редакцией Е.П. Ткачевой. – Белгород: Общество с ограниченной ответственностью «Агентство перспективных научных исследований», 2023. – С. 21-33.

CHARACTERISTICS OF PHYSICAL PREPAREDNESS IN 11–13-YEAR-OLD ACROBATS

*S.G. Khachatryan, S.A. Akobyan,
State Institute of Physical Culture and Sports
of Armenia, Yerevan, Armenia*

ABSTRACT

Keywords: adolescent acrobats, coaches, age, physical preparedness, motor abilities

Research Relevance. Physical preparedness is a fundamental component of the athletic training process, and this principle fully applies to sports acrobatics. However, while the physical preparedness of elite athletes has been extensively investigated, considerably less attention has been paid to adolescent athletes, particularly within the Armenian context. The limited availability of empirical data on the physical development and training characteristics of young acrobats highlights the relevance of the present study.

Research Aim. The aim of this study was to investigate the specific characteristics of physical preparedness in adolescent acrobats.

Research Objectives. The objectives of the study were to assess the level of physical preparedness in acrobats aged 11–13 years and to conduct a comparative analysis with non-athlete children of the same age group.

Research Methods and Organization. The study included acrobats, coaches, and schoolchildren from Yerevan and Kapan, with a total sample of 323 participants. Standardized assessments of physical preparedness and motor abilities were applied, followed by comparative and statistical analyses.

Research Results Analysis. The findings revealed distinct features of the training process in sports acrobatics. Positive age-related dynamics were observed in several specific motor abilities among young acrobats, as well as among their non-athlete peers. The results demonstrated the importance of 1–2 years of comprehensive, all-around training during early adolescence. Normative ranges for training loads and their effects on health status, physical development indicators, and psychological characteristics were identified. In addition, several factors influencing the orientation and distribution of training loads in acrobatics were determined.

Conclusion. The study enabled the development of practical recommendations aimed at optimizing the organization of training sessions, monitoring training loads, and improving the overall educational and training process in adolescent sports acrobatics.

ОСОБЕННОСТИ ФИЗИЧЕСКОЙ ПОДГОТОВЛЕННОСТИ АКРОБАТОВ 11-13 ЛЕТ

*С.Г. Хачатрян, С.А. Акопян,
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова: юные акробаты, тренеры, возраст, физическая подготовленность, двигательные способности.

Актуальность исследования. Известно, что физическая подготовка – основополагающая сторона в системе спортивной тренировки, где не составляет исключение и спортивная акробатика. К сожалению, вопросы физической подготовленности, в отличие от спортсменов высокой квалификации, практически не изучены на примере юных спортсменов, особенно армянской национальности. Изучение этих особенностей и подчеркивает актуальность данной статьи.

Цель исследования. Изучить особенности двигательной подготовленности юных акробатов.

Задачи исследования. Выявить уровень развития отдельных двигательных способностей акробатов 11-13 лет и провести сравнительный анализ с таковыми их сверстников, не занимающихся спортом.

Методы и организация исследования. Использованы методы анализа литературных источников, социологического опроса, педагогического тестирования, статистического анализа. В общей сложности в исследовании, проведенном в ДЮСШ Еревана и Капана, приняли участие 323 человек.

Анализ результатов исследования. В итоге проведенных исследований представилась возможность очертить ряд особенностей занятий акробатикой. Так, установлена положительная динамика возрастных изменений ряда специальных двигательных способностей у юных акробатов и их сверстников, не занимающихся спортом. Показала необходимость 1-2-летних многоборных тренировок. Установлены нормы тренировочных нагрузок и их влияние на состояние здоровья, признаки физического развития, психологические свойства. Определены некоторые факторы, характеризующие направленность тренировочной нагрузки в акробатике.

Краткие выводы. Представилась возможность предложить ряд рекомендаций по построению тренировки, нормированию нагрузки, совершенствованию учебно-тренировочного процесса.

Տեղեկություններ հեղինակների մասին

Սաթենիկ Գառնիկի Խաչատրյան՝ մ.գ.թ., Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դասախոս, Երևան, Հայաստան, E.mail: satenik.khachatryan@sportedu.am, ORCID: 0009-0007-7904-9366

Սուսաննա Արարատի Հակոբյան՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մագիստրոս, Երևան, Հայաստան, E.mail: susannah.hakobyan@gmail.com

Information about the authors

Khachatryan Satenik Garnik, PhD, Lecturer at the Department of Theory of Physical education and adaptive physical culture, State Institute of Physical culture and sports, Yerevan, Armenia,

ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆՆԴԻՐՆԵՐ 2025 N°3 (16)

E.mail: satenik.khachatryan@sportedu.am,_ORCID: 0009-0007-7904-9366

Hakobyan Susanna Ararat, Master's student, State Institute of Physical culture and sports of Armenia, Yerevan, Armenia, E.mail: susannah.hakobyan@gmail.com

Հոդվածն ընդունվել է 05.11.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 06.11.2025–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

Մ.Ա. Հարությունյան,

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Հեռացատկի տեխնիկա, ուսուցում, կատարելագործում, ժամանակակից մոտեցումներ, թափավազք, հրում, ճախրում, արագաշարժություն, ցատկունակություն:

Հետազոտության արդիականություն: Աթլետիկան համարվում է աշխարհում ամենատարածված և ամենազանգվածային մարզաձևերից մեկը և ներառում է քայլք, վազք, ցատկեր, նետումներ և բազմամարտ: Աթլետիկական մրցումները մտնում են գրեթե բոլոր խոշորագույն մրցումների ծրագրերում՝ Օլիմպիական խաղեր, Աշխարհի և Եվրոպայի առաջնություններ, աֆրիկյան, ասիական, բալկանյան, բրիտանական, պանամերիկյան խաղեր և այլն:

Աթլետիկայի ցատկային մրցաձևերում հաջողության կարող են հասնել այն մարզիկները, որոնք տիրապետում են վարժության կատարման կատարյալ տեխնիկային, ունեն զարգացած մկանային համակարգ, ինչպես նաև շարժումների գերազանց կոորդինացիա և արագաուժային ընդունակություններ [1, 4, 6, 11]: Հեռացատկը համարվում է

բարդ տեխնիկական արագաուժային մրցաձև, որի տեխնիկայի ուսուցման և կատարելագործման համար պահանջվում է տարիների նպատակաուղղված աշխատանք: Հեռացատկի տեխնիկայի ուսուցման համար կիրառվում են բազմաթիվ և բազմաբնույթ ֆիզիկական վարժություններ: Ամեն դեպքում տեխնիկայի ուսուցման գործընթացն իրականացվում է արագավազքի տեխնիկայի ուսուցումից հետո:

Ուսուցման գործընթացում մեծ նշանակություն ունի նորարական տեխնոլոգիաների կիրառումը: Վերջին սերնդի տեսանկարահանող սարքավորումներն արձանագրում են վարժության կատարման տեխնիկայի կենսամեխանիկական ցուցանիշները: Այդ սարքավորումներից Optojump Next-ը էլեկտրոնային սարքավորում է, որը հնարավորություն է տալիս արձանագրել ցատկորդի կենսամեխանիկական ցուցանիշները՝ թափավազքի արագությունը, հրման և արտաթռիչքի անկյունը, հրման ուժը, ցատկի բարձրությունը և այլն [2, 5, 9]: Այս տվյալների հիման վրա հնարավորություն է

ստեղծվում ստանալ մարզիկների ֆիզիկական և տեխնիկական պատրաստության վերաբերյալ տվյալներ՝ առավելագույն ճշտությամբ, որն էլ կարող է հիմք հանդիսանալ ուսուցման գործընթացում ընտրել ավելի արդյունավետ և օպտիմալ միջոցներ [12]: Ուսուցման գործընթացում շատ կարևոր է նաև մարզումային ծրագրերի անհատականացումը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մարզիկի ֆիզիկական պատրաստությունը, ուժեղ և թույլ կողմերը [9, 11]:

Հեռացատկի տեխնիկայի հաջորդական ուսուցման մեթոդիկական իրականացվում է հատուկ միջոցների և մեթոդական ցուցումների օգնությամբ:

Հեռացատկում նորագույն մեթոդական մոտեցումների ուսումնասիրումը հնարավորություն կընձեռի պարզաբանել արդի արդյունավետ մոտեցումները՝ դրանք պրակտիկայում կիրառելու նպատակով:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել հեռացատկի տեխնիկայի ուսուցման կատարելագործման առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրները: 1. Վերլուծել հեռացատկի տեխնիկայի կառուցվածքը՝ առանձնացնելով դրա հիմնական փուլերը: 2. Ներկայացնել նորարարական մոտեցումներ՝ հեռացատկի տեխնիկայի ուսուցման և կատարելագործման գործընթացում: 3.

Բացահայտել **ուսուցման** գործընթացում կիրառվող հատուկ և օժանդակ վարժությունների արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդներն են՝ 1. գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն և ընդհանրացում, 2. հեռացատկի տեխնիկայի ուսուցման և կատարելագործման **նորարարական մոտեցում**, որը միավորում է տեսական, գործնական և վերլուծական բաղադրիչները՝ մեկ միասնական համակարգում: 3. **ուսուցման հատուկ վարժություններ**, որոնք ուղղված են հրման ուժի, թափավազքի կայունության, ճախրման և վայրէջքի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Հեռացատկը, ինչպես և մյուս ցատկային մրցաձևերի տեխնիկական բաժանվում է փուլերի՝ թափավազքի, հրման, ճախրման և վայրէջքի: Հեռացատկի հեռավորությունը առաջին հերթին կախված է թափավազքի արագությունից և հրման հզորությունից:

Հեռացատկում թափավազքի նպատակն է՝ առանց ավելորդ լարվածության և շարժումների վերահսկողության կորստի, ձեռք բերել հորիզոնական առավելագույն արագություն: Լավ թափավազքի հիմնական պայմանները, որոնք ապահովում են ցատկի հեռավորությունը, հետևյալն են՝ արագությամբ

յուն, ճշգրիտ ուսնադրում հրման տախտակին և արագ անցումը հրման: Այդ բոլոր շարժումները պետք է կատարել ազատ, սահուն և առանց ավելորդ լարվածության [2, 4, 7]: Թափավազքի ճշտագրությունը կախված է վազքաքայլերի հավասարաչափ երկարությունից, տեմպի և ռիթմի քիչ փոփոխությունից: Գիտական հետազոտությունների արդյունքների վերլուծությունը փաստում է, որ բարձրակարգ մարզիկների մոտ այդ փոփոխությունը կազմում է մինչև 3,1 տոկոս, իսկ կարգային մարզիկների մոտ՝ մինչև 7,5 տոկոս [3, 6, 7, 11]:

Հեռացատկում թափավազքը կատարվում է արագացումով, և առավելագույն արագության պետք է հասնել վերջին քայլերում: Թափավազքի վերջնամասում քայլերի ռիթմը և տեմպը փոխվում են՝ հրմանը նախապատրաստվելու նպատակով [1, 9]:

Գործնականում թափավազքի սկիզբը կատարվում է երկու եղանակով՝ տեղից և մոտեցումով: Տեխնիկայի ուսուցման գործընթացում առաջին հերթին ուսուցումը իրականացվում է տեղից տարբերակով: Այս տարբերակն ավելի պարզ է և հատկապես ուսուցման սկզբնական փուլում՝ ավելի մատչելի: Մոտեցումով տարբերակը ավելի բարդ է և անհրաժեշտ է որոշակի պատրաստություն: Ներկայումս երկու տարբե-

րակներն էլ կիրառելի են և արդյունավետ: Թափավազքն իրականացվում է հետևյալ տարբերակներով՝ ա) հավասարաչափ արագացում ամբողջ թափավազքի երկայնքով, բ) թափավազքը կատարվում է համեմատաբար դանդաղ արագությամբ՝ աստիճանաբար հասնելով առավելագույնին, գ) արագ և ակտիվ սկիզբ, արագության աճ թափավազքի վերջին քայլերում: Թափավազքի կատարման բոլոր տարբերակներն էլ թույլ են տալիս տղամարդկանց հասնել 10.0-11.0 մ/վ, իսկ կանանց՝ 9.00-10.0 մ/վ արագության [1, 10]:

Թափավազքի ուսուցման համար անհրաժեշտ է ընտրել թափավազքի երկարություն, որը պետք է կրի անհատական բնույթ: Թափավազքի ուսուցման համար կիրառվում են հետևյալ վարժությունները՝ 1. Լրիվ թափավազքի վազանցումներ 3/4 ուժով, ապա լրիվ ուժով՝ բարձր արագությամբ: 2. Նույն հատվածի հաղթահարում՝ շեշտը դնելով վերջին երկու-երեք քայլերի վրա: Երկու վարժություններն էլ պետք է կատարել ռիթմով և բարձր տեմպով: 3. Արագաշարժության մշակման համար նպատակահարմար է կատարել 30-100 մ վազքեր: Ներկայումս թափավազքի արագության բարձրացման նպատակով կիրառելի են դարձել նաև թափավազքի

երկարությանը մոտ ընթացքից կատարվող 30–40 մ վազքային վարժությունները, ինչպես նաև ուժային և արագաուժային տարբեր բնույթի վարժությունները [1, 2, 3, 11]:

Թափավազքի արագությունը և հրումը փոխկապակցված են: Թափավազքի վերջին քայլերի արագությունը մեծապես ազդում է հրման արագության վրա. որքան արագ են վերջին քայլերը, այնքան հզոր է լինում հրումը: Բացի այդ, թափավազքից հրմանն անցնելու փուլը ցատկի տեխնիկայի առանցքային մասն է, որը զգալիորեն կանխորոշում է ցատկի հաջողությունը:

Թափավազքի և հրման փուլերի ուսուցման և մարզման գործընթացում կիրառվող վազքային և ցատկային վարժությունների ժամանակակից մոտեցումները պահանջում են առաջարկվող վարժությունների կատարում՝ ավելի փոքր ծավալով, կրկնումների համեմատաբար քիչ քանակով, բայց մեծ ինտենսիվությամբ [9, 10]:

Թափավազքը հեռացատկի արդյունավետության հիմնական նախապայմանն է, քանի որ այն ապահովում է անհրաժեշտ հորիզոնական արագությունն ու ստեղծում է հիմք արդյունավետ հրում կատարելու համար:

Հրում: Թափավազքի վերջին քայլերում տեղի է ունենում հրման նախապատրաստումը, որն իրենից ենթադրում է վերջին քայլին շատ քիչ

կքանատում, ինչը թույլ է տալիս ցատկորդին իջեցնել մարմնի զանգվածի ընդհանուր կենտրոնը՝ դրանով իսկ ստեղծելով բարենպաստ պայմաններ արդյունավետ հրում կատարելու համար [2, 7, 8]:

Հեռացատկի ժամանակակից տեխնիկան բնութագրվում է հրման տախտակին ակտիվ մոտեցմամբ, թափավազքից՝ հրման բնական և արագ անցմամբ: Հրման փուլում ցատկորդի հիմնական նպատակն է թափավազքի ժամանակ ձեռք բերած արագության պահպանումը: Այդ պատճառով վերջին քայլը կատարվում է և՛ արագ, և՛ կարճ, քան նախորդը: Ուտքը հրման տախտակին դրվում է ամբողջ ներբանով, մարմնի ծանրության կենտրոնից 30-40 սմ առաջ: Դրանից հետո հրման ուտքը զգալի ծավելելով կոնքազորային և ծնկահողերում, սկսում է արագ ուղղվել [2, 3, 4, 11]:

Արագ և լիարժեք հրմանը նպաստում է թափային ուտքի առաջ-վեր ակտիվ շարժումը, իրանի ուղղումը, ուտքի բարձրացումը և ձեռքերի շարժումները: Հրման տևողությունը հաջողված ցատկի ժամանակ չի գերազանցում 0,11-0,13 վայրկյանը, հրման անկյունը հասնում է 70-75° և ավելի: Այս ամենը ապահովում է ցատկորդին ճախրման փուլում ունենալ 60-70 սմ բարձրություն և 7,50-8,00 մետր ցատկի արդյունք [1, 4]:

Հրումը ամենակարևոր, բարդ և պատասխանատու փուլն է հեռացակում: Այս փուլով է որոշվում ցատկի արդյունավետությունը: Հրման գործընթացը բարդ է այն առումով, որ տվյալ «հանգուցակետում» բախվում են երկու իրարամերժ՝ հորիզոնական և ուղղահայաց բաղադրամասեր, ուժեր [7, 8]:

Հրման համար մեծ նշանակություն ունեն նաև ազատ վերջույթների շարժումները: Վերլուծելով այդ շարժումները, մասնագետները նշում են, որ տղամարդ ցատկորդների մոտ մարմնի զանգվածի ընդհանուր կենտրոնի տեղափոխությունը (միջինացված տվյալներով) վեր-առաջ՝ 73 տոկոսի չափով տեղի է ունենում հրման ոտքի ուղղման հաշվին, իսկ 27 տոկոսը՝ ազատ վերջույթների շարժումների հաշվին, որից 16 տոկոսը թափային ոտքի, իսկ 11 տոկոսը՝ ձեռքերի: Կանանց մոտ մարմնի ծանրության ընդհանուր կենտրոնը 78,5 տոկոսով վեր-առաջ է տեղափոխվում հրման ոտքի ուղղման հաշվին, 13,5 տոկոսը՝ թափային ոտքի և 8 տոկոս ձեռքերի շարժումների հաշվին [3, 6]:

Հեռացատկի հրման փուլը համարվում է առաջնայինը և ուսուցման գործընթացը սկսվում է այս փուլից: Ուսուցման համար անհրաժեշտ են հատուկ նախապատրաստական վար-

ժություններ, որոնք օգնում են մարզվողներին ճիշտ պատկերացում կազմել հրման ուղղության, արագության և ուժի մասին: Հրման փուլի ուսուցման և կատարելագործման համար կիրառվում են բազմաթիվ վարժություններ 1. հրման ոտքը առաջ դնել ներբանով, թափայինը՝ հետ, այս դիրքից թափայինի առաջ-վեր շարժումով կատարել հրում, 2. նույնը կատարել 2-4 վազքաքայլից, 3. 6-8 վազքաքայլ թափավազքից կատարել հրում օդում պահել «քայլ» դրություն, վայրէջք ցատկափոսում թափային ոտքի վրա, այնուհետև վազելով դուրս գալիս ցատկափոսից, 4. 6-8 վազքաքայլ թափավազքից, հրվել՝ ձգտելով հասնել կախված առարկաներին՝ ձեռքերով, գլխով, թափային ոտքի ծնկով (բարձրությունները համապատասխանաբար՝ 2.5 մ, 2.0 մ և 1.3 մ, հրման տեղից 1,5-2,00 հեռավորության վրա), 4. ցատկեր «քայլ» դրությամբ ուղղահայաց տեղադրված խոչընդոտի հաղթահարմամբ (50-90 սմ բարձրությամբ)՝ տեղադրված հրման տեղից 1,5-2,0 մ հեռավորության վրա [4, 9, 11]: Մարզումային գործընթացում, հրման կատարելագործման համար օգտագործվում են նաև բազմաբնույթ ցատկային և արագաուժային բնույթի վարժություններ՝ տեղից և թափավազքից եռացատկ և հնգացատկ, հրումներ ոտքից ոտք, ուսյուններ հրման և

թափային ուղքերով, ցատկեր տարբեր բարձրությամբ հարթակից՝ վերև և ներքև: բազմակի ցատկեր կարճ թափավազքից և այլն [8, 10]:

Ճախրում: Հրման փուլի ավարտից հետո սկսվում է ճախրման փուլը: Այս փուլում ցատկորդի բոլոր շարժումներն ուղղված են հավասարակշռության պահպանմանը և արդյունավետ վայրէջքի կատարմանը: Ցատկի հեռավորությունն ապահովվում է թռիչքի նախնական արագությամբ, որը բարձրակարգ մարզիկների մոտ հասնում է 9,2-9,6 մ/վրկ.-ի [1, 2]: Հրման փուլում, փոխելով շարժման ուղղությունը, ցատկորդը ձեռք է բերում ճախրման անհրաժեշտ բարձրություն՝ 50-70 սմ: Ճախրման փուլով է բնութագրվում հեռացատկի երեք ցատկեղանակները՝ «կծկված», «արտակորված» և «մկրատած»: Ցատկի ճախրման փուլը, կապված ցատկեղանակի հետ, կարող է ունենալ որոշակի առանձնահատկություններ, բայց «քայլ» դրության կառուցվածքը բոլոր դեպքերում էլ հիմնականում նույնն է [4, 6]:

«Կծկված» եղանակով հեռացատկը ամենահեշտ և բնական եղանակն է և կիրառվում է սկզբնական ուսուցման ժամանակ: Հրումից անմիջապես հետո թափային ոտքը՝ ծավված ծնկային և կոնքազդրային հողերում, մեծ ակտիվությամբ տարվում է առաջ-վեր, օդում պահելով «քայլ» դրություն, որից հետո

հրող ոտքն արագ ծավլելով համանման հողերում միացվում է թափայինին: Այնուհետև ոտքերի խորը ծալումով և իրանի առաջ թեքումով ստեղծվում է «կծկված» դրություն ու շարժում՝ առաջ-ցած ուղղությամբ: Ճախրման վերջնամասում ցատկորդները ոտքերը մեծ ակտիվությամբ պարզում են առաջ և պահպանելով իրանի թեքությունը՝ նախապատրաստվում վայրէջքի [2]:

«Կծկված» եղանակով հեռացատկն ուսուցանվում է հետևյալ վարժությունների միջոցով՝ 1. Հրման ոտքն առաջ, թափայինը՝ հետ, այս դրությունից հրվել՝ թափայինը ծավված ազդրով ակտիվ տանել առաջ-վեր, օդում պահել «քայլ» դրություն, վայրէջքը նույն ոտքի վրա: 2. Նույն վարժությունը կատարել 3-7 վազքաքայլով դանդաղ, ապա արագ վազքով: 3. Մի քանի վազքաքայլով կատարել հրում, ընդունել «քայլ» դրություն, որոշ դադարից հետո հրման ոտքը միացնել թափայինին, վայրէջք երկու ոտքի վրա: 4. Կարճ թափավազքից կատարել հրում, օդում «կծկել» ոտքերը, իրանով թեքվել առաջ, կատարել վայրէջք: 5. Նույնը կատարել լրիվ թափավազքից [1, 5]:

«Արտակորված» եղանակով հեռացատկի շարժումները կատարվում են հետևյալ հերթականությամբ: Հրումից հետո օդում պահվում է քայլ դրություն, որից անմիջապես հետո թափային ոտքն ազդրով ակտիվ իջեցվում է ցած,

տարվում հետ, միացվում հրման ոտքին՝ ծավվելով ծնկահողում: Միաժամանակ կոնքը առաջ է շարժվում և ցատկորդը արտակորվում է գոտկային և կրծքային հատվածներում: Ձեռքերը տարվում են հետ-վեր: Այս դիրքով ցատկորդը շարժվում է առաջ՝ ճախրման փուլի կեսից ավելի պահպանելով «դադար» և նախապատրաստվում վայրէջքի [1, 2, 5]:

«Արտակորված» եղանակով հեռացատկի ուսուցանման և կատարելագործման գործընթացն իրագործվում է հետևյալ միջոցներով՝ 1. Մի քանի վազքաքայլից հրում՝ օդում պահելով «քայլ» դրությունը, թափայինը իջեցնել՝ տանել ցած-հետ, այնուհետև միացնել հրող ոտքը, շարունակելով արտակորվել՝ վայրէջք կատարել երկու ոտքերի վրա: 2. Կիսակքանիստ դիրքից կատարել վերհրում երկու ոտքով, օդում արտակորվել, վայրէջքը երկու ոտքի վրա կքանստումով: 3. Տեղից հեռացատկ, օդում արտակորվել ու ոտքերն առաջ նետելով կատարել վայրէջք: 4. Լրիվ թափավազքից ցատկեր «արտակորված» եղանակով [2, 6]:

«Մկրատած» եղանակով հեռացատկը ամենարդյունավետն է և համեմատաբար բարդ է տեխնիկայի կատարման առումով: Այս ցատկատեղանակում շարժումների իրականացումն անհրաժեշտ է դիտել, որպես վազքի

շարունակություն: Բարձրակարգ մարզիկները «մկրատած» ցատկատեղանակը իրականացնում են երկու և կես, և երեք ու կես քայլով:

Ուսուցման գործընթացում մկրատած եղանակով հեռացատկի ուսուցման, ամրապնդման և կատարելագործման համար կիրառելի են հետևյալ վարժությունները՝ 1. Մի քանի վազքաքայլից հրում, օդում պահել «քայլ» դրություն, վայրէջք թափայինի վրա: 2. Կարճ թափից հրվել, պահել «քայլ» դրություն, վայրէջք թափայինի վրա, հավելվել ավազափոսին հրման ոտքով կատարել մեծ քայլ առաջ: 3. 6-8 վազքաքայլով հրում, ընդունել «քայլ» դրություն, ևս քայլ հրման ոտքով, վայրէջք երկու ոտքին լայն բացվածքով՝ պահելով արտանկ դրություն: 4. Նախորդ վարժության կատարում, օդում ավելացնել կես քայլ թափայինով՝ միացնել հրման ոտքը, կատարել վայրէջք: 5. Ցատկեր լրիվ թափավազքով 3/4 և բարձր արագությամբ [3, 4, 9]:

Վայրէջքի փուլի կատարմամբ ավարտվում է ցատկը: Չնայած փուլի կարճատևությանը վայրէջքն ունի կարևոր նշանակություն: Ճիշտ և հաջող վայրէջքը ցատկորդին ապահովում է լավ մարզական արդյունք, ինչպես նաև անվտանգություն: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վայրէջքի փափուկ

կատարման վրա: Վայրէջքին տիրապետելու համար պետք է աստիճանաբար բարդացնել հանձնարարվող վարժությունները: Մասնագետները առաջարկում են հետևյալ վարժությունները՝ 1. Ցատկեր քայլ դրությամբ՝ վայրէջքից առաջ ոտքերը առաջ տանելով: 2. Ցատկ՝ վայրէջք կատարելով դրա համար նշված գծից այն կողմ: 3. Ցատկեր 10-12 սմ խոչընդոտի վրայով (ոետինե ժապավեն), որը տեղադրված է վայրէջքի տեղից առաջ [7, 8]:

Հիմնական և հաճախ հանդիպվող սխալներից է համարվում, ոտքերի շուտ իջեցնելը, որի արդյունքում լիարժեք չի օգտագործվում ճախրման հետազիծը: Քիչ տարածված սխալներից է ուղիղ ոտքերի վրա կատարվող վայրէջքը (կոշտ), որը տեղի է ունենում ոտքերի մկանների չափազանց լարվածության պատճառով:

Տարբերվում է վայրէջքի երեք տարբերակ: Առաջին տարբերակը ամենատարածվածն է՝ խորը կքանստելով: Երկրորդը՝ խորը կքանստից ոտքերն առաջ պարզել՝ կոնքն ակտիվորեն առաջ տանելով: Բավականին արդյունավետ է համարվում երրորդ տարբերակը՝ վայրէջք՝ մարմինը առաջ-կողմ նետելով: Այս տարբերակը կատարման առումով մի փոքր բարդ է և այդ պատճառով հիմնականում կիրառում են բարձրակարգ ցատկորդները [1, 5, 5]:

Հեռացատկի ուսուցմանը հետզուգահետ պետք է ուսուցման գործընթացում ներառել վարժություններ արագավազից, ցատկերից և նետումներից: Այս մրցածների պարամունքները հնարավորություն են տալիս լավացնել ընդհանուր ֆիզիկական պատրաստվածությունը և բարձրացնել արագաշարժության, ցատկունակության, ուժային և արագաուժային ընդունակությունների մակարդակը: Արագ վազքի տեխնիկային տիրապետելը հնարավորություն է տալիս թափավազքի լավ կատարման համար: Միևնույն ժամանակ պետք է մշակել ուժը՝ կատարելու հզոր հրում և բազմապիսի հատուկ ցատկային նետումային վարժություններ, որոնք կապահովեն ճախրման և վայրէջքի փուլերի արդյունավետությունը: Ուսուցման և կատարելագործման ժամանակակից մոտեցումները հիմնվում են գիտական ու տեխնոլոգիական մեթոդների և միջոցների վրա: Առաջնային դեր ունի կենսամեխանիկական ցուցանիշների ուսումնասիրությունը և վերլուծությունը, տեսաերիզների կամ 3D համակարգերով (տեխնոլոգիական հսկողություն՝ արհեստական բանականություն կիրառում, ֆունկցիոնալ ցուցանիշների ուսումնասիրում, հոգեբանական պատրաստություն):

Եզրակացություն: 1. Հեռացատկի տեխնիկայի ուսուցումը պետք է ներառի

վարժության բոլոր փուլերը՝ թափավազք, հրում, ճախրում և վայրէջք, որոնք պետք է կատարելագործվեն համակարգված՝ ապահովելով նրանց միջև արդյունավետ կապ: 2. Վերջին սերնդի Optojump Next սարքավորումը հեռացատկի ուսուցման գործընթացում հնարավորություն է ստեղծում ստանալ այնպիսի կենսամեխանիկական ցուցանիշներ, որոնք բացահայտում են մարզվողների անհատական առանձնահատկությունները, ֆիզիկական և տեխնիկական կարողությունները, ինչպես նաև կարող են հիմք հանդիսանալ արդյունավետ մշակելու և առաջ քաշելու նոր մեթոդներ և միջոցներ թափավազքի արագության, հրման հզորության, ճախրման բարձրության, վայրէջքի

տեխնիկայի ուսուցման և կատարելագործման համար: 3. Թափավազքի և հրման փուլերի ուսուցման և մարզման գործընթացում կիրառվող վազքային և ցատկային վարժությունների ժամանակակից մոտեցումները պահանջում են առաջարկվող վարժությունների կատարում՝ ավելի փոքր ծավալով, կրկնումների համեմատաբար քիչ քանակով, բայց մեծ ինտենսիվությամբ: 4. Հեռացատկում բարձր մարզական արդյունքների հասնելու համար կարևոր նախապայման է ցատկորդի ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստության մակարդակի բարելավումը, հատկապես՝ արագաշարժության, ուժի, ցատկունակության և արագաուժային ընդունակությունների կատարելագործումը:

■ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բարայան Կ.Ա., Հեռացատկ և եռացատկի տեխնիկան, ուսուցման մեթոդիկան և մարզումը, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2008, 125 էջ:
2. Մամաջանյան Վ.Մ., Ընդհանուր խմբագրության, Աթլետիկա, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003, 187 էջ:
3. Джекенов П.С., Макарова Е.А., Методика обучения легкоатлетическим прыжкам. Тараз. ТарГУ им. М.Х. Дулати. ФиС.- 2014.– 68 с. <https://surl.it/hetawa> [մուտք՝ 15–19. 09. 2025]
4. Зеличенко В. Б. Легкая атлетика. Система ИААФ Обучение и сертификация тренеров УРОВЕНЬ I/II ПРЫЖКИ. М.: ФиС., 2004.– 187
5. Никитушкина В.Г., Легкая атлетика.- Учебник, Издательство «Физическая культура» 2010.- 440 с.

6. Озолина Н.Г., Воронкина В.И., Примакова Ю.Н. Легкая атлетика Учебник для.- институтов физической культуры.- М.: ФиС.- 1989.- 671 с.
7. Попов В.Б., Прыжок в длину: многолетняя подготовка. М.: Олимпия Пресс, Terra-Спорт, 2001.- 160 с.
8. Попов В.Б., Система спортивной тренировки высококвалифицированных легкоатлетов пригунов. Terra-Спорт, 2003.- 134 с.
9. Сорокин С. А., Аршинник С. П., Ляпин В. М. Тенденции и перспективы развития прыжка в длину у мужчин.- «Физическая культура» Спорт, Туризм, Двигательная рекреация.- 2021.- Т. 6, № 4. С. 49-54
10. Тер-Ованесян И. А., Подготовка легкоатлета: Современный взгляд. М.: Terra-Спорт, 2000.- 128 с.
11. <https://surl.li/ysitjx> [մուտք՝ 13–17. 10. 2025]
12. <https://surl.li/jwtyla> [մուտք՝ 15–22. 10. 2025]

MODERN APPROACHES TO TEACHING AND IMPROVING LONG JUMP TECHNIQUE

*M. A. Harutyunyan,
Armenian State Institute of Physical Culture
and Sport, Yerevan, Armenia*

ABSTRACT

Keywords: long jump technique, instruction, skill improvement, modern approaches, run-up, take-off, flight, movement speed, jumping ability.

Research Relevance. In the jumping disciplines of track and field, high performance is achieved by athletes who demonstrate well-developed technique, a strong and coordinated muscular system, refined motor coordination, and pronounced speed–strength qualities. The application of innovative technologies plays a crucial role in the teaching and learning process. Consideration of these factors enables the optimal selection of instructional tools and teaching methods, thereby increasing the effectiveness of technical training.

Research Aim. To describe the individual stages of long jump technique and to analyze methods for teaching and improving these stages, with particular emphasis on the application of innovative instructional approaches.

Research Methods and Organization. The study employed the study, analysis, and generalization of scientific and methodological literature; an innovative approach to teaching and improving long jump technique integrating theoretical, practical, and analytical components into a unified system; and the presentation of instructional methods and special exercises aimed at enhancing take-off force, run-up stability, flight execution, and landing technique.

Research Results Analysis. The long jump technique, similar to other jumping events, consists of distinct stages: run-up, take-off, flight, and landing. Jump distance is primarily determined by the speed of the run-up and the force generated during take-off. In the process of learning and refining long jump technique, the appropriate selection of teaching methods and training equipment is of critical importance, as it largely determines the overall effectiveness of the training process.

Conclusion. The long jump is a complex speed–strength technical discipline, and technical training must comprehensively address all its stages, including the run-up, take-off, flight, and landing. These elements should be improved in a systematic and coordinated manner, ensuring effective interaction between them. The training process should incorporate innovative approaches alongside exercises designed to develop both physical and technical abilities, and the teaching and improvement of long jump technique should be individualized, taking into account the specific characteristics and capabilities of each athlete.

СОВРЕМЕННЫЕ ПОДХОДЫ В ОБУЧЕНИИ И СОВЕРШЕНСТВОВАНИИ ТЕХНИКИ ПРЫЖКОВ В ДЛИНУ

*М. А. Арутюнян,
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения*

Аннотация

Ключевые слова: техника прыжка в длину, обучение, совершенствование, современные подходы, разбег, отталкивание, полёт, быстрота движений, прыгучесть.

Актуальность исследования. В прыжковых дисциплинах лёгкой атлетики успеха могут добиться спортсмены, которые владеют совершенной техникой выполнения упражнения, обладают развитой мышечной системой, отличной

координацией движений и скоростно-силовыми качествами. В процессе обучения большое значение имеет применение инновационных технологий. Учитывая эти показатели, появляется возможность более оптимально подбирать средства и методы обучения.

Цель исследования. Описать отдельные этапы техники прыжка в длину, а также методы обучения и совершенствования, подчеркнув инновационные подходы.

Методы и организация исследования. 1. Изучение, анализ и обобщение научно-методической литературы. 2. Инновационный подход к обучению и совершенствованию техники прыжка в длину, объединяющий теоретический, практический и аналитический компоненты в единую систему. 3. Представление методов обучения специальным упражнениям, направленным на совершенствование силы отталкивания, устойчивости разбега, техники полёта и приземления.

Анализ результатов исследования. Техника прыжка в длину, как и других прыжковых дисциплин, делится на этапы: разбег, отталкивание, полёт и приземление. Дальность прыжка в первую очередь зависит от скорости разбега и силы отталкивания. В процессе обучения технике прыжка в длину большое значение имеет правильный выбор методов и средств, от которого зависит эффективность всего процесса обучения.

Краткие выводы. Прыжок в длину это сложная скоростно-силовая техническая дисциплина, и обучение технике должно включать все её этапы: разбег, отталкивание, полёт и приземление. Эти элементы необходимо совершенствовать системно, обеспечивая эффективную связь между ними. В процессе обучения следует применять инновационные подходы, а также такие упражнения, которые способствуют развитию физических и технических способностей занимающихся. Обучение и совершенствование техники должны носить индивидуальный характер с учётом личных особенностей спортсменов.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարինե Արամյախի Հարությունյան՝ Ֆիզիկ մարզաձևերի ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail: marine.harutunyan@sportedu.am

Information about the author

Marine Aramayis Harutyunyan, Lecturer of the Chair of Cyclic Sports, Armenian State institute of physical culture and Sport, Yerevan, Armenia,

E-mail:marine.Harutyunyan @sportedu.em

Հոդվածն ընդունվել է 03.11.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 04.11.2025–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

ՍՐՈՒՆՔՆԵՐԻ ԽԱՉԱՁԵՎ ԲՈՆՎԱԾՔՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՇՐՋՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՋԱՏ ԸՄԲԵՃԱՄԱՐՏՈՒՄ

Խ.Թ. Հարությունյան,

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Ազատ ըմբշամարտ, տեխնիկա, ուսուցման գործընթաց, սրունքների խաչաձև բռնվածքով շրջումներ, ուսուցման հաջորդականություն, ուսուցման մեթոդներ:

Հետազոտության արդիականություն: Տեխնիկայի և տակտիկայի ուսումնասիրումը սպորտային ըմբշամարտի ուսումնամարզական գործընթացի գլխավոր խնդիրներից մեկն է: Այդ գործընթացը կառուցված է ուսուցման սկզբունքների և մարզման օրինաչափությունների հիման վրա՝ հաշվի առնելով նաև ըմբշամարտի ուսուցման և մարզման առանձնահատկություններն արտահայտող առանձին մեթոդիկաները: Տարեցտարի առավել զգալի է դառնում ուսուցման մեթոդիկաների կատարելագործման անհրաժեշտությունը, որը պայմանավորված է սպորտային ըմբշամարտի օրինաչափ զարգացմամբ:

Սպորտային ըմբշամարտում տեխնիկական համարվում է վարպետության հիմքը և ըմբիշների հնարավորությունները մեծ չափով պայմանավորված

են հենց տեխնիկական պատրաստվածությամբ: Տեխնիկական կատարելությունը համարվում է ըմբիշի պատրաստության թերի կողմերի փոխհատուցման գործոն [5, 10]:

Ըմբշամարտի տեխնիկային առնչվող հետազոտությունները հիմնականում վերաբերում են հարձակողական գործողությունների կառուցվածքի արդյունավետության ուսումնասիրությանը, ինչը տարբեր հնարքների ուսուցման մեթոդների և միջոցների մշակման հնարավորություն է ընձեռնել:

Սպորտային ըմբշամարտում գոյություն ունեն հարձակողական, պաշտպանողական և հակահարձակողական գործողություններ: Որպես կանոն՝ ըմբիշին հիմնականում առավելություն են բերում հարձակողական գործողությունները, որոնք կատարվում են ինչպես կանգնած դրությունից, այնպես էլ պարտեր դրությունից:

Ըմբշամարտի տեխնիկային վերաբերյալ ուսումնասիրությունները հիմնականում ուղղված են կանգնած դրությունից կատարվող հարձակողական

գործողությունների ուսուցման մեթոդիկային: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ ըմբիշների գոտեմարտը սկսվում է կանգնած դրությունից, իսկ ազատ ըմբշամարտում պարտեր դրությունից հնարքներ կատարելու համար անհրաժեշտ է մրցակցին նախառաջ տեղափոխել պարտեր դրություն, այսինքն՝ կանգնած դրությունից հնարք կատարել: Հենց այս օբյեկտիվ պատճառով է պայմանավորված մասնագետների և հետազոտողների առավել մեծ ուշադրությունը կանգնած դրությունից կատարվող տեխնիկատակտիկական գործողությունների ուսուցման գործընթացի վրա:

Սակայն, ինչպես ցույց է տալիս մրցակցական գոտեմարտերի վիճակագրական տվյալների վերլուծությունը, պարտեր դրությունը ևս շատ կարևոր է հաղթանակի հասնելու և բարձր սպորտային արդյունքների նվաճման գործում [12]:

Պարտեր դրությունից կատարվող հնարքների առավելությունը կայանում է նրանում, որ միևնույն հնարքը առանց բռնվածքի փոփոխման կարելի է կատարել մի քանի անգամ, իսկ կանգնած դրությունից կատարվող հնարքը անհնար է կրկնել, քանի որ հնարքի կատարման արդյունքում մրցակիցը հայտնվում է պարտեր դրությունում:

Հիշենք, որ ամեն անգամ հնարք կատարելու համար մեզ պետք է որոշակի նախապատրաստական աշխատանքներ տանել, մրցակցին անակնկալի բերել, որն ըմբիշից պահանջում է որոշակի ժամանակ, զգալի մկանային ճիգեր և այլն, իսկ պարտեր դրությունում հնարավոր է մեկ նախապատրաստական աշխատանքով միևնույն հնարքը կիրառել մի քանի անգամ կամ այնքան անգամ մինչև միավորների տարբերությունը կհասնի տասի և գոտեմարտը կդադարեցվի: Բացի դրանից, պարտեր դրությունում գրոհող ըմբիշը միշտ առավելություն ունի մրցակցի նկատմամբ, քանի որ գոտեմարտում է վերևից և մրցակցին ճնշում է սեփական քաշով:

Սրունքների խաչաձև բռնվածքով կատարվող շրջումները համարվում են բազային հնարքներ, այսինքն՝ կազմում են ըմբիշների տեխնիկական հագեցվածության հիմքը, առանց որոնց անհնար է տեխնիկայի հետագա կատարելագործումը [3]:

Սրունքների խաչաձև բռնվածքով կատարվող շրջումներն ընդգրկված են մանկապատանեկան մարզադպրոցների ծրագրում և պարտադիր ուսուցանվում են բոլոր մարզվողներին: Սակայն կախված մարզիչների փորձից, նրանց պատկերացումներից այդ հնարքները

տարբերվում են իրենց ուսուցման մեթոդներով, ուսուցման ժամանակահատվածով և ուսուցման հաջորդականությամբ:

Աշխատանքի արդիականությունը թելադրված է նաև այն հանգամանքով, որ սրունքների խաչաձև բռնվածքով կատարվող շրջումները ունեն մեծ արդյունավետություն, քանի որ միևնույն բռնվածքով հնարավոր է կատարել անսահման քանակի շրջումներ և յուրաքանչյուր շրջումից հետո վաստակել 2 միավոր: Դրանք հեշտությամբ համակցվում են այլ շրջումների և միմյանց հետ, ինչը զգալիորեն մեծացնում է նրանց կատարման արդյունավետությունը: Բացի դա ազատ ըմբշամարտում կանգնած դրությունից կատարվող հնարքների մեծ մասը իրականացվում է ոտքերի բռնվածքներով, ինչը անհրաժեշտ կապերի ստեղծման պայմաններում զգալիորեն մեծացնում է ոտքերի խաչաձև բռնվածքով կատարվող շրջումների կատարման արդյունավետությունը:

Հետազոտության նպատակը՝ սրունքների խաչաձև բռնվածքով շրջումների ուսուցման առանձնահատկությունների բացահայտումն է:

Հետազոտության խնդիրներն են.

1. Ուսումնասիրել սրունքների խաչաձև բռնվածքով կատարվող շրջումների ուսուցման մեթոդները:

2. Դասակարգել սրունքների խաչաձև բռնվածքով կատարվող շրջումները:

3. Բացահայտել սրունքների խաչաձև բռնվածքով կատարվող շրջումների կատարման արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության նպատակի և խնդիրների լուծման նպատակով կիրառվել են հետևյալ մեթոդները. գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և վերլուծություն, մանկավարժական դիտումներ, սոցիոլոգիական հարցում, գոտեմարտերի վիճակագրական տվյալների ուսումնասիրում:

Մանկավարժական դիտումները կազմակերպվել են Երևանի «Դինամո» մարզական-հասարակական կազմակերպության, «Տորք Անգեղ» մարզամշակութային կենտրոնի և Երևանի օլիմպիական հերթափոխի քոլեջի, «Աշխատանքային ռեզերվներ» հասարակական կազմակերպության, Ն. Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի, Վ. Ջատիկյանի անվան «Մալաթիա» մարզական ակումբի ազատ ըմբշամարտի նախնական ուսուցման և ուսումնամարզական խմբերում:

Սոցիոլոգիական հարցմանը մասնակցել են ազատ ըմբշամարտի 45

փորձագետ՝ 30 մարզիչ, 15 բարձրակարգ մարզիկ:

Ուսումնասիրության է ենթարկվել Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիայի գոտեմարտերի վիճակագրական տվյալների բազան, մասնավորապես՝ 2023-2024 թթ. Եվրոպայի, Ասիայի առաջնությունների և Օլիմպիական խաղերի 1343 գոտեմարտերի վիճակագրական տվյալները:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Հնարքի արդյունավետ կառուցվածքը դեռևս սպորտային վարպետության չափանիշ չէ և չի ապահովում դրա կատարումը մրցակցային պայմաններում: Գոտեմարտի բարդ իրավիճակներում հնարքների արդյունավետ իրագործումը հնարավոր է միայն դրանց կառուցվածքի նպատակային փոփոխման միջոցով:

Սակայն, մինչև հնարքի կատարումը, անհրաժեշտ է տեղաշարժերի, բռնվածքների, հրումների և ձգումների միջոցով նախադրյալներ ստեղծել հնարքների կատարման համար [8]:

Տեխնիկական բարձր պատրաստություն ունեցող ըմբիշները գոտեմարտում ավելի քիչ էներգիա են ծախսում, քանի որ աշխատանքի մեջ ներգրավում են միայն այն մկանները, որոնք տվյալ շարժողական գործողության մեջ ունեն որևէ գործառույթ: Գրոհի ընթացքում տեխնիկապես գրագետ

ըմբիշները մրցակցի դիմադրության հաղթահարման նպատակով շեշտադրված կերպով օգտագործում են մկանների հնարավորությունները: Բացի դա, նրանք ակտիվորեն կիրառում են սեփական քաշը, սեփական մարմնի և մրցակցի շարժման իներցիան:

Տեխնիկատակտիկական գործողությունների արդյունավետությունը կախված է հնարքի կատարելիս ստեղծված իրավիճակի գնահատման և անհրաժեշտ շտկումներ կատարելու կարողությունից: Այստեղից երևում է, որ ըմբիշը պետք է կարողանա ոչ միայն լավ կատարել հնարքները, այլև՝ իրավիճակից ելնելով, առավելագույն կարժամանակում ճիշտ որոշում կայացնել:

Որքան կատարելագործված և հղկված է ըմբիշի տեխնիկան, այնքան ավելի մեծ են մարզական բարձր նվաճումների հասնելու նրա հնարավորությունները: Այդ պատճառով էլ ոչ միայն տեխնիկական ամբողջությամբ, այլև նրա առանձին տարրերի ուսուցումը մարզման և սպորտային պատրաստության անբաժան մասն է:

Սպորտային ըմբշամարում գոյություն ունեն հարձակողական, պաշտպանողական, հակահարձակողական և այլ տեխնիկատակտիկական գործողություններ: Հարձակողական գործողությունները գոտեմարտերում հաղթանակի հասնելու հիմնական միջոցներն

են [9]: Ընթիշի պատրաստության մյուս կողմերը դրսևորվում են հարձակողական գործողություններում, և նրանց կատարելության աստիճանով է պայմանավորված մարզիկի մասնակցության հաջողությունը մրցումներում: Այսպիսով՝ հարձակողական գործողությունները ըմբշամարտում հանդես են գալիս յուրօրինակ պրիզմայի դերում, որի միջով բեկվում են պատրաստության մնացած կողմերը [11]: Հարձակողական գործողությունների արդյունավետությունը կախված է հնարքի կատարման ժամանակ ստեղծված իրավիճակի գնահատման և անհրաժեշտ վերակառուցումներ կատարելու կարողությունից, որն անհրաժեշտ արդյունքի հասնելու հնարավորություն կտա: Այստեղից երևում է, որ ըմբիշը պետք է կարողանա ոչ միայն լավ կատարել հարձակողական գործողությունները, այլև՝ իրավիճակից ելնելով, առավելագույն կարճ ժամանակում ճիշտ որոշում կայացնել:

Ցանկացած գործունեության ոլորտում շարժողական գործողությունների ուսուցումն անհրաժեշտ է: Սակայն միայն ֆիզիկական դաստիարակության և սպորտային մարզման բնագավառում է դրանց ուսումնասիրությունը հանդես գալիս որպես ուսուցման օբյեկտ, քանի որ շարժողական գործունեությունը կատարելագործման և՛ առարկա է, և՛ միջոց, և՛ նպատակ [2]:

Մարզման գործընթացում տեխնիկական պատրաստություն և ուսուցում ասելով հասկացվում է ընտրած մարզաձևի տեխնիկայի տիրապետում: Ինչ մնում է ֆիզիկական վարժությունների տեխնիկային, ապա դա այն վարժությունների կատարման եղանակն է, որը ներառում է տարածության հաղթահարման, մրցակցի հետ փոխգործողությունների ընթացքում իրականացվող հնարքների ամբողջությունը:

Մասնագիտական գրական աղբյուրների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ ըմբշամարտի մարզական գործունեությունում տեխնիկական գործողությունների ուսուցման հաջողությունն առաջին հերթին կախված է մարզվողների բնատուր տվյալներից և ուսումնական գործընթացի անհրաժեշտ պայմանների առկայությունից:

Առաջին կարևոր պայմանը

մարզվողի ֆիզիկական պատրաստվածության բավարար մակարդակն է: Դասկանակ մարզիկների՝ շարժողական զանազան ընդունակությունների՝ ուժի, արագաշարժության, դիմացկունության, կոորդինացիայի, ճկունության, ճարպկության, հողերի շարժողականության առկայությունն է [1]:

Նախքան ուսուցումը սկսելն առաջին հերթին անհրաժեշտ է պարզել, թե ինչպիսին է ֆիզիկական պատրաստվածության մակարդակը, և եթե

ծրագրված շարժողական գործողությունները յուրացնելու համար այն բավարար չէ, պետք է պլանավորել և իրականացնել նախնական ֆիզիկական պատրաստության անհրաժեշտ պարամունքներ [2, 6]:

Երկրորդ պայմանը շարժողական կոնկրետ պատրաստությունն է, այսինքն՝ տվյալ մարզաձևին բնորոշ շարժողական գործողությունների կատարման տեխնիկայի տիրապետումը: Եթե նշված պատրաստության կողմերը բավարար չեն, ապա մարզիչը պետք է լրացուցիչ միջոցներ ձեռնարկի, առաջարկելով իր սաներին կատարել մասնագիտությանը համապատասխանող վարժություններ, որոնք մատչելի կլինեն մարզվողի համար և կօգնեն ձևավորելու շարժողական կոնկրետ կողմեր և պատկերացումներ [2]:

Եվ, վերջապես, **երրորդ պայմանը** սկսնակ մարզիկների հոգեբանական պատրաստությունն է: Նրա հենքը շարժողական գործողության հիմնավորումն է, այսինքն՝ տեխնիկայի տարրերի կամ շարժողական կոնկրետ գործողության ուսուցումը [5, 6]:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել, որ սպորտային վարժությունների և հնարքների տեխնիկայի ուսուցման ժամանակ կարող են հակասություններ ծագել, կապված մի կողմից՝ առաջադրվող շարժողական խնդիրների

բարդության, մյուս կողմից՝ մարզվողների ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության մակարդակի հետ [2, 4]: Այդ պատճառով, յուրաքանչյուր մարզիչ, հատկապես, մենապայքարային մարզաձևերում, պետք է հաշվի առնի նշված հասկացությունները և համապատասխան ճշգրտումներ կատարի ուսուցման և մարզման գործընթացում:

Որպեսզի շարժողական գործողության (հնարք, վարժություն) ուսուցումն անցնի առավել արդյունավետ, անհրաժեշտ է պահպանել դիդակտիկայում ընդունված՝ դրա կազմակերպման առանձնահատկություններին ուղղված հանրահայտ պահանջները: Դրանցից առավել կարևորների թվին է դասվում մարզվողների ճանաչողական և շարժողական հնարավորությունների հաշվառումը [7]: Այդ նպատակով մասնագետները և գիտնականները խորհուրդ են տալիս մարզման գործընթացում ըմբիշների բեռնվածությունը հնարավորինս մոտեցնել մրցակցական պայմաններին:

Ինչպես ամեն մի ուսումնական գործընթաց, սպորտային վարժությունների և հնարքների ուսուցումը ևս, հիմնվում է դիդակտիկայի հայտնի սկզբունքների վրա՝ ակտիվության և գիտակցականության, մատչելիության,

սիստեմայնության, պահանջների աստիճանական բարձրացման, կայունության և այլն: Դիդակտիկ սկզբունքները, բնականաբար, հանդես են գալիս որպես մարզիչ-մանկավարժների, մարզվողների և սովորողների գործունեությունը սահմանող ու կանոնակարգող ելակետային դրույթների ամբողջական համակարգ [6]: Միևնույն ժամանակ, նշված դիդակտիկ սկզբունքները չեն կարող իրականացվել միմյանցից մեկուսացված, ընդհակառակը, մանկավարժական պրակտիկայում դրանք ձևավորվում և իրականություն են դառնում դիալեկտիկական միասնության մեջ:

Այսպիսով՝ ուսուցման որակը վճռորոշ կերպով կախված է նրանից, թե ինչպես են յուրացնում իրենց խնդիրները մարզիչը և մարզիկները: Այդ առումով մարզման գործընթացում ուսուցման նպատակի և խնդիրների մշակումը, մշտապես ունի շատ կարևոր նշանակություն և մինչ այժմ գտնվում է հետազոտողների ուշադրության կենտրոնում [2, 5]: Այն ունի իր բարդությունները, որոնք պայմանավորված են նրանով, որ յուրաքանչյուր շարժողական գործողություն կատարվում է ժամանակի և տարածության մեջ կիրառվող որոշակի ջանքերի շնորհիվ: Այս ամենը բարդացնում է ցանկացած ֆիզիկական վարժության տեխնիկայի ուսուցման գործընթացը:

Տեխնիկայի ուսուցման գործընթացում հարկավոր է հաշվի առնել, որ ցանկացած շարժողական գործողության, հնարքի տարրերի, միջոցների, տեխնիկական բաղկացած է տարբեր բաղադրիչներից: Օրինակ՝ սպորտային ըմբշամարտում հնարքի իրականացումը, նրա տեխնիկական բաղկացած է մրցակցին մոտենալուց, բռնվածք կատարելուց մրցակցի հավասարակշռությունը խախտելուց, հնարքի ամբողջական կատարումից և վերջնական դրույթունից:

Նոր շարժողական գործողությունների տեխնիկայի հետ ծանոթացումը, յուրացումն ու կատարումը հենվում է շարժողական այն փորձի վրա, որն այդ մարզիկն արդեն ձեռք է բերել նախորդ պարապունքների ընթացքում, ինչպես նաև ուսուցանվող շարժողական գործունեության առանձին բաժինների կամ բաղադրամասերի ճանաչման կարողության հենքի վրա:

Ուսուցման գործընթացը կառուցվում է ուսուցման նպատակի և խնդիրների ըմբռնման հիման վրա: Սովորաբար, կրթական ծրագրերում որպես ուսուցման նպատակ նշվում է շարժողական գործողության տիրապետումը, բայց ոչ տիրապետման անհրաժեշտ աստիճանը:

Գոյություն ունի շարժողական գործողության յուրացման չորս աստիճան [2]:

Առաջին աստիճանում մարզվողները պատկերացում են կազմում ուսուցանվող շարժողական գործողության մասին, յուրացնում են բնորոշ գծերը, կարողանում են այն զանազանել այլ գործողություններից, սակայն դեռևս չունեն պրակտիկ կատարման փորձ: **Երկրորդ աստիճանում** մարզվողները յուրացնում են շարժողական գործողության կատարման ուսուցանվող եղանակը և կարողանում են այն կատարել ստանդարտ պայմաններում: **Երրորդ աստիճանում** սովորողները կարողանում են որոշել շարժողական խնդրի լուծման օրնաչափությունները, ինչը հնարավորություն է տալիս շարժողական խնդիրները լուծել ինչպես ստանդարտ, այնպես էլ՝ փոփոխական և էքստրեմալ պայմաններում: Նրանք ի վիճակի են ինքնուրույն բացահայտել և վերացնել սխալները: **Չորրորդ աստիճանում** ձևավորվում է տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և շարժողական խնդրի լուծման նոր տարբերակներ մշակելու, ինչպես նաև շարժողական խնդիրները ինքնուրույն ձևակերպելու կարողությունը: Շարժողական գործողության չորրորդ աստիճանի տիրապետումը հիմք է հանդիսանում շարժողական «խիզախության» և ճարպկության համար: Այս ամենի հիման վրա ձևավորվում է շարժողական նոր խնդիրներ հայտնագործելու և

դրանց լուծման նորովի ուղիներ գտնելու կարողությունը [2]:


Հիմնվելով սոցիոլոգիական հարցման մանկավարժական դիտումների և մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների վրա՝ ուղքերի խաչաձև բռնվածքով կատարվող շրջումները դասակարգել չորս խմբի. 1. գլորումով, 2. ոլորումով, 3. անցումով, 4. թավալզորումով:

Ընդ որում փորձագետների մեծամասնությունը (82%) դասակարգված հնարքներից միայն գլորումով և ոլորումով շրջումներն են համարում բազային հնարքներ:

Մանկավարժական դիտումներից պարզվեց, որ ուղքերի խաչաձև բռնվածքով շրջումների ուսուցման ժամանակ կիրառվում են ուսուցման երկու մեթոդ՝ մասնատված և ամբողջական, սակայն հարցումները ցույց տվեցին, որ վերոհիշյալ հնարքների ուսուցման ժամանակ մասնագետների 20%-ը նախապատվություն են տալիս մասնատված մեթոդին, այլ կերպ՝ հնարքի փուլ առ փուլ ուսուցմանը, հարցվածների 50%-ը գերադասում է ուսուցումը կազմակերպել ամբողջական մեթոդով, իսկ 30%-ը՝ նախընտրում են վերոհիշյալ մեթոդները զուգակցել միմյանց հետ:

Ուոքերի խաչաձև բռնվածքով կատարվող ոլորումով շրջումների ուսուցման ժամկետներին վերաբերող հարցերից պարզվեց հետևյալը. մասնագետների 41%-ը հիմնվելով իրենց աշխատանքային փորձի վրա, համարում են, որ դրանց ուսուցումը պետք է սկսել 3-4-րդ ամսից, 25%-ը նշում են, որ

ուսուցումը պետք է սկսել 6-րդ ամսից, 20%-ը գտնում է որ ուոքերի խաչաձև բռնվածքով շրջումների ուսուցումը պետք է սկսել 2-րդ տարվանից, իսկ մի խումբ մասնագետներ էլ (14%) ձեռնպահ են մնացել գտնելով, որ այդ հարցում սահմանազատում մտցնելը տակավին սխալ է (տրամագիր 1):



Տրամագիր 1. Հարցման մասնակցած մարզիչների կարծիքները նշված հնարքների ուսուցման ժամկետների վերաբերյալ

Բնական է, որ ցանկացած շարժողական գործողություն, այդ թվում և ըմբշամարտում հնարք կատարելու համար, ըմբիշից պահանջվում է շարժողական որոշակի ընդունակությունների և հմտությունների այս կամ այն չափի դրսևորում, որը պայմանավորված է տվյալ մարզաձևի յուրահատկությամբ:

Հարցված մասնագետների մեծամասնության կարծիքով (78%) ուոքերի խաչաձև բռնվածքով կատարվող հնարքների ուսուցման ժամանակ հատուկ պահանջներ են ներկայացվում ձեռքերի և իրանի հիմնական մկանախմբերին:

Հարցվածների 42%-ի կարծիքով առավել արդյունավետ են համարվում

ոտքերի խաչաձև բռնվածքով կատարվող գլորումով շրջումները, 48%-ի կարծիքով՝ ոլորումով շրջումները, իսկ ոտքերի խաչաձև բռնվածքով կատարվող անցումով և թավազլորումով շրջումներին նախապատվություն տվեցին մասնագետների 10%-ը:

Մասնագետների 65%-ի կարծիքով ոտքերի խաչաձև բռնվածքով շրջումների ուսուցման գործընթացը պետք է կազմակերպել հետևյալ հաջորդականությամբ. 1-ին՝ գլորումով շրջումներ, 2-րդ՝ ոլորումով շրջումներ, 3-րդ թավազլորումով շրջումներ և 4-րդ անցումով շրջումներ:

Հարցման արդյունքների և մանկավարժական դիտումների վերլուծությունից պարզվեց, որ մարզիչների 72%-ը գտնում է, որ ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է ըմբշամարտի փոքրագույն տարրերի (օպերացիաների) յուրացումից:

Ուսումնասիրության են ենթարկվել Ըմբշամարտի միջազգային ֆեդերացիայի տեղեկատվական ռեսուրսում առկա՝ 2023-2024 թթ. Եվրոպայի, Ասիայի, Աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում անցկացված 1343 գոտեմարտի վիճակագրական տվյալները [12]: Ուսումնասիրությունից պարզվեց, որ 1343 գոտեմարտում կիրառվել 1285 հնարք՝ որից 876-ը կանգնած դրությունից (70.1%), 409-ը՝

պարտեր դրությունից (29.9%): Կանգնած դրությունում 459 հնարք (52.4%) կատարվել է ոտքերի բռնվածքով, իսկ պարտեր դրությունում ընդամենը 60 հնարք է (14.6%) կատարվել ոտքերի խաչաձև բռնվածքով: Այստեղից հետևում է, որ կանգնած դրությունից ոտքերի բռնվածքով կատարվող հնարքների և պարտեր դրությունից ոտքերի խաչաձև բռնվածքով կատարվող շրջումների միջև եղած կապն այնքան էլ ամուր չէ, ինչը վկայում է նախնական ուսուցման գործընթացի թերի կողմերի մասին:

Եզրակացություն: Գիտամեթոդական գրականության վերլուծությունը, մանկավարժական դիտումները և անվանի մասնագետների հետ անցկացված հարցումները մեզ հնարավորություն են տալիս հանգելու հետևյալ եզրակացության.

1. Սրունքների խաչաձև բռնվածքով կատարվող շրջումների ուսուցումն հիմնականում իրականացվում է մասնատված (20%), ամբողջական (50%) մեթոդներով և զուգակցված (30%):

2. Գոյություն ունեն սրունքների խաչաձև բռնվածքով կատարվող 4 տիպի շրջումներ, որոնցից միայն ոլորումով և գլորումով շրջումներն են համարվում բազային հնարքներ և ուսուցումը պետք է սկսել գլորումով

շրջումից, որից հետո նոր միայն անցնել լրորումով շրջումի ուսուցմանը:

3. Ուսուցման արդյունավետություն բարձրացմանը նպաստում են ոչ միայն ուսուցման դիդակտիկ սկզբունքների պահպանումը, այլև՝ ըմբշամարտի փոքրագույն տարրերի (օպերացիաների) յուրացումը:

4. Սրունքների խաչաձև բնվածքով կատարվող շրջումների ուսուցման

ժամանակ հատուկ պահանջներ են ներկայացվում ձեռքերի և իրանի հիմնական մկանախմբերին:

5. Սրունքների խաչաձև բնվածքով կատարվող շրջումների ուսուցումը կապակցել կանգնած դրությունից ուղքերի բնվածքներով կատարվող հնարքների հետ:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Алиханов И.И., Техника вольной борьбы, М., ФиС, 1977, 216 с.
2. Боген М.М., Обучение двигательным действиям, М., ФиС, 1985, 192 с.
3. Вареников. Н.А., О.В. Губин, М.С. Сандраков Техническая подготовка борца: обучение и совершенствование: учебное пособие для вузов физической культуры. – Воронеж: 2022.– ВГАС. – 120 с.
4. Матвеев Л.П., Теория и методика физического воспитания, М., ФиС, 1976, 304с.
5. Матвеев Л.П., Теория и методика физической культуры.,М., ФиС, 1991, 543 с.
6. Озолин Н.Г., Современная система спортивной тренировки, М., ФиС, 1970, 480с.
7. Пилоян Р.А., Мотивация спортивной деятельности, М., “ФиС”, 1984, 104 с.
8. Пилоян Р. А. Двигательная структура спортивной борьбы с точки зрения теории деятельности [Текст] / Р. А. Пилоян, Ю. А. Шахмурадов // Теория и практика физической культуры. – 1997. – № 3. – С. 5–8.
9. Подливаев Б. А. Анализ соревновательной деятельности борцов вольного и греко-римского стиля на олимпийском турнире в Сиднее / Б. А. Подливаев // Теория и практика физической культуры. – 2001. – № 9. – С. 33 – 38
10. Султанакмедов.Г.С. Основы технической подготовки в вольной борьбе: учебное пособие.М.: ООО «Торговый дом «Советский спорт», 2020. — 128 с.
11. Шахмурадов Ю.А. Вольная борьба: научно-методические основы многолетней подготовки борцов, Махачкала, 2011, 368 с.

12.https://app.powerbi.com/view?r=eyJrIjoiMTNmMTVkMWItY2ZkOC00MTg2LWFMmNjAtNTk4MzI0MTM4NzcxlwiidCI6IjU0MGJlYjgzLTY0MDctNDk3OSIiZWExLTdmODU0OTViMTI1MSIsImMiOjI9&utm_source=uww.io&utm_medium=urlshortener

METHODOLOGICAL FEATURES OF TEACHING LEG CROSS-TURN TECHNIQUES IN FREESTYLE WRESTLING

*Kh. T. Harutyunyan,
Armenian State Institute of Physical
Culture and Sport, Yerevan, Armenia*

ABSTRACT

Keywords: freestyle wrestling, technique, teaching process, leg cross-turns, teaching sequence, teaching methods.

The relevance of the study. The relevance of this study is determined by the high effectiveness of leg cross-turns, as a single hold enables a wrestler to perform an unlimited number of consecutive turns, earning two points for each execution. Moreover, these turns can be readily combined both with other turning techniques and among themselves, which substantially increases their competitive efficiency. In addition, in freestyle wrestling, the majority of techniques performed from the standing position involve leg grips; therefore, the development of correct technical connections significantly enhances the effectiveness of executing leg cross-turns.

Methods and organization of the study. To achieve the research objectives, the following methods were employed: analysis and review of scientific and methodological literature, pedagogical observation, sociological survey, and analysis of bout statistics.

Results and discussion. The results of the study allowed for the classification of leg cross-turns into four distinct groups. Furthermore, the teaching methods applied in the instructional process were identified, along with the optimal sequence and timing of instruction and the most effective technical variations of leg cross-turns.

Conclusion. Enhancing the efficiency of teaching leg cross-turns depends not only on strict adherence to didactic principles but also on the mastery of fine technical elements (operations) and the effective integration of these turns with standing techniques that involve leg grips. Particular emphasis in the training process should be placed on strengthening the major muscle groups of the upper limbs and trunk.

ОСОБЕННОСТИ ОБУЧЕНИЯ ПЕРЕВОРОТАМ СКРЕСТНЫМ ЗАХВАТОМ ГОЛЕНЕЙ В ВОЛЬНОЙ БОРЬБЕ

Х. Т. Арутюнян,

*Государственный институт физической
культуры и спорта Армении, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова. Вольная борьба, техника, процесс обучения, перевороты скрестным захватом голеней, последовательность обучения, методы обучения.

Актуальность исследования. Актуальность работы обусловлена тем обстоятельством, что перевороты скрестным захватом голеней обладают высокой эффективностью, поскольку с помощью одного захвата возможно выполнить неограниченное количество переворотов и после каждого переоворота получить 2 балла. Кроме того, данные перевороты легко сочетаются с другими переворотами и между собой, что значительно повышает эффективность их выполнения. Помимо этого, в вольной борьбе большинство приемов, выполняемых из стойки, осуществляются с захватами ног, что в условиях создания необходимых связей значительно повышает эффективность выполнения переворотов скрестным захватом ног.

Методы и организация исследования: Для достижения цели исследования и решения поставленных задач были применены следующие методы: изучение и анализ научно-методической литературы, педагогические наблюдения, социологический опрос, изучение аналитических данных схваток.

Анализ результатов исследования. В результате исследования перевороты скрестным захватом голеней были классифицированы на 4 группы, выявлены применяемые в процессе их обучения методы, последовательность обучения, сроки начала обучения, наиболее эффективные разновидности.

Краткие выводы. Повышению эффективности обучения переворотам скрестным захватом голеней способствуют не только соблюдение дидактических принципов обучения, но и освоение мельчайших элементов борьбы (операций), а также сочетание данных переворотов с приемами, выполняемыми из стойки с захватами ног. При обучении предъявляются особые требования к основным мышечным группам рук и туловища.

Տեղեկություններ հեղինակի մասին

Խաչիկ Թորգոմի Հարությունյան՝ Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: khachik.harutyunyan@sportedu.am

Information about the author

Khachik Torgom Harutyunyan, Associate Professor, Department of Wrestling and Oriental Sports, Armenian State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia, E.mail: khachik.harutyunyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 13.09.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 14.09.2025–ին:

Գրախոս՝ դոցենտ Յու. Գրիգորյան

**ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ե.Լ. Հովսեփյան,

*Ն.Վ. Գոգոլի անվան 35 հիմնական դպրոցի
ֆիզկուլտուրայի ուսուցիչ, Երևան, Հայաստան*

Առանցքային բառեր: Ֆիզիկական և զինվորական դաստիարակություն, հայ մտավորականներ, երեխաների համակողմանի զարգացում, ազգային ավանդույթներ:

Հետազոտության արդիականություն: Դարեր ի վեր մարդկությունը հումանիստական գաղափարներ է սերմանել երեխաների մեջ և, պատահական չէ, որ անձի դաստիարակությունն ամեն մի հասարակության սոցիալական, հոգեբանական, մանկավարժական կարևորագույն հիմնախնդիրներից է: Պատահական չէ, որ ներկայումս լայնորեն տարածված է այն դրույթը, որ հասարակության հետագա զարգացման վիճակը և կուլտուրան ամբողջությամբ պայմանավորված է ոչ միայն նրանով, թե կրթության վերջնարդյունքում սովորողներն ինչպիսի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք կբերեն, այլև ինչպիսի սոցիալական, բարոյական, համամարդկային արժեքների կտիրապետեն: Դպրոցը և մանկավարժությունն ընտրում են բարոյական մշակույթի մատչելի տարրերը և ստեղծում են

անձնավորության բարոյական դաստիարակության ծրագրերն ու պլանները, որոնցում առաջին պլան են մղվում մարդկանց նկատմամբ բարձրաբարո վերաբերմունքի (ազնվության, շիտակության, մարդասիրության, բարեկամության և այլն) դրսևորումները, հայրենասիրական, քաղաքական և իրավական կուլտուրայի, կարգապահության և պատասխանատվության դաստիարակումը [8]:

Ներկայումս մանկավարժներին, ծնողներին և ընդհանրապես հասարակությանը մտահոգում է այն հանգամանքը, որ դեռևս անցած դարի վերջերից քաղաքական, սոցիալական և տնտեսական պայմանների վատթարացումից Հայաստանի դպրոցներում խախտված է սովորողների բարոյահոգեբանական, մանկավարժական և դաստիարակչական չափանիշները [1]: Այն ձեռքբերումները, որոնք մեծ դժվարությամբ հիմնավորվել էին դպրոցներում, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման գործում, մատնված են անհաջողության: Հայ հանրային կյանքից դուրս մղվեցին ազգային, կրոնական, բարոյական կենցաղավարման Sportedu.am

շատ արժեքներ: Դրա հետևանքով առաջացավ գաղափարական հսկայական դասարկություն[10]:

Ներկայումս ֆիզիկական կուլտուրայի դասերին հստակ չի շեշտադրվում դաստիարակչական խնդիրները և կարծես դրանք մղված են հետին պլան, մինչդեռ ֆիզիկական դաստիարակությունը սովորողների մոտ ենթադրում է այնպիսի կարևոր համամարդկային հատկությունների ձևավորում, ինչպիսիք են՝ ընկերասիրությունը, ազնվությունը, մարդասիրությունը, կարեկցանքը, փոխօգնությունը և այլն: Այս բոլորը առաջադրում են անդրադարձ կատարել ոչ հեռավոր անցյալում հայ երեխաների ֆիզիկական դաստիարակության դերին և նշանակությանը [3]: Վերոգրյալը փաստում է մեր հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել հայ մտավորականների կարծիքը և դիրքորոշումը երեխաների ֆիզիկական դաստիարակության մասին:

Հետազոտության խնդիրները:
1. Ներկայացնել հայ մտավորականների՝ Փ. Բյուզանդի, Լ. Ամիրխանյանի, Ղ. Աղայանի և այլոց հայացքները երեխաների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ: 2. Բացահայտել Վարդան Հացունու կողմից բնութագրված

երեխաների ֆիզիկական դաստիարակության խնդիրները և բովանդակությունը:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության մեթոդներն են՝ վերլուծել և ընդհանրացնել մեր հետազոտությանն առնչվող գրական աղբյուրները, հարցազրույց:

Կատարվել է մասնագիտական գրական աղբյուրների ուսումնասիրություն: Հետազոտությունը կազմակերպվել է Երևանի Ն.Վ.Գոգոլի անվան 35 հիմնական դպրոցում, որին մասնակցել են 7-9-րդ դասարանի 50 աշակերտներ:

Վ. Հացունու գործունեությունը նորովի մեկնաբանման անհրաժեշտություն ունի: Դպրոցականների հետ հարցազրույցում պարզվեց, որ նրանք իրազեկված, ծանոթ չեն Վ. Հացունու կենսագործունեության, նրա մանկավարժական հայացքների մասին: Երեխաներին ներկայացրեցինք Վ. Հացունու արժեքավոր մտքերը երեխաների հոգևոր և մտավոր, զինվորական դաստիարակության վերաբերյալ՝ միաժամանակ կարևորելով մայրական դաստիարակությունը:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Երեխաների դաստիարակության ընդհանուր համակարգում իր ուրույն տեղն ունի ֆիզիկական դաստիարակությունը, որն անքակտե-

լիորեն կապված է մտավոր, բարոյական, գեղագիտական, էկոլոգիական, իրավական և այլ դաստիարակության հետ: Գիտնականները փաստում են՝ այն սկսվել է դեռևս քաղաքակրթության արշալույսին՝ տոհմական համակարգում [4,7,9]:

Ինչպես դաստիարակության մյուս կողմերը, այնպես էլ ֆիզիկական դաստիարակության հիմքը դրվում է ընտանիքում. այդ եղել է անցյալում և առավել ևս ներկայում: Անձի ձևավորման սկզբնական ժամանակաշրջանում այն գալիս ֆիզկուլտուրայի արժեքների ձևավորման և փոխանցման հիմնական օղակն է [11]:

Հայ մտավորականներ՝ Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Րաֆֆին, Ղ. Աղայանը և այլք առանձնակի են կարևորել ֆիզիկական դաստիարակությունը անձի համակողմանի զարգացման գործում:

Այսպես՝ Ղ. Աղայանը (1963) գրում է. «Դաստիարակության միակ նպատակը պիտի լինի զարգացնել մարդու երեք կողմերի (ֆիզիկական, մտավոր, բարոյական) միասնությունը, որպեսզի նա լինի ուժեղ, խելոք և առաքինի» [11]:

Դեռևս 1872 թվականին Ամիրխանյանցը գրել է. «Եթե դպրոցում չկա ֆիզկուլտուրա, ապա նա չի կարող հասնել իր նպատակին: Ֆիզկուլտուրան

միայն ներդաշնակ, ֆիզիկական և բարոյական միջոց չէ: Այն նույնքան կարևոր է, որքան կարևոր են հայոց լեզուն և մաթեմատիկան»: Եվ պատահական չէ, որ ավելի քան 100 տարի առաջ Սանասարյան վարժարանում շաբաթական ուսումնական օրակարգում ֆիզկուլտուրայի, մաթեմատիկայի, լեզուների դասերին հատկացվում էին հավասարաչափ քանակությամբ ժամեր:

Փավստոս Բուզանդը, նախ վկայելով, որ Մամիկոնյանները մանկուց ստանում էին մտավոր և ֆիզիկական կրթություն՝ «զիրահանգ հոգեպես և մարմնապես», որ Մամիկոնյաններից Արտավազդը շատ քաջ, ուժեղ և ճարպիկ մարդ էր, Գայլ Վահանի որդի Սմբատը ոչ ոքի չէր զիջում քաջությամբ և ուժով, այնուհետև իր պատմության վերջում հիշատակելով անապատներում, քարանձավներում բնակվող մարդկանց «ուսուցիչ և առհասարակ տեսուչ» Գինդի մասին, գրում է, որ նա և աշակերտները «շոջում էին բոպիկ ոտներով..., նեղվում, տառապում, չարչարվում էին..., ենթարկվում էին ցրտի և տոթի, քաղցի և ծարավի՝ Աստծու սիրո համար: Նրանց մեջ կային աշակերտներ, որոնք նմանվում էին իրենց վարպետին..., որոնց անուններն են Վաչակ, Արտույտ, Մարախ: Սրանց ընկերն էր Տրդատը»: Վերջինս «բնակություն էր հաստատել Տարոն գավառում, որտեղ իր համար եղբայրանոցներ

էր շինել»: Գինդի և նրա աշակերտների կյանքը հիշեցնում է հին հունական Սպարտա քաղաք-պետությունում գործող ֆիզիկական դաստիարակության համակարգը, ուր մարդկանց կոփում և դաստիարակում էր բնության դաժան արհավիրքների միջոցով:

Սակայն ներկա ժամանակաշրջանում սովորողների ֆիզիկական դաստիարակության ձևերը, միջոցները և մեթոդները մեծ մասամբ կորսված են և շատ դեպքերում գործնականում այն շատ քիչ է կիրառվում: Պատճառներից մեկն էլ այն է, որ մասնագետները քիչ են անդրադառնում հայ մտավորականների անչափ արժեքավոր գաղափարներին: Այդ նկատառումով մեր աշխատանքում փորձել ենք նկարագրել Վ. Հացունու հայացքները երեխաների ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ: Քանզի նրա գործունեությունը նորովի մեկնաբանման անհրաժեշտություն ունի, վերաարժեքավորելու և վերագնահատելու խիստ անհրաժեշտություն:

Վ. Հացունին իր աշխատանքում «Դաստիարակությունը հին հայոց քով» (1923) առանձնակի ուշադրություն է դարձրել երեխաների ֆիզիկական դաստիարակության բովանդակությանը և դրանց նշանակությանը՝ հաշվի առնելով երեխաների տարիքային զարգացման առանձնահատկությունները,

որոնք ուղեկցվում են աշխատանքային հինգ փուլերով [5]

1. **առտնին դաստիարակություն (դայակ, դաստիարակ),**
2. **մարմնական և զինվորական կրթություն (ֆիզիկական դաստիարակություն),**
3. **հանդիսական ուսմունք (հրապարակ, որտեղ հանդիսատեսը բազմությունն է),**
4. **մարզական հրահանգներ (ֆիզիկական պատրաստություն),**
5. **զինվորական հրահանգներ (սուսերաձգություն՝ փոքր տեսակը՝ թուր, աղեղնավարություն (Հայկ Նահապետ) և այլ զինվորական հրահանգներ):**

Հայ ազնվական մանուկը լույս աշխարհ գալով՝ կարոտում էր 3 տեսակ սննդի՝ մարմնական, հոգևոր և մտավոր [2]:

Ծննդյան նախնական շրջանի ավարտմամբ՝ դայակը հրաժարվում էր իր պաշտոնից ու մանկանը հանձնում ծնողներին: Այստեղից սկսվում էր բուն կրթությունը և դայակին հաջորդում էր դաստիարակը: Զավակների կրթությանը թեև հետամուտ էր ու պահանջող, բայց նրա մեջ իրական բաժին չունի հայ իշխանը, և ամբողջ գործը հանձնված է դաստիարակին: Միայն մայրն էր, որ հսկում էր երեխաների դաստիարակությունը:

Կրոնական ու մտավոր դաստիարակությանը զուգընթաց և հավասար, հաճախ ավելի է պատանիների կողմից կարևորվել «մարմնոյ կրթությունը» (ֆիզիկական դաստիարակություն): Սրա մեջ մտնում էր շարժումն ու զվարճությունը:

Պախաճճամք. նշմարվում է պարսկերեն «պախ» արմատը, որը նշանակում է գեղեցկություն, և «ճճամ», որը մոտենում է թուրքերեն՝ գուցե պարսկաձին ճիճի՝ խաղալիք բառին:

Ինչ տեսակ խաղալիքներ էին դրանք: Սրանք իրենց շրջապատող և իրենց ընտանի ձևերն են, արվեստից և առավելապես բնությունից վերցված: Այսպես՝ նրանց պախաճճամքն էին արձանիկները, զենքերի փոքրիկ նմանությունները, նվագարանոցը, արվեստի գործիքները, ծանոթ անասունները, թռչունները և այլն:

Շարժողական գործողությունների ուսուցման մեթոդաբանության զարգացման մեջ մեծ ներդրում են ունեցել նաև Ա. Ա. Տեր-Հովհաննիսյանը և Ի. Ա. Տեր-Հովհաննիսյանը [9, 22]: Գիտամեթոդական գրականության նյութերի և մանկավարժական փորձի մանրակրկիտ վերլուծության և ընդհանրացման միջոցով նրանք մշակեցին ուսուցման հայեցակետ՝ հիմնված մանկավարժական դիդակտիկ 13 պահանջների վրա: Մենք համակարծիք ենք հեղինակների հետ, հատկապես այն մասով, ինչը վերաբերում է մարզական ընտրության մեթոդիկայի որակի բարելավմանը, ուսուցման գործընթացի տեխնիկական վերազինմանը, ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների և մարզիչների գիտելիքների ընդլայնմանն ու խորացմանը, նրանց շարժողական պատրաստության մակարդակի բարձրացմանը: Հատուկ կարևորություն ունի նաև Յու. Կ. Գավերդովսկու

(1991; 2007) առաջարկած համակարգը, որը ներառում է շարժողական գործողությունների ուսուցման 16 դիդակտիկ դրույթ: Դրանք լայնորեն կիրառվում են մարզական և ֆիզկուլտուրային կրթության մեջ՝ որպես արդյունավետ մեթոդական հիմք:

Եզրակացություն: Ուսուցումը՝ բարդ, նուրբ, բազմակողմանի և յուրահատուկ արվեստ է: Այն կազմակերպված գործընթաց է, որը նպատակ ունի հաղորդել և յուրացնել հատուկ գիտելիքներ ու կարողություններ՝ ուղղված սովորող երիտասարդության, ինչպես նաև տարբեր մարզաձևերով զբաղվող անձանց շարժողական, հոգևոր և ֆունկցիոնալ հնարավորությունների կատարելագործմանը: Ֆիզիկական վարժությունների ուսուցումը պետք է լինի մատչելի՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, սեռային, շարժողական և ֆունկցիոնալ զարգացման առանձնահատկությունները, ինչը հիմք և պարտադիր պայման է: Ուսուցումը չպետք է վերաճվի գիտելիքների, կարողությունների և հմտությունների մեխանիկական փոխանցման. այն երկկողմանի գործընթաց է, որտեղ ուսուցանողը և ուսուցանվողը գործում են սերտ համագործակցությամբ:

Ժամանակակից դիդակտիկական ներառում է ուսուցման ձևերի և արդյու-

նավետ մեթոդների կիրառում, համապատասխան միջոցների, չափորոշիչների ու ուսուցման հայեցակարգերի նպատակահարմար օգտագործում: Բացառություն չի կազմում նաև ֆիզիկական կուլտուրայի և մարզական կրթության

համակարգը, որն ապահովում է ոչ միայն շարժումների տեխնիկայի յուրացումը, այլև մարզական պատրաստվածության ընդհանուր մակարդակի բարձրացումը:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու., Մանկավարժություն, Մանկավարժ, Երևան, 2004, 451 էջ:
2. Մախչանյան Հ., Մանկավարժական մտորումներ, ԵՊՀ, Երևան, 1991, 21 էջ:
3. Ашмарин Б. А., Теория и методика педагогических исследований в физическом воспитании. М.: ФиС.- 1978. 223 с.
4. Баранов С. П., Сущность процесса обучения: М.: 1981.- 143 с.
5. Белинович В. В., Обучение в физическом воспитании.- М.: ФиС.- 1958.- 262 с.
6. Боген М. М., Обучение двигательным действиям.- М.: ФиС.- 1985.- с.192
7. Боген М. М., **Физическое воспитание и спортивная тренировка: обучение двигательным действиям.**- М.: Книжный дом Либроком. - 2010.- С. 105-142
8. *Гавердовский Ю. К., Опыт трактовки ортодоксальной дидактики в современном контексте обучения спортивным упражнениям // Теория и практика ФК.- 1991 № 8.- С. 12-20*
9. Гавердовский Ю.К., Обучение спортивным упражнениям: биомеханика, методология, дидактика.- М.: ФиС.- 2007.- 911 с.
10. Гальперин П. Я., Физические аспекты спортивного обучения // Теория и практика ФК.- 1973 № 12.- С. 39-43
11. Гальперин П. Я., Предисловие к книге "Физическое воспитание и спортивная тренировка: обучение двигательным действиям.- М.: Либкром. - 2010.- С. 3-5
12. *Зациорский В.М., Биомеханика. Учебник для институтов физической культуры.* - М.: ФиС., 1979. - 264 с.

13. Кун Л., Всеобщая история физической культуры и спорта: Пер. С венг./ Под Общ. Ред. В. В. Столбова.- М.: Радуга, 1982.- 399 с
14. Лапутин А. К., *Обучение спортивным движениям.* - Киев: Здоровье.- 1986.- 213 с.
15. Матвеев Л. П. Теория и методика физической культуры.- М.: ФиС., 1991.- 543 с.
16. *Мин Хе Чжин.* Целостно-деятельностный подход к систематизации методов физического воспитания // Научно-теоретический журнал «Ученые записки», 2009 № 11(57).- С.52-56
17. Озолин Н. Г., *Современная система спортивной тренировки.* – М.: ФиС.- 1970. – 477 с.
18. Попов Г. И. с соавт. Сопряженная техническая и физическая подготовка в спортивных единоборствах // Теория и практика ФК.- 2000 № 7.- С. 42
19. Попов Г. И., Обучение движениям: противоречия и пути решения // Российский журнал биомеханики.- 2000 № 2.- С. 1-6
20. Пономарев Н. И., Возникновение и первоначальное развитие физического воспитания М.: ФиС.- 1970. – 248 с.
21. Подласый И. П., Педагогика: учебник для вузов / И. П. Подласый. – 3-е изд., перераб. и доп. – М.: 2024.- 575 с.
22. Тер-Ованесян А.А., Тер- Ованесян И. А., Обучение в спорте.- М.: Советский спорт.- 1992.- 192 с.
23. Уссинг Ж., Воспитание и обуяение греков и римлян. СПб., 1899
24. <https://surl.li/gyapqy> [Մուտք՝ 08-11.10.2025]
25. <https://surl.li/aeoouz> [Մուտք՝ 14-17.10.2025]

**TRAINING AND ITS IMPLEMENTATION IN PHYSICAL EDUCATION AND SPORTS
ACTIVITIES.**

F. G. Ghazaryan¹, E. Z. Martirosyan¹ G. F. Ghazaryan²,

*¹Armenian State Institute of Physical
Culture and Sport, Yerevan, Armenia*

²Diving Federation of Armenia, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: Motor actions, physical exercise, education, upbringing, education system, models and concepts of teaching.

Research Relevance. Motor learning has a centuries-old history, during which the content and methods of instruction have continually evolved at times contradictorily, yet generally in a progressive direction. Despite substantial theoretical and practical advances, the study of motor learning remains an inexhaustible and unresolved issue, maintaining its significance and relevance for modern pedagogy and sports science.

Research Aim. o examine and synthesize selected issues of teaching methodology as a pedagogical system.

Research Methods and Organization. This article is designed as a descriptive review study. The primary methodological approach involved systemic, retrospective, and logical analyses aimed at summarizing the most rational and evidence-based experiences accumulated in the field.

Research Results Analysis. The pedagogical foundations of instruction in physical education and sports activities have been examined in the works of a relatively small group of authors. In practical physical education and sports training, knowledge concerning the motor actions being taught is commonly understood as “physical exercise technique.” Alongside pedagogical considerations, learning in this context adheres to specific patterns informed by biomechanics, psychology, and physiology. Consequently, the instructional process should cultivate not merely a collection of isolated facts, but an integrated system of knowledge. A key prerequisite for successful learning is the application of specific didactic principles and methodological rules. The development of motor skills and abilities plays a crucial role in enabling learners to effectively control their own movements. The specialized literature presents a variety of approaches aimed at enhancing the effectiveness of teaching motor actions, including pedagogical concepts,

methodological requirements, original didactic frameworks, and specialized models and standards for sports training.

Conclusion. Teaching is a multifaceted and distinctive pedagogical art - a process of transmitting knowledge and mastering specialized physical exercises directed toward the motor, mental, and functional development of learners. Education should not be reduced to the mechanical transfer of information. All motor actions practiced during the learning process must be performed in a specific ratio, bilaterally, and in both directions. Contemporary didactics emphasizes the necessity of employing well-formulated concepts and standardized learning models within the practice of physical education and sports instruction.

ОБУЧЕНИЕ И ЕГО РЕАЛИЗАЦИЯ В ФИЗКУЛЬТУРНО-СПОРТИВНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ.

*Փ. Գ. Կազարյան¹, Ջ. Յ. Մարտիրոսյան¹, Գ. Փ. Կազարյան²
¹Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения,
²Федерация прыжков в воду, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова: двигательные действия, физические упражнения, обучение, воспитание, система обучения, модели и концепции обучения.

Актуальность исследования. Обучение двигательным действиям имеет многовековую историю. В различных эпохах содержание обучения постоянно изменялось, в какой-то мере противоречиво, но в целом позитивно. Обучение движениям неисчерпаемая, незавершенная проблема и поэтому остается актуальной.

Цель исследования. Изучить и обобщить некоторые вопросы методологии обучения как педагогической системы.

Методы и организация исследования. Статья относится к числу описательных обзорных исследований. Основным методом является системно-ретроспективный и логический анализ, обобщение рационального опыта работы по проблеме.

Анализ результатов исследования. Педагогические основы обучения в физкультурно-спортивной деятельности освещены в работах небольшого числа авторов. В практике физического воспитания и спортивной подготовки знание об изучаемых двигательных действиях существует как «техника физических упражнений». Кроме педагогической направленности обучение здесь протекает по определенным закономерностям, биомеханики, психологии, физиологии. Поэтому в процессе обучения должна формироваться не сумма знаний, а система знаний. Основной предпосылкой успешного обучения является реализация конкретных дидактических принципов и правил. Формирование двигательных умений и навыков способствует успешному управлению движениями собственного тела. В специальной литературе существуют конкретные разработки для совершенствования эффективности обучения двигательным действиям, концепции и педагогические требования, авторские дидактические положения, используются специальные модели и эталоны спортивной подготовки.

Краткие выводы. Обучение многогранное и своеобразное педагогическое искусство, процесс передачи знаний и освоение специальных физических упражнений, направленных на двигательное, психическое и функциональное совершенствование обучающихся. Обучение не должно сводиться к механической передаче знаний. Необходимо все двигательные действия в процессе обучения выполнять в определенном соотношении билатеральными конечностями и в обе стороны. Современная дидактика диктует необходимость использования конкретных концепций и эталонов обучения в практике физкультурно-спортивного образования.

Տեղեկություններ հեղինակների մասին

Ֆրունզիկ Գաբրիելի Ղազարյան՝ մ.գ.դ., Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի պրոֆեսոր,

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ Երևան, Հայաստան, E-mail: frunz.ghazaryan@sportedu.am

Էրիկ Զավենի Մարտիրոսյան՝ մ.գ.թ., Ֆիզիկ մարզաձևերի ամբիոնի վարիչ, դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,

Երևան, Հայաստան, E-mail: erik.martirosyan@sportedu.am ORSID: 0009-0002-5171-1761

Գաբրիել Ֆրունզիկի Ղազարյան՝ մ.գ.թ., դոցենտ, Հայաստանի ջրացատկի ֆեդերացիա, Երևան, Հայաստան, E-mail: gabriel.ghazaryan72@mail.com

Information about the authors

Frunzik Gabriel Ghazaryan, Doctor of pedagogical Sciences, Professor of the Chair of Theory and Methodology of Physical Education and Adaptive Physical Culture, Arminian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: frunz.ghazaryan@sportedu.am

Erik Zaven Martirosyan, PhD in Pedagogy, Associate Professor of the Chair of Cyclic Sports, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: erik.martirosyan@sportedu.am ORSID: 0009-0002-5171-1761

Gabriel Frunzik Ghazaryan, PhD, Associate Professor, Diving Federation of Armenia, Yerevan, Armenia, E-mail: gabriel.ghazaryan72@mail.com

Հոդվածն ընդունվել է 03.10.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 04.10.2025–ին:

Գրախոս՝ մ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբյան

ԿԱՆԱՆՑ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԱՏԵ ՄԱՐՁԱԶԵՎՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀՅՈՒՄՆԱԿԱՐՆԵՐԸ

*Ա.Վ. Պողոսյան, Ն.Հ. Համբարձումյան,
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պեդագոգական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

Առանցքային բառեր: Մարզուհիներ, կարծրատիպեր, մրցաշարեր, մարզիչներ, լրատվամիջոցներ, ֆեդերացիաներ, միջազգային փորձ, կին կարատեիստներ:

Հետազոտության արդիականություն: Ժամանակակից հասարակությունում կանանց դերը սպորտում դարձել է ոչ միայն արդիական քննարկման առարկա, այլև սոցիալ-մշակութային զարգացման կարևոր ցուցիչ: Կանայք ավելի ակտիվորեն են ներգրավվում մրցակցային սպորտում՝ այդ թվում նաև այնպիսի ոչ ավանդական մարզաձևերում, ինչպիսին է կարատեն: Կարատեն՝ որպես մարտարվեստի ձև, պահանջում է ոչ միայն ֆիզիկական պատրաստվածություն, այլև հոգեբանական կայունություն և ինքնավստահություն: Կանանց ներգրավվածությունը այս ոլորտում չի սահմանափակվում միայն սպորտային հաջողություններով. այն ընդգծում է սեռային հավասարության և հնարավորությունների ընդլայնման հարցերը հասարակությունում [4,6]:

Այսօր էլ սպորտում կանանց դերը շարունակաբար ընդլայնվում է՝ ներառելով ոչ միայն ավանդական, այլև մարտական մարզաձևեր: Կարատեն, լինելով ուժի, կարգապահության և հոգեմարմնական ներդաշնակության մարզաձև, վերջին տարիներին Հայաստանում ևս սկսել է զրավել կանանց և աղջիկների ուշադրությունը [13]: Հայաստանում, ինչպես նաև աշխարհի շատ երկրներում, կարատեի նկատմամբ հետաքրքրությունը շարունակում է աճել, սակայն կանանց մասնակցությունը դեռևս հանդիպում է մի շարք մարտահրավերների: Այնուամենայնիվ, կանանց մասնակցությունը կարատեում դեռևս մնում է հարաբերաբար սահմանափակ՝ մի շարք կառուցակարգային, մշակութային և սոցիալական գործոնների պատճառով:

Դրանց թվում են հասարակական կարծրատիպերը, ծնողական թերահավատությունը, մարզչական ռեսուրսների պակասը և ինստիտուցիոնալ աջակցության բացակայությունը [3,4]: Այս բոլոր խնդիրները պահանջում են հա-

մակրոլմանի վերլուծություն և նպատակաուղղված քայլեր կանանց դերի բարձրացման ուղղությամբ:

Արժե նշել, որ թեև Հայաստանի մարզական կառույցները և ֆեդերացիաները տարեցտարի մեծացնում են ուշադրությունը կանանց սպորտի նկատմամբ, այնուամենայնիվ կարատեի պարագայում գոյություն ունեն մի շարք հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են կանանց լիարժեք ներգրավվածությունը կարատե մարզաձևում: Ըստ Հայաստանի կարատեի ֆեդերացիայի տվյալների՝ 2023թ. կանայք կազմում էին մարզիկների ընդհանուր թվի մոտ 18%-ը, ինչը զգալիորեն ցածր է համաշխարհային միջին ցուցանիշից [2]: Համաշխարհային կարատեի ֆեդերացիայի (WKF) 2022թ. զեկույցի համաձայն՝ կանայք կազմում են կարատե մարզիկների ընդհանուր թվի մոտ 35%-ը [16]: Այս տարբերությունը վկայում է այն մասին, որ Հայաստանում կանանց ներգրավվածությունը կարատեում դեռևս սահմանափակ է՝ համեմատած միջազգային մակարդակի հետ:

Հատկանշական է, որ որոշ երկրներում, օրինակ՝ Ճապոնիայում և Ֆրանսիայում, կանանց մասնակցությունը կարատեում հասնում է 40-45%-ի: Այս երկրներում իրականացվող պետական քաղաքականությունները, սոցիա-

լական ծրագրերը և մարզական կրթության համակարգերը նպաստում են կանանց ակտիվ ներգրավվածությանը մարտական մարզաձևերում [14, 15]: Հայաստանի դեպքում, սակայն, կան մի շարք խոչընդոտներ, որոնք սահմանափակում են կանանց ակտիվությունը կարատեում: Դրանք ներառում են մշակութային կարծրատիպերը, մարզական ենթակառուցվածքների սահմանափակ հասանելիությունը և համապատասխան ծրագրերի պակասը, որոնք ուղղված են կանանց ներգրավվածության խթանմանը:

Կանանց ներգրավվածությունը սպորտում, այդ թվում՝ կարատե մարզաձևում, վերջին տասնամյակներում կտրուկ աճել է: Նախկինում տղամարդկանց համար նախատեսված բազմաթիվ մարզաձևեր այսօր հասանելի են նաև կանանց, և կարատեն այդ միտման կարևոր դրսևորումներից մեկն է [1]: Կարատե մարզաձևում կանանց ակտիվ մասնակցությունն արդեն իսկ արձանագրել է նշանակալի արդյունքներ, ինչպես նաև ներառում է շատ տեսական և գործնական հարցեր՝ կապված հասարակական կարծիքի, մարզասարքերի օգտագործման, մրցաշարերի հավասարության և մարզիչների պատրաստվածության հետ:

Սակայն ինչպես վիճակագրությունը և միջազգային փորձը ցույց է տալիս, որ շատ երկրներ դեռևս ունեն խնդիրներ սպորտում կանանց ներգրավվածության հետ: Վերջին տարիներին կտրուկ աճել են կանանց մրցումները և ծրագրերը, սակայն, կան բազմաթիվ մարտահրավերներ՝ համաշխարհային և տեղական մակարդակում:

Այս թեման հատկապես արդիական է այս պահին, քանի որ կանանց սպորտում հետևողական փոփոխություններ են տեղի ունենում, հատկապես այն մարզաձևերում, որտեղ նախկինում կանանց մասնակցությունը շատ սահմանափակ էր: Կանանց սպորտի զարգացման մեջ հատկապես մեծ դեր ունեն միջազգային մրցաշարերը, Օլիմպիական խաղերի ծրագրում կարատեի ներգրավումը, ինչպես նաև համապատասխան հասարակական խթանները: Կարատեն, որպես մարտական մարզաձև, առանձնահատուկ դեր է խաղում կանանց սպորտում՝ պատրաստելով բազմաթիվ բարձրակարգ մարզիկների և նպաստելով նրանց ֆիզիկական ու հոգեբանական զարգացմանը [16]:

Վերջին տարիներին կարատե մարզաձևում կանանց մասնակցությունը շարունակաբար աճում է, բայց այդ գործընթացը դեռևս լիարժեք չի ապահովում բոլոր անհատական և կազմակերպչական խնդիրների լուծումը:

Կանանց սպորտի նկատմամբ հասարակական վերաբերմունքի փոփոխությունը, մարզադահլիճներում ու մրցումներում հավասար իրավունքների ապահովումը, մարզիկների հարթ մրցակցային պայմանների ստեղծումը՝ կարևոր է ոչ միայն սպորտային, այլև սոցիալական զարգացում ունեցող հանրությանը ստեղծելու համար [11]:

Մինչդեռ կանանց մասնակցության աճը կարող է դիտվել որպես դրական փոփոխություն, կան նաև բազմաթիվ մարտահրավերներ՝ կապված հասարակական կարծիքի և վարպետության մակարդակների անհավասարության հետ: Սա խոսում է հետազոտության անհրաժեշտության մասին՝ բացահայտելու չլուծված հիմնախնդիրները, որոնք կան այս ոլորտում [12]:

Հետևաբար, ներկա ժամանակաշրջանում կարևոր է վերլուծել և հասկանալ կանանց ներգրավվածությունը կարատե մարզաձևում՝ այդ ոլորտի զարգացման հեռանկարները և հիմնախնդիրները, որպեսզի հնարավոր լինի գտնել լուծումներ և խորհուրդներ՝ կապված մրցակցային հավասարության, մարզական համակարգի հզորացման, հասարակական ընկալումների և այլ հարցերի հետ:

Հետազոտության նպատակը, խնդիրները: Ուսումնասիրել Հայաստանում կանանց ներգրավվածությունը կարատե մարզաձևում և բացահայտել

առկա հիմնախնդիրները՝ համեմատելով միջազգային փորձի հետ և առաջարկելով միջոցներ՝ հավասար մասնակցությունն ու մրցակցային պայմանները ապահովելու համար:

Հետազոտության խնդիրներն են.

1. Վերլուծել կանանց ներգրավվածության հիմնախնդիրները կարատե մարզաձևում՝ Հայաստանի և միջազգային գրականության հիման վրա:

2. Ուսումնասիրել Հայաստանի կանանց կարատեի զարգացման ընթացքն ու ներգրավվածության մակարդակը:

3. Վերլուծել սոցիալական, մշակութային և կառուցակարգային գործոնները, որոնք խթանում կամ խոչընդոտում են կանանց մասնակցությունը:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտությունը կազմակերպվել է գիտական և գործնական աղբյուրների հավաքագրմամբ, համեմատական և բովանդակային վերլուծությամբ և ըստ եզրակացությունների առաջարկությամբ: Հետազոտությունն իրականացվել է համակցված մեթոդաբանությամբ՝

- գիտամեթոդական գրականության վերլուծություն՝ ուսումնասիրվել են գիտամեթոդական աղբյուրներ, որոնք

վերաբերվում են կանանց մասնակցությանը կարատեում, մարզաձևի զարգացմանն ու առկա խնդիրներին,

- համեմատական վերլուծություն՝ համեմատվել են Հայաստանի և տարբեր երկրների կանանց ներգրավվածության մակարդակները, մրցաշարերի մասնակցությունը և պետական քաղաքականությունների ազդեցությունը,

- փաստարկների և վերլուծությունների ուսումնասիրություն՝ հավաքագրվել են տվյալներ տարբեր երկրների ֆեդերացիաներից, մարզական կազմակերպություններից և միջազգային զեկույցներից,

- վիճակագրական վերլուծություն՝ օգտագործվել են գործող վիճակագրական տվյալներ, որոնք արտացոլում են կանանց մասնակցության դինամիկան և աճի միտումները:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Հայաստանում կարատե մարզաձևում կանանց ներգրավվածության համակարգը ձևավորվում է պետական և հասարակական կառույցների, սպորտային ֆեդերացիաների, մարզական ակումբների և անհատ մարզիչների փոխգործակցության արդյունքում: Թեև վերջին տարիներին նկատվում են դրական միտումներ, համակարգը դեռևս զարգացման փուլում է և ունի բարելավման անհրաժեշտություն:

Կարատե մարզաձևում կանանց մասնակցության դինամիկան արտացոլում է ինչպես մրցումների քանակը, այնպես էլ մարզիկների ներգրավվածության մակարդակի փոփոխությունները:

Ստորև 1-ին աղյուսակում ներկայացված են 2019-2024 թվականների տվյալները՝ աշխարհի տարբեր երկրներից, այդ թվում նաև Հայաստանից [7,8]:

Աղյուսակ 1

2019-2024 թթ. կանանց մասնակցության դինամիկան կարատե մարզաձևում (ընտրված երկրներ, %)

Երկիրը	Կանանց մասնակցությունը՝ ըստ տարիների					
	2019	2020	2021	2022	2023	2024
ԱՄՆ	40%	41%	42%	43%	44%	45%
Ֆրանսիա	40%	42%	43%	44%	45%	46%
Ճապոնիա	35%	36%	37%	38%	40%	40%
Գերմանիա	35%	36%	37%	38%	39%	40%
Կանադա	30%	32%	34%	35%	37%	38%
Մեծ Բրիտանիա	30%	31%	32%	33%	35%	35%
Ավստրալիա	30%	31%	33%	35%	36%	37%
Ռուսաստան	25%	27%	28%	30%	32%	33%
Արգենտինա	20%	22%	23%	24%	26%	27%
Հայաստան	15%	18%	20%	22%	23%	25%

Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ տարբեր երկրներում կանանց մասնակցությունը կարատե մարզաձևում կլորացված տեսքով աճում է՝ շնորհիվ պետական, հասարակական և մասնավոր աջակցության, ինչպես նաև սպորտի հանրային քարոզչության: Հատկանշական է, որ Հայաստանում, թեև կանանց մասնաբաժինը դեռևս չի գերազանցում 25%-ը, վերջին տարիներին

աճի տեմպերը համեմատաբար ավելի բարձր են՝ կապված մարզադպրոցների և ակումբների գործունեության ակտիվացման հետ: Սա վկայում է, որ փոքր, սակայն դինամիկ զարգացում է տեղի ունենում՝ վերացնելով նախկին սահմանափակումները և խթանելով կանանց մասնակցությունը մարզաձևում:

Աղյուսակ 2

Կանանց մասնաբաժինը կարապետում (ըստ 2024 թ. տվյալների, %)

Երկիր	Կանանց մասնաբաժինը կարապետում (%)	Պետական աջակցություն	Մարզչական ծրագրեր կանանց համար	Մարզասրահների հասանելիություն
Ճապոնիա	45%	բարձր	կան հատուկ ծրագրեր	լիարժեք
Ֆրանսիա	40%	միջինից բարձր	որակյալ պատրաստություն	լիարժեք
Վրաստան	30%	միջին	սկսնակ ծրագրեր	մասամբ բավարար
Կանադա	42%	բարձր	բոլոր մակարդակներում հասանելի	բարձր
ԱՄՆ	43%	բարձր	տարածված ազգային նախաձեռնություններ	բարձր
Հայաստան	18%	սահմանափակ	սահմանափակ հնարավորություններ	անբավարար

2-րդ աղյուսակում ներկայացված են կարատե մարզաձևում տարբեր երկրների կանանց մասնակցության մակարդակները՝ պետական աջակցություն, մարզչական ծրագրերի հասանելիություն և մարզասրահների մատչելիություն: Համաշխարհային դինամիկան ցույց է տալիս, որ եթե պետությունները ավելի շատ աջակցեն

կանանց սպորտին, ապա մասնակցության տոկոսը կհասնի ավելի բարձր մակարդակի:

Հայաստանի պարագայում մտահոգիչ է, որ կանանց մասնաբաժինը համեմատաբար ցածր է՝ միայն 18%, ինչը պայմանավորված է ինչպես ֆինանսական սահմանափակումներով, այնպես էլ մշակութային կարծրատիպերով և մարզադպրոցներում բավարար

աջակցություն չստացող միջավայրով: Վերլուծելով 2-րդ աղյուսակի տվյալները՝ պարզ է դառնում, որ կանանց ներգրավվածությունը կարատե մարզածնում զգալի տարբերություններ ունի տարբեր երկրներում՝ կախված պետական աջակցության մակարդակից, մարզչական ծրագրերի որակից և մարզասրահների հասանելիությունից: Աղյուսակում ներկայացված գնահատականները հիմնված են պաշտոնական վիճակագրության, ֆեդերացիաների զեկույցների և փորձագիտական գնահատումների համակցված վերլուծության վրա [8,9]:

Հաշվի առնելով այլ երկրների փորձը՝ Հայաստանում անհրաժեշտ է.

- Մշակել սեռային հավասարությունը խթանող պետական քաղաքականություն:

- Ակտիվացնել կանանց մասնագիտական աճի ծրագրերը:

- Տարածել կարատեի ակումբները նաև մարզերում և գյուղական բնակավայրերում:

- Կազմակերպել կանանց մասնագիտական սեմինարներ և միջազգային փորձի փոխանակումներ:

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև Հայաստանի կարատեի համակարգում կանանց ներգրավվածության գործընթացը դեռևս զարգացման փուլում է, օտարերկրյա փորձը մատնանշում է հնարավոր ուղիներ՝ պետական աջակցության ուժեղացում, մրցակցային միջավայրի ստեղծում և մարզչական ռեսուրսների հզորացում:

Աղյուսակ 3

Կանանց մասնակցության մակարդակը և կիրառվող քաղաքականությունները՝ ըստ մի շարք երկրների փվյալների [10]

Երկիր	Կանանց մասնակցության մակարդակ (մոտավոր %)	Հիմնական քայլեր/գործողություններ	Աղբյուր
Ճապոնիա	Ավելի քան 30%	Հատուկ ծրագրեր կանանց մասնագիտական աճի համար, մրցաշարեր	Japan Karate Federation, 2022
Ֆրանսիա	~40%	Գենդերային հավասարության քաղաքականություն, կանանց մրցաշարեր	French Karate Federation, 2022
Ռուսաստան	~35%	Պետական աջակցություն, մարզական դպրոցների ակտիվացում	Russian Karate Federation, 2022
Չինաստան	~25%	Օլիմպիական կարատեի խթանում, աղջիկների ներգրավում	Chinese Martial Arts Association, 2021
Հայաստան	~18%	Զարգացման փուլում, սահմանափակ հնարավորություններ մարզերում	Ministry of Education, Science, Culture and Sports of RA, 2022

Համեմատական վերլուծությունը (աղյուսակ 3) ցույց է տալիս, որ Հայաստանում կանանց մասնակցության խթանման համար անհրաժեշտ են հատուկ քաղաքական քայլեր, որոնք հիմնված են այլ երկրների հաջող փորձի

վրա: Այս քայլերը ներառում են պետական աջակցության ուժեղացում, մարզչական ծրագրերի ակտիվացում, մարզական կենտրոնների հասանելիության ընդլայնում և կանանց համար մասնագիտական աճի հնարավորու-

յունների ստեղծում: Արդյունքում, առաջարկվող մոտեցումները նպատակ ունեն խթանել կանանց ընդգրկվածությունը կարատե մարզաձևում՝ առանց կրկնության արդեն աղյուսակում ներկայացված կոնկրետ գործողությունների:

Հաշվի առնելով այս մոտեցումները, հաջորդ քայլը Հայաստանում անհրաժեշտ բարեփոխումներն ու ծրագրերը գործնականում կիրառելն է՝ ապահովելու մասնակից կանանց թվի կայուն աճ և մասնակցության հավասար հնարավորություններ մարզաձևում:

Աղյուսակ 4

Կանանց ներգրավվածության համեմատական վերլուծություն՝ միջազգային և հայկական փորձի վրա հիմնված

Ցուցանիշներ	Միջազգային փորձ	Հայկական փորձ
Մասնակցության պատմություն	Ավելի քան 30 տարվա ակտիվ զարգացում (օր.՝ Ճապոնիա, Եվրոպա)	Մոտ 10 տարվա ակտիվացում, դեռևս զարգացման փուլում
Կանանց համար հատուկ մրցաշարեր	Կանանց մասնակցությամբ միջազգային մրցաշարեր (JKA, EJU)	Բլից կամ մարզային միջոցառումներ, պարբերական չեն
Մարզչական կազմի ընդգրկվածություն	Շատ երկրներում կանանց մեծ թվով մարզիչներ, պետական աջակցություն	Կին մարզիչների քանակը սահմանափակ է, մարզիչների վերապատրաստման համակարգը թերզարգացած է
Սոցիալական վերաբերմունք	Ակտիվ խթանում է հավասար հնարավորությունների գաղափարը, դրական ընկալում	Սոցիալական կարծրատիպեր՝ աղջիկների մասնակցության դեմ, ավանդական մոտեցումների ազդեցություն
Ինֆրաստրուկտուրա և ակումբներ	Լայնածավալ ակումբային ցանց՝ ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում	Քաղաքային կենտրոնացում, գյուղերում ակումբների գրեթե բացակայություն

<p>Մասնակցության խթանում պետական մակարդակով</p>	<p>Ներառված է ոազմավարական ծրագրերում, պետական ֆինանսավորում</p>	<p>Սահմանափակ աջակցություն, ծրագրային ընդգրկվածություն բացակայում է կամ թերի է</p>
<p>Միջազգային մրցաշարերի մասնակցություն</p>	<p>Ակտիվ մասնակցություն՝ կանանց թիմերի բարձրակարգ ներկայացում</p>	<p>Մասնակցությունը անկանոն է, պայմանավորված է ֆինանսական և կազմակերպական սահմանափակումներով</p>
<p>Կրթական ծրագրեր և վերապատրաստում</p>	<p>Կանանց համար նախատեսված վերապատրաստման և կրթական ծրագրեր</p>	<p>Նման ծրագրեր գրեթե չկան կամ մատչելի չեն</p>

Ներկայացված համեմատական վերլուծությունը (աղյուսակ 4) վկայում է, որ միջազգային առաջատար փորձ ունեցող երկրներում՝ ինչպես Ճապոնիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և ԱՄՆ-ում, կանանց ներգրավվածությունը կարատե մարզաձևում գտնվում է բարձր մակարդակի վրա՝ պայմանավորված տարիների մշակված քաղաքականություններով, կրթական ծրագրերով, հասարակական աջակցությամբ և ինստիտուցիոնալ պատրաստակամությամբ: Այս երկրներում կանայք ոչ միայն մասնակցում են, այլև ակտիվ դեր ունեն մարզչական, կազմակերպչական և մրցումների ոլորտում [5,11,16]:

Եզրակացություն: Այսպիսով կատարված վերլուծությունը թույլ է տալիս նշել, որ Հայաստանի համար առաջնահերթ է համալիր մոտեցման իրականացման ապահովումը, որը ներառում է պետական և հասարակական աջակցություն, մարզական կրթության ու վերապատրաստման ծրագրերի զարգացում, ինչպես նաև հանրային իրազեկման բարձրացում: Միաժամանակ, այս քայլերը հնարավորություն կընձեռեն ոչ միայն բարձրացնել կանանց մասնակցության տոկոսը կարատեում, այլև ձևավորել հավասար պայմաններով, մրցակցային և ներառական միջավայր, ինչը կնպաստի ինչպես մարզաձևի, այնպես էլ հասարակության համակողմանի զարգացմանը:

Ի հակադրություն միջազգային փորձին՝ Հայաստանում կանանց ներգրավվածության գործընթացը կարատե մարզաձևում դեռևս գտնվում է զարգացման փուլում: Չնայած վերջին տարիներին նկատվող դրական միտումներին՝ մասնավորապես կին մարզիչների թվի աճին և միջազգային մրցումներին ավելի ակտիվ մասնակցությունը, շարունակում են պահպանվել մի շարք խոչընդոտներ. սահմանափակ մարզական ենթակառուցվածքներ, թերի մարզական մշակույթ և պահպանողական կարծրատիպեր:

Հաշվի առնելով միջազգային առաջատար երկրների փորձը և կատարված վերլուծությունը, հեղինակները առաջարկում են հետևյալ հիմնական քայլերը.

- ստեղծել կանանց և աղջիկների համար հատուկ ծրագրեր,

- ապահովել ֆինանսական և նյութատեխնիկական աջակցություն,

- զարգացնել մարզչական կազմի պատրաստման և վերապատրաստման համակարգը,

- բարձրացնել հանրային իրազեկումը և խթանել համագործակցությունը միջազգային կառույցների հետ,

- շարունակել հետազոտությունները և ապահովել տվյալների հստակ հավաքագրում:

Այս քայլերը, մեր կարծիքով, կխթանեն կանանց ներգրավվածությունը կարատեում և կդառնան ներդրում հասարակության հավասարակշռված, առողջ զարգացման գործընթացում:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի ազգային կարատեի ֆեդերացիա (2020): Տարեկան զեկույց՝ կարատեի զարգացման վերաբերյալ Հայաստանում: <https://karate.am/en/h2/>

2. Հայաստանի կարատեի ֆեդերացիա. Տարեկան հաշվետվություն և վիճակագրություն, 2023 թ., Երևան, 2024 <http://karate.am>

3. Մարտիրոսյան Լ., Ծնողների վերաբերմունքը Հայաստանում աղջիկների մարտարվեստին մասնակցության նկատմամբ, «Հայաստանի ֆիզիկական դաստիարակության հանդես», 2019, էջ 87-94:

4. Սարգսյան Մ., Ապորտում գենդերային հավասարության հարցերը և կանանց ներգրավվածության աճը մարտարվեստում. «Մարմնակրթություն և առողջ ապրելակերպ», թիվ 3, Երևան (2020), էջ 35–42 https://oxygen.org.am/wp-content/uploads/2021/04/Gender_info-kit.pdf [Մուտք՝ 05.06.2025]

5. Սպորտի զարգացման հաշվետվություն, 2022-2026 թվականների ռազմավարական ծրագիր, ՀՖԿՍՊԻ հիմնադրամ 2022թ. հունվարի 19 <https://sportedu.am/wpcontent/uploads/2022/06> [Մուտք՝ 20.05.2025]
6. Bruce T. New Rules for New Times: Sportswomen and Media Representation in the Third Wave. *Sex Roles*, (2016)- 74(7-8), 361–376. [Մուտք՝ 26.03.2025]
7. Chinese Martial Arts Association. (2021). The Growth of Karate in China. https://www.researchgate.net/publication/312599954_Evolution_and_Prospect_f_Chinese_Martial_Arts_during_the_Rising_Course_of_China [Մուտք՝ 04.05.2025]
8. European Karate Federation. (n.d.). *About EKF*. Retrieved from <https://www.europeankaratefederation.net/about/> [Մուտք՝ 18.04.2025]
9. Fink J.S. Female athletes, women's sport, and the sport media commercial complex: Have we really "come a long way, baby"? *Sport Management Review*, (2015).- 18(3), 331–342.
10. International Olympic Committee (IOC). (2021). *Karate at the Olympic Games Tokyo 2020*. Retrieved from <https://olympics.com> [Մուտք՝ 18.04.2025]
11. Japanese Karate Association. (2023). *Promoting Women's Involvement in Karate* 24(4)<https://www.wkf.net/news-center/article/!/2231/karate-s-contribution-to-society-showcased-at-presentation-of-guardian-girls-karate-project-in-morocco> [Մուտք՝ 11.07.2025]
12. UNESCO. *Fit for Life: Women and Sport – Closing the Gap*. Paris, 2023. <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000385557> [Մուտք՝ 13.07.2025]
13. UN Women. *Gender Equality in Sports: Advancing Women and Girls in Sport*. New York, 2022. <https://www.unwomen.org> [Մուտք՝ 25.07.2025]
14. World Karate Federation (WKF). (2016). *Women's Participation in Karate Championships*. Retrieved from <https://www.wkf.net> [Մուտք՝ 01.08.2025]
15. World Karate Federation. (2020). *Statutes and Rules*. Retrieved from <https://www.wkf.net/pdf/rules/WKF-Competition-Rules-2020.pdf> [Մուտք՝ 01.08.2025]
16. World Karate Federation. *Development Programs and Gender Inclusion in Karate*. WKF Official Reports, 2022. <https://www.wkf.net> [Մուտք՝ 01.08.2025]

WOMEN'S PARTICIPATION IN KARATE: CHALLENGES AND PROSPECTS FOR DEVELOPMENT

*A.V. Poghosyan, N.H. Hambardzumyan,
Armenian State Institute of Physical Culture
and Sport, Yerevan, Armenia*

ABSTRACT

Keywords: athletes, stereotypes, tournaments, coaches, media, federations, international experience, female karatekas.

Research Relevance. The role of women in sports, particularly in karate, serves as an important indicator of a society's social and cultural development. Karate requires physical preparedness, psychological resilience, and self-confidence. Although women's participation in karate in Armenia has been gradually increasing, it remains limited due to persistent stereotypes, insufficient resources, and organizational challenges. Expanding female participation is essential not only for health promotion but also for fostering equality, empowerment, and opportunities for self-expression.

Research Aim. To examine women's involvement in karate in Armenia, identify existing challenges, compare national trends with international experience, and propose solutions that support equal participation and competitive conditions for female athletes.

Methods and Research Organization. The study involved the collection and examination of scientific and practical sources, comparative and content analysis, and the formulation of evidence-based conclusions. Methods included literature review, comparison of data from Armenia and other countries, analysis of the experience of international sports organizations, and situational assessment supported by available statistics.

Analysis of Research Results. The material examined indicates that increasing women's involvement in karate is achievable only through a comprehensive and coordinated approach that includes the development of state strategies, improvement of sports education and training systems, international cooperation, public awareness campaigns, and the systematic creation of equal opportunities for women both within and beyond the sports sector.

Conclusions. The analysis of women's involvement in karate in Armenia and in leading international contexts supports several key recommendations: the development of specialized programs for women and girls; strengthening financial and material-technical support; improving the training and retraining of coaching staff; increasing public awareness and collaboration with international organizations; and ensuring continuous

Sportedu.am

research supported by transparent data. Overall, the role and participation of women in karate are significant not only for athletic progress but also as a meaningful contribution to the development of a healthier, more equal, and more just society.

ВОВЛЕЧЕННОСТЬ ЖЕНЩИН В СПОРТИВНОЕ КАРАТЭ: СОСТОЯНИЕ, ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ

*А.В. Погосян, Н.Г. Амбарцумян,
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова: спортсмены, стереотипы, турниры, тренеры, СМИ, федерации, международный опыт, женщины-каратисты.

Актуальность исследования. Роль женщин в спорте, особенно в карате, является важным показателем социального и культурного развития общества. Карате требует физической подготовки, психологической устойчивости и уверенности в себе. В Армении участие женщин в карате растет, но остается ограниченным из-за стереотипов, нехватки ресурсов и организационных проблем. Вовлечение женщин важно не только для здоровья, но и для развития равенства и самовыражения.

Цель исследования. Изучить вовлеченность женщин в карате в Армении, выявить проблемы, сравнить с международным опытом и предложить решения для равноправного участия и конкурентных условий.

Методы и организация исследования. Сбор научных и практических источников, сравнительный и содержательный анализ, формулирование выводов. Использованы: анализ литературы, сопоставление данных по Армении и другим странам, изучение опыта международных организаций, ситуационный анализ по статистике.

Анализ результатов исследования. Анализируя представленный материал, можно утверждать, что повышение уровня вовлеченности женщин в каратэ возможно только при комплексном подходе, включающем государственную стратегию, совершенствование спортивного образования, международное сотрудничество, повышение уровня общественной осведомленности и, в особенности, обеспечение равных возможностей для женщин в спортивной сфере и за ее пределами.

Краткие выводы. Представленный анализ вовлеченности женщин в каратэ как в Армении, так и в ведущих странах мира, представляет возможность сделать следующие выводы и рекомендации:

- Создание специальных программ для женщин и девушек
- Финансовая и материально-техническая поддержка
- Подготовка и переподготовка тренерского состава
 - Повышение осведомленности общественности, сотрудничество с международными организациями
- Непрерывность исследований и четкое представление данных

Таким образом, роль и участие женщин важны не только для спортивных результатов, но и как вклад в развитие здорового, равноправного и справедливого общества

Տեղեկություններ հեղինակների մասին

Աննա Վոլոդյայի Պողոսյան՝ մ.գ.թ., ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: anna.poghosyan@sportedu.am
Նատալյա Հենրիկի Համբարձումյան՝ մանկավարժ, մագիստր, E.mail: natalia.hambarzumyan.2020@sportedu.am

Information about the authors

Anna Volodya Poghosyan, PhD, Associate Professor of the Chair of Theory, Methodology and Adaptive Physical Culture and sport, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, Email: anna.poghosyan@sportedu.am
Natalya Henrik Hambarzumyan, Master of Pedagogy, Email: natalia.hambarzumyan.2020@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 11.10.2025–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 12.10.2025–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

ՀՏԴ 796.431

DOI: 10.53068/25792997-2025.3.16-135

**ՑԱՏԿԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱԼԻՐՆ
ԱՐԱԳԱՎԱԶՈՐԴՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒՈՒՄ**

*Վ.Ա. Սմբադյան, Տ.Գ. Սիմոնյան, Հ.Վ. Քոսակյան,
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

Առանցքային բառեր: Ֆիզիկական պատրաստություն, կատարելագործում, փուլ, վարժություն, ցատկեր, համալիր, արագավազորդ:

Հետազոտության արդիականություն: Արագավազքերը՝ որպես աթլետիկական վազքերի տեսակ ամենատեսարժան մրցածներից են և հանրահայտնի են տարբեր մակարդակի մրցումների ժամանակ: Աթլետիկական արագավազքերը կատարման տեսանկյունից բնութագրվում են որպես արագաուժային վարժություններ և պահանջում են այդ մրցածներում մասնագիտացող մարզիկներից հատուկ մասնագիտական շարժողական ընդունակությունների տիրապետման առավելագույն մակարդակ [1,5,9]:

Արդի ժամանակաշրջանում, մասնավորապես՝ աթլետիկայում, մարզական բարձր արդյունքներ նվաճելու համար մարզիկներն իրենց պատրաստության գործընթացում կրում են առավելագույն բեռնվածություններ: Որպեսզի այդ բեռնվածությունները լինեն

առավել արդյունավետ, անհրաժեշտ է պատրաստության գործընթացում կիրառել ժամանակակից մոտեցումներ՝ մարզման նոր մեթոդներ և միջոցներ [2,3,7,10]:

Արագավազքերը պահանջում են մարզիկի ամբողջ օրգանիզմի պահուստային հնարավորությունների մոբիլիզացիա ինչպես մարզման, այնպես էլ մրցակցային գործունեության ընթացքում: Ժամանակակից պայմաններում տարբեր բնույթի և տեսակի մրցումները՝ ստուգողական, կոմերցիոն, ընտրական, հիմնական և այլն, և այդ մրցումներին մասնակցելու անհրաժեշտությունը արագավազորդից պահանջում է նրա պատրաստության բոլոր տարրերը հասցնել կատարյալ մակարդակի, որպեսզի դրանց ընթացքում մարզիկները ցուցաբերեն իրենց առավելագույն հնարավորությունները: Վերը նշվածը ստիպում է մարզիչին իրականացնել մեթոդների և միջոցների մանրակրկիտ ընտրություն՝ մարզիկների մրցակցային

շրջանում նախապատրաստական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու համար [4,6,8,10]:

Քանի որ ցատկային վարժությունները նույնպես համարվում են արագաուժային, նրանք մեծ ազդեցություն ունեն արագավազորդների հատուկ մասնագիտական՝ արագային և արագաուժային շարժողական ընդունակությունների մշակման գործընթացի վրա, ուստի նրանց կիրառումը կունենա դրական ազդեցություն՝ մրցումների ընթացքում բարձր մարզական արդյունքներ ցուցաբերելու գործում: Մասնագիտական գրականությունում առկա են աշխատանքներ աթլետների պատրաստության տարբեր շրջաններում ցատկային վարժությունների կիրառման վերաբերյալ: Սակայն աշխատանքում նպատակ է դրվել ուսումնասիրել մեր կողմից մշակված համալիրի կիրառման ազդեցությունն աթլետ արագավազորդների վրա:

Հետազոտության նպատակը:

Մարզական կատարելագործման փուլում որոշել ցատկային վարժությունների համալիրի կիրառման ազդեցությունը արագավազորդների պատրաստության վրա:

Հետազոտության խնդիրները:

1. Մշակել ցատկային վարժությունների համալիր՝ մարզական կատարելագործման փուլում արագավազորդների

պատրաստության գործընթացում կիրառելու նպատակով: 2. Մարզական կատարելագործման փուլում որոշել մշակված ցատկային վարժությունների կիրառման արդյունավետությունը արագավազորդների պատրաստության գործընթացում:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը:

Հետազոտության մեթոդներն են՝ գրական աղբյուրների ուսումնասիրում, վերլուծություն, ընդհանրացում և համադրում, մանկավարժական թեստավորում, մանկավարժական գիտափորձ, անկետավորում, մաթեմատիկական վիճակագրության վերլուծություն:

Հետազոտությունը կազմակերպվել է 2024–2025 ուսումնական տարվա ընթացքում՝ երեք փուլով: Առաջին փուլում իրականացվել է բազմաթիվ գրական աղբյուրների ուսումնասիրություն և հավաքագրում, ընտրվել են գիտափորձին մասնակից 15–17 տարեկան 12 աթլետ արագավազորդ, որոնք բաժանվել են ստուգողական և փորձարարական խմբերի՝ յուրաքանչյուր խմբում՝ վեցական մարզիկ: Իրականացվել է նախնական ստուգողական թեստավորում:

Երկրորդ փուլում իրականացվել է հավաքագրված գրական աղբյուրների վերլուծություն՝ համադրում և ընդհանրացում: Մշակվել է ցատկային վարժությունների կիրառման համալիր:

Երրորդ փուլում կազմակերպվել է ամփոփիչ թեստավորում, ստացված արդյունքների մաթեմատիկական վերլուծություն: Ուսումնական տարվա ընթացքում փորձարարական խումբը մարզվել է՝ կիրառելով մեր կողմից մշակված ցատկային վարժությունների համալիրը: Մարզումներն իրականացվել են շաբաթական 5 անգամ:

Հետազոտության ընթացքում իրականացվել է մասնագիտական գրականության բազմաթիվ աղբյուրների վերլուծություն հետևյալ ուղղություններով՝ 1. արագավազորդների մարզման հիմունքները, 2. մարզական կատարելագործման փուլում արագավազորդների մարզման գործընթացի կառուցման առանձնահատկությունները, 3. ցատկային վարժությունների տարատեսակները և նրանց կիրառման հնարավորությունները արագավազորդների պատրաստության գործընթացում:

Մանկավարժական թեստավորում: Այս մեթոդի միջոցով որոշեցինք հետազոտվողների ֆիզիկական պատրաստվածության մակարդակը: Փորձարարական և ստուգողական խմբերում՝ որպես ստուգողական թեստավորում, մեր կողմից ընտրվել են հետևյալ վարժությունները՝ վազք 30մ բարձր մեկնարկից, հեռացատկ տեղից, եռացատկ տեղից, գնդի նետում ցածից առաջ (6կգ), վազք 100մ:

Մանկավարժական գիտափորձ: Մանկավարժական գիտափորձը կայանում էր նրա անցկացման պլանի իրագործման, հետազոտվողների խմբերի ձևավորման՝ փորձարարական և ստուգողական, պատրաստության իրագործման մեջ կիրառելով ցատկային վարժությունների մշակված համալիր, թեստավորման անցկացում և ստացված տվյալների մշակում:

Անկետավորումն անցկացվել է մարզական կատարելագործման խմբերում ցատկային վարժությունների կիրառման առանձնահատկությունների և արդյունավետության որոշման նպատակով: Անկետավորմանը մասնակցել է 24 հարցվող՝ Երևան քաղաքի աթլետիկայի մարզադպրոցների մարզիչների թվից:

Ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտում մաթեմատիկական վերլուծության մեթոդները կիրառվում են մանկավարժական ներգործության ազդեցությունը որոշելու նպատակով: Դրանց միջոցով որոշում էինք մշակված մեթոդիկայի արդյունավետությունը, ստացված տվյալների մշակման ընթացքում հաշվարկվում էին հետևյալ ցուցանիշները՝ միջին թվաբանական ցուցանիշներ, միջին թվաբանական սխալի բացահայտում, Ստյուդենտի չափանիշ:

Հետազոտության արդյունքների

վերլուծություն: Արագավազորդների պատրաստության հիմքում ընկած է արագային, արագաուժային և ուժային բնույթի բազմատեսակ վարժությունների կիրառումը: Սակայն մինչ այժմ սպորտային ոլորտի մասնագետները բանավիճում են մարզիկների պատրաստության գործընթացում տարբեր միջոցների կիրառման շուրջ: Մի շարք մասնագետներ պնդում են, որ վազքային և ցատկային վարժությունների կիրառումը մարզական կատարելագործման փուլում առավել արդյունավետ է արագավազորդների պատրաստության գործընթացում: Այլ մասնագետներ առաջարկում են պատրաստության այդ շրջանում ավելի շատ կիրառել տարբեր մարզասարքեր, որոնք թույլ կտան ուշադրությունը կենտրոնացնել վազքում ներգրավված առաջատար մկանների և մկանախմբերի վրա:

Մարզական կատարելագործման փուլում արագավազորդների ուսումնամարզական գործընթացում ցատկային վարժությունների կիրառման արդյունավետության հետազոտության նպատակով մեր կողմից իրականացվեց մանկավարժական փորձարկում: Փորձարկմանը մասնակցեցին Երևան քաղաքի աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի 12 աթլետ արագավազորդ, որոնք ունեն 1–

ին և բարձր մարզական կարգ: Մասնակիցները բաժանվել էին երկու խմբի՝ փորձարարական և ստուգողական, յուրաքանչյուր խմբում ընդգրկված էր 6-ական մարզիկ:

Հետազոտությունն անցկացվել է փուլային սկզբունքով: Առաջին փուլում՝ 2024թ. սեպտեմբերին իրականացվել է մանկավարժական գիտափորձում ընդգրկված մասնակիցների թեստավորում: Թեստավորման վարժություններից ընտրվել են՝ վազք 30մ բարձր մեկնարկից, հեռացատկ տեղից, գնդի հրում ցածից առաջ (6կգ) և վազք 100մ: Վերը նշված վարժությունների միջոցով գնահատել ենք մասնակիցների շարժողական ընդունակությունների (արագաուժային, արագային, ուժարագային, ցատկունակության) մակարդակը: 2024թ. սեպտեմբերից մինչև 2025թ. մայիսն անցկացվել է մանկավարժական փորձարկումներ: 2025թ. մայիսին անցկացվել է մանկավարժական գիտափորձում ներառված մասնակիցների եզրափակիչ թեստավորում: Մարզումները երկու խմբերում անցկացվում էին շաբաթական վեց անգամ՝ 1.30–2.00 ժամ տևողությամբ: Փորձարկման ընդհանուր տևողությունը կազմել է 9 ամիս:

Ստուգողական խմբում մարզումներն իրականացվում էին ընդունված պլանի համաձայն, որտեղ համեմատաբար հավասարակշռված կիրառվում էին արագային և արագաուժային

նուվաճառության միջոցներ, օրինակ՝ ցատկային պատրաստության ծավալը ծանրաձողով այլ ծանրություններով և մարզասարքերի միջոցով կազմում էր կատարվող աշխատանքի մոտավորապես 50%:

Փորձարարական խմբի մարզման գործընթացում ներդրվել է մեր կողմից մշակված ցատկային վարժությունների համալիր, այսինքն՝ ցատկային վարժությունների քանակի մեծացման հետևանքով նվազել են մարզասարքերի և ծանրաձողի միջոցով կատարվող վարժությունները: Այս երկու միջոցների կիրառման հարաբերակցությունը կազմել է 75/25%, որտեղ գերակայել են ցատկային վարժությունները:

Վազքային և տեխնիկական պատրաստության կիրառվող միջոցների և մեթոդների քանակը հավասարաչափ էր: Ցատկային վարժությունների համալիրը կիրառվել է մանկավարժական գիտափորձի ընթացքում:

1. ուսույուններ մեկ ուղքով, ուսույուններ աջ ու ձախ ուղքերով, յուրաքանչյուր երեք ուսույուն կատարելուց հետո ուղքի փոփոխմամբ՝ 40–60մ, խոտածածկի վրա,

2. վերցատկ մեկ և երկու ուղքերով՝ ուղքերի ծունկը հասցնելով կրծքին,

3. վերցատկ բարձր հարթակի վրա կրկնակի վերցատկ հարթակի վրայից, մեկ և երկու ուղքերով,

4. վերցատկ բարձր հարթակի վրա, ցատկ դեպի խորություն, այնուհետև ցատկ արգելքի վրայով, վայրէջք ցատկափոսում (մեկ և երկու ուղքով),

5. ցատկ դեպի ցած, բարձր հարթակից անմիջապես արգելքի հաղթահարում կցագնդերով,

6. բազմացատկեր տարբեր բարձրության աթլետիկական արգելքների վրայով,

7. ցատկեր մարմնամարզական աթոռի վրայից՝ կողքով, առաջ հետ և այլն,

8. տեղից հեռացատկ, երկցատկ, եռացատկ ցատկերի համադրություն:

Նախնական ստուգողական թեստավորման արդյունքները ցույց տվեցին, որ երկու հետազոտվող խմբերում չկան մեծ տատանվող տարբերություններ, ինչը թույլ կտա առավել օբյեկտիվ գնահատել մեր կողմից ներդրված ցատկային վարժությունների համալիրի արդյունավետ ազդեցությունը: Ստուգողական թեստավորման նախնական արդյունքները բերված են 1–ին աղյուսակում:

Մշակելով ստուգողական թեստավորման արդյունքները՝ գիտափորձի ավարտին ստուգողական խմբում մեր կողմից գրանցվել են արդյունքների աճ՝ յուրաքանչյուր թեստային վարժությունում:

Աղյուսակ 1

Սպրուզողական և փորձարարական խմբերի սպրուզողական թեստերի համեմատականը գիտափորձից առաջ

Թեստային վարժություն	Ստուգողական խումբ M1	Փորձարարական խումբ M2	Հավաստիություն	
			t	P%
Վազք 30մ բարձր մեկնարկից (վրկ.)	3.2±0.2	3.3±0.2	0.125	P>0.05
Տեղիվ հեռացատկ (սմ)	2.75±0.12	2.77±0.10	0.312	P>0.05
Տեղից եռացատկ (սմ)	8.68±0.24	8.70±0.23	0.364	P>0.05
Գնդի հրում ցածից առաջ (6կգ), (սմ)	12.50±0.30	12.48±0.34	0.598	P>0.05
Վազք 100մ ցածր մեկնարկից (վրկ.)	11.3±0.4	11.4±0.3	0.975	P>0.05

«Վազք 30մ բարձր մեկնարկից» վարժությունում վազքատարածության անցման ժամանակը, ի տարբերություն գիտափորձի սկզբի, բարելավվել է 0,2վրկ. ավելի արագ, քան մինչ գիտափորձը՝ կազմելով 3,0 վրկ.: Այստեղ արդյունքի աճը կազմել է 3.4%:


«Տեղից հեռացատկ» վարժությունում ցատկի հեռավորությունը մինչ գիտափորձը կազմել է 2,75սմ, գիտափորձի ավարտին գրանցվել է 0,9մ աճ, վերջնական միջին արդյունքը կազմել է 2,84սմ, տոկոսային հարաբերակցությամբ աճ՝ 3,6%:

«Տեղից եռացատկ» վարժությունում նախնական արդյունքները կազմել են 8,68մ, գիտափորձի ավարտին


8,97մ, այստեղ տեղի է ունեցել արդյունքի 0.29մ միջին աճ, կամ՝ 4,8%:

15. Grigan S.A. and Zakharova N.A. 2025. The impact of swimming on the motor activity of children with mental retardation. Theory and Practice of Physical Culture. 2 (Mar. 2025), 43-45.

IMPACT OF INTEGRATED GROUP SWIMMING CLASSES ON CHILDREN WITH SPECIAL EDUCATIONAL NEEDS

*A.L. Akopyan, A.A. Atanesyan,
State Institute of Physical Culture and Sports
of Armenia, Yerevan, Armenia*

ABSTRACT

Key Words: Physical development, motor qualities, swimming technique, pedagogical experiment.

Relevance of the Research. The organization of swimming activities in integrated groups that include children with special educational needs (SEN) is a significant and timely issue in physical education. A central research question concerns the extent to which such activities influence the physical development, motor qualities, and swimming technique of children with SEN.

Purpose of the Study. To determine the effectiveness of swimming activities conducted in integrated groups for children with special educational needs.

Research Objectives. To analyze the structure and organization of integrated swimming lessons for children with autism, intellectual disabilities, and cerebral palsy. To evaluate the impact of the swimming program on the socialization, physical development, motor qualities, and swimming techniques of children with SEN.

Methods and Organization of the Research. The study employed the following methods: analysis and synthesis of scientific and methodological literature, pedagogical observation, interviews, testing, anthropometry, somatoscopy, plantography, assessment of the respiratory system, pedagogical experiment, and methods of mathematical statistics.

The research and pedagogical experiment were conducted from November 2024 to October 2025 at the “Allegro” swimming pool in Yerevan. The study included 12 children aged 12-13. The integrated group consisted of one child with autism, one child with cerebral palsy, and one child with an intellectual disability, alongside typically developing peers with swimming experience.

Analysis of the Obtained Results. The lessons were organized according to a model of integrated educational practice adapted for swimming. The classes supported mutual socialization and satisfactory mastery of swimming techniques among children with developmental challenges. Additionally, the rates of improvement in motor skills and physical development indicators among children with SEN did not lag behind the progress observed in their typically developing peers.

Conclusions. The integrated swimming program effectively facilitated socialization, acquisition of aquatic skills, and development of swimming techniques among children with developmental challenges. It also contributed to improvements in physical development and motor qualities without causing significant adaptation difficulties.

ОРГАНИЗАЦИЯ ЗНЯТИЙ ПО ПЛАВАНИЮ В ИНТЕГРИРОВАННЫХ ГРУППАХ И ИХ ВЛИЯНИЕ НА ДЕТЕЙ С ОСОБЫМИ ОБРАЗОВАТЕЛЬНЫМИ ПОТРЕБНОСТЯМИ

*А.Л. Акопян, А.А. Атанесян,
Государственный институт физической
культуры и спорта Армении, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова: физическое развитие, двигательные способности, тестирование, техника плавания, педагогический эксперимент.

Актуальность исследования. Организация занятий плаванием в интегрированных группах с детьми с особыми образовательными потребностями (ООП) является важным вопросом физической культуры. Существенной проблемой

является также вопрос влияния таких занятий на физическое развитие, двигательные способности и технику плавания детей с ООП.

Цель исследования. Выявить эффективность влияния занятий плаванием в интегрированных группах на детей с ООП.

Задачи исследования. 1. Изучить особенности организации уроков по плаванию в интегрированных группах с детьми аутистами, с задержкой психического развития и с детским церебральным параличом. 2. Выяснить влияние занятий по плаванию на социализацию, физическое развитие, двигательные способности и технику способов плавания детей с ООП.

Методы и организация исследования. Изучение, анализ и обобщение научно-методической литературы, педагогические наблюдения, собеседования, тестирования, антропометрия, соматоскопия, плантография, исследование дыхательной системы, педагогический эксперимент и метод математической статистики. Исследования и педагогический эксперимент проводились с ноября 2024г. по октябрь 2025г. в бассейне «Аллегро» г. Ереван, с участием 12 детей, 12-13 лет. Один из этого числа был аутистом, другой с детским церебральным параличом и один с задержкой психического развития. Остальные были практически здоровыми и могли плавать.

Анализ полученных результатов. Занятия организовались по аналогии проведения уроков в интегрированных классах, адаптированных к урокам плавания. Занятия способствовали взаимной социализации, удовлетворительному освоению техники способов плавания детей с проблемами. Темпы развития двигательных способностей и показателей физического развития детей с проблемами особо не отставали от нормально развивающих сверстников.

Краткие выводы. Интегрированные занятия способствовали социализации, освоению техники плавания детей с проблемами без особых трудностей, улучшению показателей физического развития и двигательных способностей.

Տեղեկություններ հեղինակների մասին

Արմեն Լեոնիդի Հակոբյան՝ մ.գ.թ., Ֆիզիկ մարզաձևերի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail: armen.hakobyan@sportedu.am

Արշակ Անդրանիկի Աթանեսյան՝ Ֆիզիկական դաստիարակության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի մագիստրանտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail: arshak.atanesyan.2024@sportedu.am

Information about the authors

Armen Leonid Hakobyan, Ph.D, Associate Professor of the Chair of Cyclic Sports, State Institute of Physical Culture and Sport of Armenia, Yerevan, Armenia, E.mail: armen.hakobyan@sportedu.am.

Arshak Andranik Atanesyan: Master's student of the Department of Physical Education, Methodology and Adaptive Physical Culture, Armenian State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia, E-mail: arshak.atanesyan.2024@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 14.10.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 15.10.2025–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

ՀՏԴ 126441

DOI: 10.53068/25792997-2025.3.16-251

**ՀԻԴՐՈԹԵՐԱՊԻԱՅԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒԿ-ՈՎ ԵՐԵՆԱՆԵՐԻ
ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ**

*Ս.Ս. Հակոբյան, Ն. Հ. Աբրահամյան, Ն. Ս. Չիլինգարյան,
Հայ-նուսական համալսարան, Երևան, Հայաստան*

Առանցքային բառեր: Ջուր, թերապիա, հիդրոմետրում, լող, մանկական ուղեղի կաթված (ՄՈՒԿ), ասթմա, դեպրեսիա, շաքարախտ, ֆիզիկական թերապիա:

Հետազոտության արդիականություն: Հաշմանդամություն, մանկական ուղեղի կաթված (ՄՈՒԿ), աուտիզմ և այլ առողջական խնդիրներ ունեցող երեխաների կյանքի որակի բարձրացումը հասարակության առջև ծառայած կարևորագույն խնդիրներից մեկն է: Տարբեր բնագավառների մասնագետներ՝ բժիշկներից մինչև հիդրոթերապիստներ, մտահոգված են՝ գտնելու այդ խնդրի լուծումը, որը փոքր-ինչ կբարելավի խնդիր ունեցող երեխաների կյանքը, իսկ ջուրը և ջրային թերապիան դարձել են դրա կարևորագույն գործոններից մեկը: Ջրային թերապիան նպաստում է երեխաների մկանների շարժունակությանը, երեխաների զվարճանքի միջոց է: Ջրային թերապիան գնալով դառնում է խնդիր ունեցող երեխաների բուժման անբաժան մասնիկը, ուստի պետք է ուշադրություն սևեռել այս բնագավառը Հայաստանում ավելի զարգացնելու և ընդլայնելու համար:

Ջուրը երկրի վրա կյանքի աղբյուր է: Ջրի հետ պարբերական շփումը կարևոր նշանակություն ունի երեխաների և դեռահասների ներդաշնակ զարգացման գործընթացում, որը նաև քայլ է դեպի առողջ ապրելակերպ: Ջրային վերականգնումն արտացոլում է մարդու և ջրի փոխազդեցությունը ինչպես օրգանիզմի ներսում, այնպես էլ՝ դրանից դուրս: Սահմանափակ կարողություններով երեխաների պարապմունքների ընթացքում լողավազանում գտնվելը նրանց տալիս է դրական հույզեր՝ խինդ, ուրախություն, ազատության զգացում և շարժունակության բարձրացում[1,2,3]:

Հիդրոթերապիան կամ ջրային թերապիան, թերապիայի մի տեսակ է, որը օգտագործում է ջուրը՝ անձի շարժողական ընդունակությունների բարելավման համար: Հատկապես մանկական ուղեղային կաթվածով երեխաների համար ջուրը կարող է ունենալ բուժող ազդեցություն: Հիմնականում այն իրականացվում է լողավազանում:

Մարդու մարմնի միջին քաշի մոտ 50–60%-ը կազմված է ջրից: Երկրի գրավիտացիան և մարմնի քաշը որոշիչ են անձի տեղաշարժման համար,

մինչդեռ հիդրոթերապիան հակառակ ազդեցություն ունի: Զրում մարմնի ֆիզիկական ծանրությունը կարող է նվազել մինչև 90%, ինչը հնարավորություն է տալիս ինչպես երեխաներին, այնպես էլ մեծահասակներին ազատ տեղաշարժվել՝ առանց իրական քաշի ծանրության զգացումի [2,5]:

Հիդրոթերապիա ասելով՝ հասկանում ենք ուսուցման գործընթաց և հաշմանդամություն ունեցող երեխաների կարողությունների զարգացում ջրային միջավայրի պայմաններում, որը նպատակ ունի վերականգնելու և ավելի բարձրացնելու կյանքի մակարդակը՝ նոր որակներ հաղորդելով դրան:

Պետք է նշել, որ երեխաների շարժողական ընդունակությունները մշակելու համար դեռևս հին ժամանակներից խորհուրդ է տրվում կիրառել հիդրոթերապիան, որն էլ դարձել է մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների վերականգնման և զարգացման կարևորագույն միջոցներից մեկը: Կարևոր է նաև այն, որ երեխաներին դա դուր է գալիս և նրանք ինքնուրույն սկսում են հետաքրքրվել գործընթացով: Նրանց հոգեվիճակում դրական տեղաշարժ է նկատվում՝ ստանում են բուռն հույզեր, և դրանից իրենց հուզական վիճակը բարձրանում է:

Հիդրոթերապիան համարվում է ամենաարդյունավետ մեթոդներից մեկը կաթվածի, պարեզի և պարապարեզի

ժամանակ, հետևաբար այն կաթվածի կանխարգելման լավագույն տարբերակներից մեկն է: Այս դեպքում հիդրոթերապիայի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ այն կարգավորում է օրգանիզմի խոլեստերինի մակարդակը, նվազեցնում ճարպերի քանակությունը և բարելավում նյութափոխանակությունը: Այն կարգավորում է օրգանիզմում խոլեստերինի քանակը, նվազեցնում ճարպաթթուների գումարը և այլն [6]:

Ոչ պակաս կարևոր է հիդրոթերապիայի դերը վերականգնման գործընթացում: ՄՈՒԿ-ով երեխաների մոտ նկատվում է մկանային բարձր տոնուս, ինչն էլ սահմանափակում է որոշակի շարժումների կատարումը, իսկ հիդրոթերապիան հրաշալի միջոց է լարվածությունը թուլացնելու, հանգստանալու և կոփվելու համար: ՄՈՒԿ-ով երեխաների համար հիդրոթերապիայի արդյունավետությունը հիմնվում է մկանային տոնուսի և ցավի թուլացման, քնի և ախորժակի բարելավման վրա: Բացի այդ, ջրի մեջ տեղի է ունենում մկանների ամրապնդման գործընթաց, ինչն էլ հնարավորություն է տալիս բեռնաթափել ողնաշարի ճողվածքի (spina bifida) ծանրությունը, հետևաբար սկսում է սնուցվել ողնուղեղը: Այս ամենի շնորհիվ, ժամանակի ընթացքում աստիճանաբար վերականգնվում է ողնա-

շարի անատոմիական ամբողջականությունը և սկսվում է վերականգնվել անձի շաժունակությունը[2,6]:

Հիդրոթերապիայի իրականացման համար կոնկրետ տարիքային սահմանափակում չեն նշվում: Պարտադիր չէ, որ երեխան կարողանա ինքնուրույն լողալ լողավազանում՝ հիդրոթերապիայի արդյունավետությունը գնահատելու համար: Ջրային միջավայրի հետ շփումը կարող է դրական ազդեցություն ունենալ, սակայն առաջին անգամ է լողավազանում գտնվող երեխան զգում ջրի հանդեպ վախը: Ելնելով խնդրից՝ հիդրոթերապիստի վարժությունների ճիշտ ընտրությունը կնպաստի խնդրի մեղմացմանը: Պլանավորվող գործընթացում, հաշվի են առնվում նաև երեխայի տարիքը, քաշը, ֆիզիկական վիճակը:

Եթե երեխան ունի բուժական խնդիրներ, ինչպես, օրինակ՝ ալերգիա, ասթմա, ջրային թերապիան կարող է նույնիսկ հակացուցված լինել: Դրա համար անհրաժեշտ է՝ թերապիայի նշանակումը կատարվի միայն բժշկի բուժզննումից հետո:

Հիդրոթերապիայի անցկացման ընթացքում կիրառվում է խաղային մեթոդ, որը բոլոր սահմանափակ կարողություններ ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս հասնել բարձր

արդյունքների: Խաղային գործողությունները երեխաների մեջ ձևավորում են ճանաչողական հետաքրքրություններ, բնավորություն, կամք[2]:

Հիդրոթերապիան առավել մեծ խթան կարող է հանդիսանալ կրտսեր տարիքի երեխաների համար. այդ է պատճառը, որ հիդրոթերապևտիկ միջամտությունը պետք է սկսել վաղ տարիքից: Բացի այդ, փոքր երեխան առավել արագ կարող է հաղթահարել ջրի մեջ միայնակ լողալու կարողությունը՝ առանց կողմնակի աջակցության:

Հիդրոթերապիստը օգնում է երեխային պահել մարմինը ջրի վրա, սովորեցնում է ճիշտ տեղափոխվել և կարգավորել շնչառությունը: Մասնագետը անում է հնարավորինս, որպեսզի ջրի մեջ երեխայի մոտ զարգացնի այնպիսի հմտություններ, որոնք հետագայում նա կարող է օգտագործել նաև ցամաքում:

Մեծ նշանակություն ունի պարապմունքների ընթացքում ուրախ, հուզական միջավայրում՝ ՄՈՒԿ-ով երեխաների շփումը այլ երեխաների հետ: Հայտնի է, որ շփումը երեխայի հոգեկան զարգացման գլխավոր աղբյուրն է: Շրջապատի հետ շփման պակասը, ջերմության, սիրո բացակայությունը խանգարում են երեխայի անձի ձևավորմանը: Սոցիալական շփման սահմանափակումը, շփման անկարողությունը,

արտահայտված ճանաչողական և հուզականային ոլորտների կոպիտ խանգարումներն ի հայտ են գալիս երեխաների ուսումնական գործընթացի ժամանակ [3]:

Մեր կողմից ուսումնասիրված գրականությունից կարող ենք հետևություն անել, որ [6,7,8] **հիդրոթերապիան՝**

- բարելավում է ֆիզիկական ֆունկցիաները,
- ձևավորում է ֆիզիկական հսկողությունը,
- տալիս է հնարավորություն՝ կարգավորել շարժումների դինամիկան
- ձեռք է բերում ինքնուրույնություն,
- բարձրացնում է շարժումների կատարման որակը, քանի որ, ի տարբերություն ցամաքի, ջրային միջավայրում կորում է երկրի ձգողականության ուժը, ինչը նպաստում է շարժումների կատարման որակի բարելավմանը,
- միևնույն ժամանակ մշակում է ձեռքերի և ոտքերի հենաշարժիչ ֆունկցիա:

Ահա ջրային թերապիայի հայտնի տեսակներից մի քանիսը.

1. Հիդրոմերսումը այն մեթոդն է, երբ ջուրը մերսում է մարմինը, սովորաբար հատուկ տաք լոգարաններում կամ ջակուզիներում: Հիդրոմերսումը

կարող է օգնել հանգստացնել մկանները, բարելավել արյան շրջանառությունը և թեթևացնել սթրեսը[1]:

2. Լող՝ ջրային թերապիայի ձև է, որը համարվում է արդյունավետ միջոց մկանների ամրացման, սրտանոթային առողջության բարելավման և հոդաքայքայի թեթևացման համար [5]:

3. Գոլորշու միջոցով բուժում, օրինակ՝ շոգեբաղնիք, գոլորշու լոգանք կամ գոլորշու ինհալացիա, որոնք կարող են նպաստել մաշկի, մկանների մաքրմանը և սթրեսի նվազեցմանը:

4. Կոմպրեսներ՝ տաք կամ սառը կոմպրեսները կիրառվում են մարմնի մասերի ցավը, բորբոքումը կամ այտուցը թեթևացնելու համար:

5. Ջերմային աղբյուրներ՝ այցելություն բնական կամ արհեստական ջերմային աղբյուրներ՝ ջրի հանքային պարունակության շնորհիվ բուժիչ ազդեցություն ստանալու համար:

6. Կոնտրաստային լվացումներ՝ տաք և սառը ջրի հերթափոխը խթանում է արյան շրջանառությունը և ամրապնդելում է իմունային համակարգը:

Ջրային թերապիան կարող է արդյունավետ լինել մի շարք դրսևորումների, մկանային ցավի ու լարվածության, ունատիկ հիվանդությունների, արթրիտի, մեջքի ցավի, սթրեսի և քնի խանգարումների դեպքում: Այնուամենայնիվ, կարևոր է խորհրդակցել բարձր որակավորում ունեցող մասնագետի

հետ՝ նախքան ջրային թերապիայի բուժումը սկսելը, հատկապես, եթե ունեք որևէ բժշկական մտահոգություն կամ սահմանափակում:

Լողը կարող է տարբեր ազդեցություն ունենալ՝ կախված մարդու հիվանդությունից և առողջական վիճակից: Ահա մի քանի օրինակ [1,2,4,5].

• Արթրիտ և ունմատիզմ: Լողը կարող է շատ օգտակար լինել, քանի որ ջուրն օգնում է նվազեցնել ճնշումը հոդերի վրա, նվազեցնել ցավը և բարելավել շարժունակությունը:

• Ասթմա: Ասթմա ունեցող մարդկանց համար տաք ջրով լողալը կարող է օգտակար լինել, քանի որ խոնավ օդը կարող է մեղմել ախտանիշները:

• Շաքարախտ: Կանոնավոր լողը կարող է օգնել վերահսկել արյան շաքարի մակարդակը և բարելավել ինսուլինի նկատմամբ զգայունությունը:

• Մեջքի ցավ: Հատուկ սարքավորված վերականգնողական լողավազաններում լողալը կարող է օգնել ուժեղացնել մեջքի մկանները և բարելավել ձեր կեցվածքը, ինչը կարող է նվազեցնել ցավը:

• Սրտանոթային առողջություն: Լողը կարող է լավ վարժություն լինել սրտի և արյան անոթների համար՝ բարելավելով արյան շրջանառությունը և նվազեցնելով արյան ճնշումը:

• Դեպրեսիա և սթրես: Լողը կարող է օգնել ձեզ հանգստանալ և թեթևացնել սթրեսը ջրի մակերևույթի վրա լողալու ազդեցության և դրա մեղիտացիոն բնույթի պատճառով:

Սակայն ցանկացած նոր ֆիզիկական գործունեություն սկսելուց առաջ միշտ կարևոր է խորհրդակցել ձեր բժշկի հետ, հատկապես, եթե ունեք որևէ բժշկական խնդիր:

Լողը, ՄՈՒԿ ունեցող երեխաների համար, որպես բարելավման գործոն: Լողալը, ֆիթնեսը, ֆիզիկական թերապիայի միջոց է, որն օգտագործվում է բարելավելու շարժողական հմտությունները: Զուրը նվազեցնում է ձգողականության ազդեցությունը և բարելավում է շարժման ազատությունը:

Լողը կարող է օգնել բարելավել մկանային ուժը, հավասարակշռությունը և ճկունությունը: Այն կարող է նաև օգնել բարելավել սրտանոթային և շնչառական ֆունկցիան:

Այնուամենայնիվ, լողի դասեր սկսելուց առաջ կարևոր է խորհրդակցել բժշկի կամ վերականգնողաբան մասնագետի հետ՝ գնահատելու լողի համապատասխան տեսակը, հաշվի առնելով հիվանդի անհատական առանձնահատկությունները:

Այսպիսով՝ ուղեղային կաթված ունեցող երեխաների մոտ առանձնա-

հատուկ են ինտելեկտուալ խանգարումները և դժվարությունները՝ լեզվի և խոսքի յուրացման մեջ: Լողի հրահանգիչները գիտեն, թե ինչպես անհատական մոտեցում գտնել նման երեխաներին և մշակում են անհատական ծրագիր: Մանկական ուղեղային կաթված ունեցող գրեթե բոլոր երեխաների համար լողը հանգստի լավագույն ձևերից է:

Հարկ է նշել, որ տաք և հարմարավետ ջրը մերսում է երեխայի մկանները, ինչպես նաև հանգստացնում է հոդերն ու կապանները՝ դրանով իսկ նվազեցնելով հենաշարժական համակարգի ընդհանուր բեռնվածությունը: Նաև ջրում վարժությունների ժամանակ ուժեղանում է հենաշարժական համակարգը և մեծանում հոդերի շարժունակությունը: Բացի այդ, ջրում վարժությունները կանխում են հոդերի կոնտրակտուրայի առաջացումը:

Ջուրը նպաստում է մարմնի վերահսկողության բարելավմանը: Ջրում մարզվելիս մարմնի ուղղահայաց կայունությունը մեծանում է, ինչն ավելի հարմարավետ և արդյունավետ է դարձնում այս գործընթացը: Ջրային միջավայրը հեշտացնում է մարմինը տարածության մեջ կառավարելը, երեխայի մարմնին սովորեցնում է տեղաշարժել ծանրության կենտրոնը, տիրապետել մարմնի նոր շարժումներին,

մարզել հավասարակշռությունը և պահպանել մկանային տոնուսը բավարար մակարդակի վրա:

Հետազոտության նպատակն է՝

գնահատել ՄՈՒԿ ունեցող երեխաների շարժողական ընդունակությունների դինամիկան՝ հիդրոթերապիան կիրառելիս:

Հետազոտության խնդիրներ.

- Ներկայացնել հիդրոթերապիայի դերը մարդկանց՝ հատկապես խնդիր ունեցող երեխաների առօրյա կյանքում:
- Կարևորել հիդրոթերապիայի դերը խնդիր ունեցող երեխաների բուժման հարցում:
- Ներկայացնել լողը՝ որպես ՄՈՒԿ ունեցող երեխաների կյանքի բարելավման բաղկացուցիչ մաս:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը:

Առաջադրված խնդիրները լուծելու միտումով օգտագործվել են հետևյալ մեթոդները՝ գրական աղբյուրների վերլուծություն, մանկավարժական դիտումներ, վիճակագրական վերլուծություն:

Սույն հետազոտությունն անցկացվել է Հանրապետական վերականգնողական կենտրոն՝ 2019-ից առ այսօր և ընդգրկված են եղել ՄՈՒԿ ունեցող շուրջ 800 երեխաներ:

Պարապմունքներն անցկացվել են 1 տարվա կտրվածքով, շաբաթական 3 պարապմունք՝ յուրաքանչյուրը 30 րոպե տևողությամբ:

Հետազոտության արդյունքների

վերլուծություն: Մեկ տարվա ընթացքում ջրային թերապիայի կիրառմամբ արձանագրեցինք հետևյալ արդյունքները՝ միջին հաշվով 100 շատ ծանր հիվանդից (սպաստիկ-աթետուդ, ատաքսիկ-սպաստիկ, սպաստիկ-դիսկինետիկ) 90-ի մոտ նկատվել է դրական տեղաշարժ (տետողական, կլման ակտի, նյութափոխանակության, ախորժակի, աղեստամոքսային տրակտի, թեթև մոտորիկայի առկայություն):

100 ծանր հիվանդներից նկատելի են եղել վերին և ստորին վերջույթների տեղաշարժեր, թեթևակի կանգ ոտնաթաթերի վրա, ողնաշարի շարժումների բարելավում, երբեմն դարձումներ աջ կամ ձախ ձեռքերի օգնությամբ:

300 միջին ծանրության (սպաստիկ, դիսկինետիկ, ատոնիկ, ատակսիկ) հիվանդներից 295-ի մոտ լողը՝ որպես զվարճանքի միջոց նպաստել է սեփական հույզերի վստահությանը և կառավարմանը, ինքնուրույն քայլելը ջրում, ինքնուրույն լող մեջքի և փորի

վրա (երբեմն միայն ձեռքերով կամ ոտքերով), գնդակի նետումներ, կախ օղակներից: 5 հիվանդի մոտ նկատվել է վախի առկայությունը և զգուշությունը, որը խանգարող գործոն է հանդիսացել դրական տեղաշարժին: Մեր կարծիքով նման հիվանդների դեպքում հոգեբանի միջնորդության կարիք կա: Հոգեբանը պետք է համագործակցի թերապիստի հետ:

200 միջին ծանրության հիվանդների մոտ ջրային թերապիան նկատելի դրական տեղաշարժ է արձանագրել: Նույնիսկ նրանց հետ տարվել է լողի ուսուցման գործընթաց, միաժամանակ բարելավվել է օրգանիզմի ֆունկցիոնալ գործունեությունը:

100 թեթև (մոնոպարեզ) ախտորոշմամբ հիվանդների մոտ գրեթե ամբողջությամբ վերականգնվել է շարժական գործողությունները (աղյուսակ 1,2,3):

Սույն տվյալները գնահատվել են հաստատության վերականգնողաբանների կողմից:

Աղյուսակ 1

**Շարժողական գործողությունների շարժընթացը
(6 ամսականից-7 տարեկան ժամանակահատվածում)**

Տարի										
	I		II		III		IV		V	
Սեռ	տղա	աղջ.	տղա	աղջ.	տղա.	աղջ.	տղա.	աղջ.	տղա	աղջ
Ընդհանուր քանակ	50	35	55	40	60	45	60	30	70	65
Դրական տեղաշարժ	40	30	47	38	54	40	53	26	66	50
Ոչ դրական տեղաշարժ	10	5	8	7	6	5	7	4	4	15

Աղյուսակ 2

**Շարժողական գործողությունների շարժընթացը
(14-15 տարեկան ժամանակահատվածում)**

Տարի										
	I		II		III		IV		V	
Սեռ	տղա	աղջ.	տղա	աղջ.	տղա.	աղջ.	տղա.	աղջ.	տղա	աղջ
Ընդհանուր քանակ	55	50	55	65	70	40	70	65	80	60
Դրական տեղաշարժ	55	40	44	60	64	48	67	62	77	58
Ոչ դրական տեղաշարժ	0	10	6	5	6	28	3	3	3	2

**Հեղազոտության արդյունքների շարժընթացը
(16-18 փարեկան)**

Տարի										
	I		II		III		IV		V	
Սեռ	տղա	արջ.	տղա	արջ.	տղա.	արջ.	տղա.	արջ.	տղա	արջ
Ընդհանուր քանակ	58	55	56	67	60	45	60	70	80	60
Դրական տեղաշարժ	60	43	45	63	65	50	70	68	80	60
Ոչ դրական տեղաշարժ	5	6	3	2	10	3	2	3	5	4

Ֆիզիոթերապիստները նույնպես պետք է համագործակցեն հիդիոթերապիստների հետ:

Ելնելով թեմային առնչվող գրական աղբյուրների ուսումնասիրությունից և մեր կողմից կատարված հետազոտության արդյունքների վերլուծությունից՝ առաջարկում ենք ՄՈՒԿ ունեցող հիվանդների վերականգնման գործընթացում կիրառել պրակտիկայում մեր կողմից կիրառված մեթոդիկան: Հիդիոթերապիայի պարապմունքներն անցկացվում են ամսական տասը անգամ՝ յուրաքանչյուրը 30 րոպե տևողությամբ: Պարապմունքների ընթացքում կիրառվում են տարբեր շարժողական վարժություններ, որոնք նպաստում են շար-

ժողական համակարգի ամրապնդմանը, շնչառական ունակությունների զարգացմանը և ընդհանուր ֆիզիկական տոկոսության բարձրացմանը:

Արդյունքների դրական տեղաշարժը պայմանավորված է մեր կողմից առաջարկված մեթոդիկայով, որը ներկայացված է ստորև.

Կիրառվող վարժությունները ներառում են՝

- շնչառությունը հնարավորինս երկար պահել ջրի տակ (5-10 վրկ),
- սուզվելով՝ ծանր իրերի դուրսբերում ջրի հատակից (2-3 անգամ),
- գնդակի նետում՝ զույգ, աջ և ձախ ձեռքերով (3 անգամ ըստ հնարավորության),
- պատից հրում՝ զույգ ոտքերով

(3-5 ամգամ),

- ուղղահայաց դիրքով պատկել և սահել հնարավորինս մեծ տարածություն (10մ և ավելի),

- որոշակի տարածություն հաղթահարել (100 մ, 150 մ, 200 մ և այլն),

- ջրի վրա լողալու տարբեր ոճերի յուրացում (մակերեսային լող, մեջքի վրա լող, «շունիկի» ոճ և այլն) (5 րոպե),

- ջրի դիմադրությամբ քայլք և վազք (10-15մ՝ 2 անգամ կրկնողությամբ),

- գնդակի փոխանցում և բռնում՝ ջրի դիմադրության պայմաններում (2 րոպե),

- խաղային վարժություններ՝ հավասարակշռության, շնչառության և շարժումների կոորդինացիայի զարգացման նպատակով (հատկացնել 5 րոպե):

Այս վարժությունները նպաստում են ոչ միայն ֆիզիկական տոկունության, այլև ինքնավստահության, շարժողական հմտությունների և հոգեմոտոր կայունության ձևավորմանը:

Եզրակացություն: Հաշմանդամություն, մանկական ուղեղի կաթված (ՄՈՒԿ), աուտիզմ և այլ առողջական խնդիրներ ունեցող երեխաների կյանքի որակի բարձրացումը ցայսօր մնացել է հասարակության առջև ծառայած կարևորագույն խնդիրներից մեկը:

Մեկ տարվա ընթացքում ջրային

թերապիայի կիրառմամբ, արձանագրեցինք հետևյալ արդյունքները՝

1Ձմիջին հաշվով 100 շատ ծանր հիվանդից (սպաստիկ-աթետուդ, ատաքսիկ-սպաստիկ, սպաստիկ-դիսկինետիկ) 90-ի մոտ նկատվել է դրական տեղաշարժ (տեսողական, կլման ակտի, նյութափոխանակության, ախորժակի, աղեստամոքսային տրակտի, թեթև մոտորիկայի առկայություն):

100 ծանր հիվանդներից նկատվել են եղել վերին և ստորին վերջույթների տեղաշարժեր, թեթևակի կանգ ոտնաթաթերի վրա, ողնաշարի շարժումների բարելավում, երբեմն դարձումներ աջ կամ ձախ ձեռքերի օգնությամբ:

300 միջին ծանրության (սպաստիկ, դիսկինետիկ, ատոնիկ, ատակսիկ) հիվանդներից 295-ի մոտ լողը որպես զվարճանքի միջոց նպաստել է սեփական հույզերի վստահությանը և կառավարմանը, ինքնուրույն քայլելը ջրում, ինքնուրույն լող մեջքի և փորի վրա (երբեմն միայն ձեռքերով կամ ոտքերով), գնդակի նետումներ, կախ օղակներից: 5 հիվանդի մոտ նկատվել է վախի առկայություն և զգուշություն, որոնք խանգարող գործոն են դրական տեղաշարժին: Մեր կարծիքով նման հիվանդների դեպքում հոգեբանի միջնորդության կարիք կա: Հոգեբանը պետք է համագործակցի թերապիստի հետ:

200 միջին ծանրության հիվանդների մոտ ջրային թերապիան նկատելի դրական տեղաշարժ է արձանագրել: Նույնիսկ նրանց հետ տարվել է լողի ուսուցման գործընթաց, միաժամանակ բարելավվել է օրգանիզմի ֆունկցիոնալ գործունեությունը:

100 թեթև (մոնոպարեզ) ախտորոշմամբ հիվանդների մոտ գրեթե ամբողջությամբ վերականգնվել է շարժողական գործողությունները (աղյուսակ 1,2,3):

Գործնական առաջարկություններ: 1 տարում առաջարկվող մեթոդիկան՝ շաբաթական երեք պարապմունք՝ 30 րոպե տևողությամբ, որը կկանխի հիվանդությունները և դրական ազդեցություն կթողնի օրգանիզմի վրա:

1. Ջուրը նվազեցնում է սթրեսի և նյարդային լարվածության մակարդակը, որն օգնում է թուլացնել մկանները և

նվազեցնել ցավային սինդրոմները: ՄՈՒԿ ունեցող երեխաները ջրային թերապիայի ընթացքում ավելի հանգիստ և արդյունավետ են պարապում, քան ջրից դուրս:

2. Ջրում մարզվելը կանխում է ավելորդ վնասվածքները, խթանում շնչառական մկանների, ինչպես նաև օժանդակ մկանների մարզումը: Լողը նպաստում է թոքերի կենսական տարողության ավելացմանը, բարելավում օրգանների և հյուսվածքների թթվածնային ապահովումը և բարձրացնում սրտանոթային համակարգի մարզվածության աստիճանը: Բացի առողջության բարելավումից, լողն ունի նշանակալի հոգեբանական ազդեցություն՝ բարձրացնում է հատուկ կարիքներով երեխաների կյանքի որակը և սոցիալականացումը:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Hydrotherapy for Health & Wellness: Therapeutic Applications for Optimal Health” by Richard Eidson
2. Handbook of Hydrotherapy by Richard Bartlett, Joseph Galati
3. Healing Waters: Therapeutic Landscapes in Historic and Contemporary Ireland” by Gary Robinson, Chris van der Craats, Mike Williams
4. <http://fk-gimnastika.com/fk-i/212-gidroreabilitatsiya-pri-paraliche> [Մուտք՝ 15.10.2025]
5. Karel R. «Hydrotherapy application physiotherapy», 2003
6. https://www.academia.edu/5681652/Hydrotherapy_application_physiotherapy [Մուտք՝ 22.10.2025]

7. M.R. Campion Hydrotherapy in Paediatrics, Medical Books, London 1985

8. Peckary S.

<https://www.rettsyndrome.eu/wp->

[content/uploads/2019/03/%D0%93%D0%B8%D0%B4%D1%80%D0%BE%D1%82%D0%B5%D1%80%D0%B0%D0%B%D0%B8%D1%8F.pdf](https://www.rettsyndrome.eu/wp-content/uploads/2019/03/%D0%93%D0%B8%D0%B4%D1%80%D0%BE%D1%82%D0%B5%D1%80%D0%B0%D0%B%D0%B8%D1%8F.pdf) [Մուտք՝ 01.11.2025]

9. https://new-disser.ru/_avtoreferats/01002830450.pdf [Մուտք՝ 27.10.2025]

10. <http://ww7.lfk-gimnastika.com/lfk-i/212-gidrorehabilitatsiya-pri-paraliche?usid=15&utid=29210532771> [Մուտք՝ 28.10.2025]

EFFECTS OF HYDROTHERAPY ON MOTOR ABILITIES IN CHILDREN WITH CEREBRAL PALSY

*S. S. Hakobyan, N. H. Abrahamyan, N. S. Chilingaryan,
Armenian-Russian University, Yerevan, Armenia*

ABSTRACT

Keywords: hydrotherapy, swimming, cerebral palsy, autism, rehabilitation, motor skills, relaxation, physical therapy, respiratory health, quality of life

Research Relevance: Hydrotherapy has emerged as a safe and effective rehabilitation approach for children with neurological and musculoskeletal disorders, particularly cerebral palsy and autism spectrum conditions. Water-based therapeutic interventions provide a unique environment that facilitates muscle relaxation, reduces spasticity, and supports the development of motor and respiratory functions while also contributing to psychological well-being. The relevance of the present study lies in its focus on enhancing quality of life, functional independence, and social participation among children with developmental challenges through structured and systematic hydrotherapy programs.

Research Aim: The aim of this study was to evaluate the therapeutic effects of water-based interventions on motor performance, respiratory health, and psychosocial outcomes in children with cerebral palsy and related developmental conditions. The research design included a comprehensive analysis of relevant scientific literature, systematic educational and clinical observations, and statistical analysis of collected outcome data.

Research Methods and Organization: The study employed a mixed methodological approach, including a review of relevant scientific literature, systematic educational and clinical observations during therapy sessions, and statistical analysis of outcome data to assess the effectiveness of the hydrotherapy intervention.

Research Results Analysis: Over the course of one year, participants engaged in structured hydrotherapy sessions conducted three times per week, each lasting 30 minutes. Among children with severe cerebral palsy, the majority demonstrated measurable improvements in motor coordination, swallowing function, visual engagement, and metabolic activity. Children with moderate forms of cerebral palsy showed marked enhancement in emotional stability, self-confidence, and the ability to move independently in the aquatic environment. In children with mild cerebral palsy, motor functions approached near-normal levels following sustained intervention. A small subgroup exhibited signs of anxiety during therapy, underscoring the importance of integrating psychological support into aquatic rehabilitation programs.

Conclusion: Hydrotherapy represents a highly effective and comprehensive rehabilitation modality for children with cerebral palsy and other developmental disorders. Regular swimming and water-based exercises contribute to significant improvements in motor coordination, respiratory efficiency, emotional regulation, and overall quality of life, reinforcing the value of hydrotherapy as a core component of pediatric rehabilitation.

(ԸՇՍ) ՎԼԻՅԱՆԻ ԿԻՐՈՏԵՐԱՊԻԱ ՈՒ ԱԿՎԱՏԻԿ ԿՐԻՄԱՆԻ ՄԻՋՈՒԹՅԱՆ ԿԻՐՈՒՄԻ ԵՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՆՏՐԱԼՆԵՐ ԿԵՐԵԲՐԱԼՆԵՐ ԿԵՐԵԲՐԱԼՆԵՐ ԿԵՐԵԲՐԱԼՆԵՐ (ԸՇՍ)

*Ս. Ս. Այոբյան, Ն. Գ. Աբրահամյան, Ն. Ս. Շիլինգարյան,
Արմանո-Րոսսիյսկիյ թանգրադսիտետ, Երևան, Արմանիա*

ԱՆՈՏԱՇԻԱ

Կլյուչեւեա ձեւա: Կիրոտերապիա, քաւան, ճեթկիյ Կերեբրալնիյ քարալիչ, աւտիզմ, ռեաբիլիտաշիա, մոթորիկա, ռեաքսաշիա, ֆիզիոթերապիա, ճիթաթեղանի ֆունկշիա, կաչեւո յիշնի.

Ակթուալնոթ իճեթեւոանիա: Կիրոտերապիա յաւեաթեա էֆֆեկտիւնիյ մեթոթոմ լեւոանի ճեթիյ ս նեւրոլոգիկեճկիյ մի ոթորնո-ճիթաթեղանիյ նարւշեանիյ, վկլյուչա ճեթկիյ Կերեբրալնիյ քարալիչ (ԸՇՍ) մի աւտիզմ. Վոճնա ձեւա

способствует расслаблению мышц, снижает спастичность и улучшает психоэмоциональное состояние. Актуальность исследования заключается в повышении уровня независимости и качества жизни детей с особыми потребностями за счёт систематического применения водных процедур.

Цель исследования: Оценить терапевтический потенциал водных процедур в улучшении двигательных, дыхательных и психоэмоциональных показателей у детей с ДЦП и сходными нарушениями.

Методы и организация исследования:

1. Анализ литературных источников
2. Педагогические наблюдения
3. Статистический анализ данных

Анализ результатов исследования: В течение одного года систематической водной терапии (три занятия в неделю по 30 минут) у 90 из 100 детей с тяжёлыми формами ДЦП отмечено улучшение зрения, акта глотания, обмена веществ и моторной координации. Из 300 детей со средними формами 295 продемонстрировали повышение эмоциональной устойчивости, уверенности и самостоятельности в воде. У 100 детей с лёгкой формой практически полностью восстановились двигательные функции.

Краткие выводы. Гидротерапия доказала высокую эффективность в улучшении физического, эмоционального и социального состояния детей с ДЦП и другими нарушениями. Регулярные водные занятия способствуют развитию моторики, дыхательной функции и повышают качество жизни.

Տեղեկություններ հեղինակների մասին

Սամսոն Սուրիկի Հակոբյան՝ մ.գ.թ., Ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի ամբիոնի պրոֆեսոր, Հայ-ռուսական համալսարան, Երևան, Հայաստան, E.mail: samson.hakobyan@sportedu.am

Նունե Հրանտի Աբրահամյան՝ Ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի ամբիոնի ավագ դասախոս, Հայ-ռուսական համալսարան, Երևան, Հայաստան, E.mail: nunikon1@gmail.com

Նորայր Սարգիսի Չիլինգարյան՝ Ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի ամբիոնի ավագ դասախոս, Հայ-ռուսական համալսարան, Երևան, Հայաստան, E.mail: norayrchilingaryan@gmail.com

Information about authors

Samson Surik Hakobyan – PhD in Pedagogy, Professor at the Department of Physical Education and Healthy Lifestyle, Russian – Armenian University, Yerevan, Armenian

E.mail: samson.hakobyan@sportedu.am

Nune Hrant Abrahamyan – Senior Lecturer of the chair of Physical education and healthy lifestyle of RAU (Russian- Armenian University), Yerevan, Armenia.

E.mail: nunikon1@gmail.com

Norayr Sargis Chilingaryan – Senior Lecturer of the chair of Physical education and healthy lifestyle of RAU (Russian- Armenian University), Yerevan, Armenia.

E.mail: norayrchilingaryan@gmail.com

Հոդվածն ընդունվել է 18.10.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 19.10.2025–ին:

Գրախոս՝ կ.գ.թ., պրոֆեսոր Ա. Հարությունյան

**ԲԱԺԻՆ 4. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ
ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ**

ՀՅԴ 330.1

DOI: 10.53068/25792997-2025.3.16-266

**ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԱԿՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Ջ.Ա. Թադևոսյան,

*Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

Առանցքային բառեր: Սպորտ, սոցիալ-տնտեսական ազդակներ, թեթև արդյունաբերություն, պետություն-մասնավոր հատված համագործակցություն:

Հետազոտության արդիականություն: Վերջին տասնամյակներում սպորտը ո՛չ միայն համաշխարհային, այլև Հայաստանի տնտեսության շրջանակներում ստացել է նոր՝ տնտեսական և ռազմավարական նշանակություն: Սակայն Հայաստանում սպորտի ոլորտը դեռևս ամբողջապես չի ձևավորվել որպես տնտեսության բազմագործոն համակարգ. առկա են առանձին նախաձեռնություններ, ենթակառուցվածքային բարելավումներ և պետական ռազմավարական մոտեցումներ, ռատի և ոլորտի համակարգային զարգացումը դեռ ընթացքի մեջ է: Այս իրողությունը անհրաժեշտություն և արդիականություն է հաղորդում **սպորտի դերի վերաիմաստավորմանը ո՛չ միայն սոցիալ-**

մշակութային, այլև սոցիալ-տնտեսական դիտանկյունից՝ հետազոտելով այն որպես տնտեսական աճի, ներդրումների, մարդկային կապիտալի զարգացման և միջազգային ինտեգրման խթան:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել այն սոցիալ-տնտեսական գործոնները, որոնք խթանում կամ սահմանափակում են սպորտի ոլորտի զարգացումը Հայաստանում՝ ոլորտի ներուժը դիտարկելով որպես տնտեսական և սոցիալական առաջընթացի աղբյուր:

Հետազոտության խնդիրները, որոնք բխում են նպատակից, հետևյալն են.

➤ Ուսումնասիրել սպորտի ոլորտի զարգացման տեսական հիմքերը՝ որպես տնտեսության բաղադրիչ:

➤ Բացահայտել այն սոցիալ-տնտեսական գործոնները, որոնք ազդում են Հայաստանում սպորտի ոլորտի

կայացման, մրցունակության և կայուն զարգացման վրա:

➤ Մշակել քաղաքական և կառավարման առաջարկություններ՝ ուղղված սպորտի ոլորտի կայուն զարգացմանը:


Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտությունն իրականացվել է համակցված մեթոդաբանական մոտեցմամբ՝ ներառելով թե՛ որակական, թե՛ քանակական վերլուծության տարրեր: Ուսումնասիրվել է ոլորտին առնչվող մասնագիտական գրականություն, օգտագործվել են վիճակագրական տվյալներ, կատարվել է համեմատական վերլուծություն, կազմվել են համապատասխան տրամագրեր: Կազմակերպչական առումով աշխատանքը կատարվել է երեք փուլով՝ տեսական, էմպիրիկ և վերլուծական: Այս մոտեցումը հնարավորություն է տվել բազմակողմանիորեն գնահատել այն սոցիալ-տնտեսական գործոնները, որոնք որոշում են սպորտի ոլորտի զարգացման շարժընթացը: Հետազոտությունն իրականացվել է 2025թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսների ընթացքում:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Սպորտի ոլորտի վերաբերյալ տնտեսագիտական տեսությունը ձևավորվել է 20-րդ դարի երկրորդ կեսից, երբ մի շարք հեղինակներ [10, 11,

12, 13,14] սկսեցին դիտարկել սպորտը ոչ միայն որպես մշակութային երևույթ, այլև՝ տնտեսական համակարգ: Այդ մոտեցման հիմքում այն գաղափարն է, որ սպորտը կարող է ստեղծել ավելացված արժեք, խթանել արտադրությունը, ծառայությունների շուկան և նպաստել զբաղվածությանը՝ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում: Ըստ **Կ. Գրաթոնի և Փ. Թեյլորի** [13]՝ սպորտի ոլորտը կարելի է դիտարկել երեք հիմնական՝ **ուղղակի, անուղղակի և ինդուկտիվ տնտեսական ազդեցությունների դիտանկյունից:** **Վլադիմիր Անդրեֆը** [10] սպորտը բնութագրում է որպես տնտեսության յուրահատուկ ենթահամակարգ, որը միաժամանակ արտացոլում է սոցիալական արժեքների, կրթական նպատակների և շուկայական հարաբերությունների համադրությունը: Նրա մոտեցմամբ՝ սպորտային արդյունաբերությունը կարող է դիտվել «հիբրիդային շուկա», որտեղ համատեղ գործում են պետական քաղաքականությունը, մասնավոր ներդրումները և հասարակական շահը: Մեկ այլ հեղինակներ՝ **Ռ. Բաադեն և Վ. Մաթեսոնը** [11] իրենց հետազոտություններում ցույց են տվել, որ սպորտը կարող է ունենալ չափելի ազդեցություն տեղական և ազգային տնտեսության վրա՝ հատկապես խոշոր միջոցառումների կազմակերպման դեպքում: Նրանք

նշում են, որ սպորտային արդյունաբերության ներդրումները նպաստում են ոչ միայն համախառն ներքին արդյունքի աճին, այլև ենթակառուցվածքների արդիականացմանը, զբոսաշրջության ընդլայնմանը և տեղական համայնքների ակտիվացմանը: Մինչդեռ **Հանս Պրոյսը** [14] կարևորում է «մեզամիջոցառումների ժառանգության» գաղափարը՝ նշելով, որ սպորտային ներդրումները պետք է գնահատվեն ոչ միայն անմիջական ֆինանսական արդյունքների, այլև երկարաժամկետ սոցիալ-տնտեսական հետևանքների տեսանկյունից: Լ.Չալիփը [12] կարևորում է այն իրողությունը, որ եթե սպորտային կազմակերպությունները շարունակաբար չզարգացնեն և չթարմացնեն իրենց քաղաքականությունները՝ արձագանքելով սոցիալական, տնտեսական և էթիկական փոփոխություններին, ապա դրանք դառնում են արձագանքող, ոչ թե նախաձեռնող, ինչը նվազեցնում է սպորտի ավելի լայն հասարակական ազդեցություն ապահովելու հնարավորությունը: Այս տեսական մոտեցումները համադրվում են և՛ Հայաստանի կառավարության, և՛ միջազգային կազմակեր-

պությունների քաղաքական շրջանակների հետ: Ըստ ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2024–2030 թվականների զարգացման ռազմավարության[1]՝ «... համակարգի ամբողջ գործունեությունն ուղղված է մարդու ներդաշնակ և բազմակողմանի զարգացմանը, հանրության շրջանում առողջ ապրելակերպի և ակտիվ հանգստի արմատավորմանը, երկարակեցության ապահովմանը, սպորտի ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության բարձրացմանը»: Իսկ համաձայն **UNESCO-ի** [15] «**Kazan Action Plan**»–ի և **World Bank-ի** [16] զեկույցների՝ սպորտը դիտվում է որպես տնտեսական աճի և սոցիալական զարգացման խթան, որն ունակ է նպաստել կրթության, առողջության և երիտասարդության ներառմանը: Ինչ վերաբերում է հայ հետազոտողների ակտիվությանը, ապա պարզապես արձանագրենք, որ սպորտի ոլորտին վերաբերող ուսումնասիրությունները դեռևս սակավ են, սակայն համահունչ են սպորտի ոլորտի զարգացման ժամանակակից միտումներին [9]:



Տրամագիր 1. ՀՀ-ում սպորտային կազմակերպությունների թվի, մարզիչ-մանկավարժների և մարզիկների թվաքանակի շարժընթացը 2019–2023թթ. ընթացքում [2,3,4,5,6]

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ ժամանակակից տնտեսագիտական մտքի զարգացման մեջ ձևավորվել է սպորտի ոլորտի միասնական ընկալում, մասնավորապես, այն.

- նորարարական տնտեսական ենթահամակարգ է,
- այն ունի ներդրումային և աշխատատեղեր ստեղծող ներուժ,
- հանրային քաղաքականության գործիք է՝ սոցիալական կապիտալի և կայուն զարգացման ուղղությամբ:

Այս տեսական մոտեցումները մեր կողմից Հայաստանի սպորտի ոլորտի ուսումնասիրության հիմնայուններն են:

Ինչպես վկայում են մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները, Հայաստանում սպորտի ոլորտի շարժընթացը վերջին տասնամյակում ձևավորվել է սոցիալ-տնտեսական միջավայրի և պետական քաղաքականությունների համակցությամբ: 1-ին տրամագրի տվյալները փաստում


են, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում կարելի է դրական գնահատել այն հանգամանքը, որ մարզերում սպորտային կազմակերպությունների (Հայաստանում դրանք հիմնականում պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ են գործում) թվաքանակը չնայած ցուցաբերել է նվազման միտում, այն կրճատվել է 2-ով, այդուհանդերձ 2019-2023թթ. մարզիչ-մանկավարժների թվաքանակի շարժընթացից ելնելով կարող ենք արձանագրել, որ վերջինս դրսևորել է աճի միտում: 2019-2023թթ. մարզիչ-մանկավարժների թվաքանակն աճել է 98 մարդով կամ 95%-ով: Չնայած որոշ տատանումների՝ նույն միտումն է նկատվել նաև գյուղերում: Մարզիչ-մանկավարժների թվաքանակն այս տիրույթում 2020 թ. զգալի ավելացել է 2019թ. համեմատ՝ կազմելով 96%: Սակայն հաջորդող տարիներին 2019թ. համեմատ նվազել է 17 մարդով՝ 2022թ. կազմելով 170 մարդ: 2023թ. սկսվել է աշխուժանալ ոլորտը և մարզիչ-մանկավարժների թվաքանակի աճ է նկատվել նաև գյուղերում, 17 մարդով ավելի, քան 2022-ին: Անառարկելի է, որ սպորտի ոլորտում մարզիչ-մանկավարժների թվաքանակի ավելացումը գերազանցապես պայմանավորված է մարզիկների թվաքանակի աճով, այսպես՝ նրանց թվաքանակն ուսումնասիրվող տարիներին ավելացել

է 93%-ով, նույն միտումն է արձանագրվել նաև գյուղերում՝ 95%:

Այսպիսով՝ վերջին տարիներին էապես առաջադիմել է սպորտի ոլորտը, որոշակի կայունություն է պահպանվել սպորտային կազմակերպությունների շարժընթացում, ինչպես արդեն վերևում նշեցինք ոչ էական նվազում է նկատվել դրանց թվաքանակում, ավելին՝ աճել է սպորտային կազմակերպություններում զբաղված մարզիչների ու մարզիկների թվաքանակը: Այս իրողությունը կարևոր սոցիալ-տնտեսական ազդակ է, ինչը նույնիսկ էմպիրիկ դիտարկման պարագայում ապահովում է բազմարկչի էֆեկտ՝ զբաղվածություն, եկամուտներ, տարածքային հավասարակշռման բարելավում, առողջ ապրելակերպ: Սպորտի ոլորտում նման դրական միտումները վկայում են ՀՀ մարզական քաղաքականության արդյունավետության մասին, մասնավորապես՝ մարզական կրթական ծրագրերի և մարզադպրոցների ցանցի զարգացման ուղղությամբ պետական-մասնավոր հատված համագործակցության էլ ավելի ակտիվացման և նախաձեռնությունների արդյունքի մասին: Ավելորդ չենք համարում նշել, որ սպորտային ենթակառուցվածքների թվաքանակի աճն ու համապատասխանաբար սպորտի ոլորտում զբաղվածության մակարդակի էական ակտիվացումն

անմիջականորեն նպաստել են սպորտային արդյունաբերության շարժընթացի աճին: Մինչ սպորտային արդյունաբերությանը վերաբերող պաշտոնական սուղ վիճակագրության վերլուծությունը, արձանագրենք, որ մեր կողմից հետազոտվող ժամանակահատվածում արդյունաբերության ոլորտը գերազանցապես զարգացել է ներդրումային աճի ֆոնին: 2-րդ տրամագրում ներկայացված վիճակագրությունը փաստում է, որ 2019–2023 թթ. արդյունաբերության հիմնական միջոցների շարժընթացը գրանցել է աճի միտում: Արդյունաբերության ոլորտը զարգացել է ներդրումային աճի ֆոնին. արդյունաբերական հիմնական միջոցների արժեքը աճել է շուրջ **27%-ով** [7], ինչը վկայում է արտադրական բազայի ընդլայնման և տեխնիկական հզորությունների վերակառուցման մասին: Ինչ

վերաբերում է նույն ժամանակահատվածում արդյունաբերական արտադրանքի ծավալին, ապա այդ ցուցանիշը ևս դրսևորել է աճի միտում: 2019թ. համեմատ 2023-ին այն աճել է 38%-ով [7]: Այնուամենայնիվ, արդյունաբերության կառուցվածքային փոփոխությունները ցույց են տալիս, որ աճը հիմնականում ապահովվել է **մեծածավալ և հումքային ճյուղերի** հաշվին, մինչդեռ վերամշակող և թեթև արդյունաբերությունը պահպանել է համեմատաբար թույլ դիրքեր: Այս միտումը վկայում է, որ Հայաստանի արդյունաբերական զարգացումը դեռևս պահանջում է **արտադրական դիվերսիֆիկացիա և բարձր տեխնոլոգիական բաղադրիչ** ընդլայնում՝ կայուն աճ ապահովելու համար:



Տրամագիր 2. ՀՀ-ում արդյունաբերա–արտադրական հիմնական միջոցները՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների (ամբողջ արդյունաբերությունը՝ սկզբնական արժեքով, մլն. դրամ) [7]


3-րդ տրամագրի տվյալները փաստում են, որ սպորտի արդյունաբերության ենթաաղյուցում միտումները դրսևորել են ոչ համաչափ զարգացումներ: Սպորտային կոշիկների արտադրությունը նշված ժամանակահատվածում տատանվել է՝ նվազելով 9 313 զույգից մինչև 9 600 զույգ՝ 2020 թ. զգալի անկումով և հետագա ոչ կայուն վերականգնմամբ: Նման տատանումները վկայում են.

- տեխնոլոգիական սահմանափակումներ. Հայաստանի թեթև արդյունաբերությունը դեռևս չունի բարձր տեխնոլոգիական հզորություններ կոշիկի արտադրության համար,
- ներմուծվող մրցակցություն. միջազգային բրենդների ագրեսիվ մրցակցությունը սահմանափակում է տեղական արտադրության ծավալները,

• շուկայական պահանջարկի անկայունություն. 2020թ. համավարակի ազդեցությունը և հետագա ոչ կայուն ծավալները:

Նույն հարթության մեջ սպորտային հագուստի արտադրությունը նվազել է 26 հազար միավորից մինչև 15 հազար՝ շուրջ 40 %-ով: Հագուստի արտադրության նման նվազումը պայմանավորված է.


- կառուցվածքային վերակառուցմամբ. արտադրողները փոխել են իրենց ռազմավարությունը՝ կենտրոնանալով ավելի շահութաբեր ապրանքատեսակների արտադրության վրա,
- շուկայական դիվերսիֆիկացիայով. անցում դեպի մասնագիտացված և բարձրարժեք արտադրանքի արտադրության:



Տրամագիր 3. Սպորտի արդյունաբերության դինամիկան ՀՀ-ում 2019–2023 թթ.[7]

Դիտարկենք սպորտի արդյունաբերության զարգացման միտումներն ըստ ՀՀ պաշտոնական վիճակագրության մեկ այլ աղբյուրի (տրամագիր 4): Այսպես՝ ըստ ՀՀ արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկման ցուցանիշների (բնեղեն արտահայտությամբ, հատ)՝ 2023–2025 թվականներին սպորտի ոլորտում նկատվել է հետևյալ

իրողությունը. եթե սպորտային համազգեստների արտադրության ոլորտում տեղի է ունեցել անկում 2024–ին, այնուհետև վերելք՝ 2025–ին, ապա ընդհակառակը, նույն տարիներին սպորտային կոստյումների արտադրության ոլորտում նկատելի է կտրուկ աճ՝ պայմանավորված մի շարք գործոններով, մասնավորապես.



Տրամագիր 4. Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ, 2023-2025 թթ., հունվար-սեպտեմբեր [8]

➢ Սոցիալ-մշակութային փոփոխություններ և ներքին պահանջարկ.

• Առողջ ապրելակերպի տարածում. վերջին տարիներին նկատվում է բնակչության հետաքրքրության աճ ֆիզիկական ակտիվության նկատմամբ:

Ֆիթնես կենտրոնների, մարզասրահների և մարզական ակումբների քանակի ավելացումը հանգեցրել է սպորտային հագուստի ներքին պահանջարկի կայուն աճին:

• Ինստիտուցիոնալ պահանջարկ. կրթական հաստատություններում,

մարզադպրոցներում և թիմերում ձևավորվել է սպորտային համազգեստի պարտադիր օգտագործման մշակույթ:

- Ազգային ինքնություն. տեղական բրենդավորումը դարձել է գերակայություն: Մարզական ֆեդերացիաներն ու ակումբները հաճախ պատվիրում են համազգեստներ հենց տեղական արտադրողներից՝ ամրապնդելով սպորտային ինքնությունը և աջակցելով ազգային բիզնեսին:

➤ **Միջազգային սպորտային իրադարձությունների ազդեցություն.**

- 2023–2024 թթ. միջազգային մրցաշարերը մեծապես խթանել են սպորտային հագուստի և աքսեսուարների պահանջարկը՝ ինչպես մասնակիցների, այնպես էլ հանդիսատեսների շրջանում:

- Սպորտային զբոսաշրջությունը ստեղծել է լրացուցիչ շուկա:

➤ **Տնտեսական և արտադրական գործոններ.**

- Տեղական արտադրության ակտիվություն. Հայաստանի թեթև արդյունաբերության ճյուղում նկատվում է արտադրական ակտիվության աճ՝ հատկապես սպորտային հագուստի և կոշիկի հատվածում:

- Արտահանման շուկաներ. սպորտային հագուստի արտահանման պատվերների ավելացումը դարձել է արտադրության ծավալների աճի հիմնական խթանիչներից մեկը:

